

Ռեկտոր՝



«Հաստատում եմ»

Ռ. Սահակյան

2024 թ.

Կ.Տ.

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**«Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամ**

(Ուսումնական հաստատության անվանումը)

ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 36

(Հաստատության հասցեն)

Վանաձոր 2024

Ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի կազմը

Անուն, Ազգանուն	Պաշտոնը հաստատությունում	Պատասխանատվությունը խմբում
Ռ. Սահակյան	ՎՊՀ ռեկտոր	Հավատարմագրման գործընթացի պատասխանատու: Ինքնավերլուծության 1-ին (Առաքելություն և նպատակ), 2-րդ (Կառավարում և վարչարարություն) չափանիշների պատասխանատու
Լ. Կոստանդյան	ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր	Ինքնավերլուծության 1-ին (Առաքելություն և նպատակ), 2-րդ (Կառավարում և վարչարարություն), 3-րդ (ՄԿԾ-ներ), 4-րդ (Ուսանողներ), 5-րդ (Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ) չափանիշների պատասխանատու
Վ. Հովսեփյան	գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր	Ինքնավերլուծության 1-ին (Առաքելություն և նպատակ), 2-րդ (Կառավարում և վարչարարություն), 6-րդ (Հետազոտություն և զարգացում), 8-րդ (Հասարակական պատասխանատվություն), 9-րդ (Արտաքին կապեր և միջազգայնացում) չափանիշների պատասխանատու
Ա. Խաչատրյան	ՈԱԿ ղեկավար	Ինքնավերլուծության 1-ին (Առաքելություն և նպատակ), 2-րդ (Կառավարում և վարչարարություն), 10-րդ (Որակի ներքին ապահովման համակարգ) չափանիշների պատասխանատու
Վ. Նազարյան	ԿԲՎԿ ղեկավար	Ինքնավերլուծության 3-րդ (ՄԿԾ-ներ), 5-րդ (Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ), 8-րդ (Հասարակական պատասխանատվություն) չափանիշների պատասխանատու
Ա. Հարությունյան	ԳԱՆՀԲ ղեկավար	Ինքնավերլուծության 6-րդ (Հետազոտություն և զարգացում), 8-րդ (Հասարակական պատասխանատվություն), 9-րդ (Արտաքին կապեր և միջազգայնացում) չափանիշների պատասխանատու
Ա. Գևորգյան	ԿԳԿԲ ղեկավար	Ինքնավերլուծության 3-րդ (ՄԿԾ-ներ), 4-րդ (Ուսանողներ) չափանիշների պատասխանատու
Հ. Ղարաքեշիշյան	ՄՌԿԲ պետ	Ինքնավերլուծության 5-րդ (Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ) չափանիշի պատասխանատու
Ս. Խառատյան	ՎՏԲ ղեկավար	Ինքնավերլուծության 7-րդ (Ենթակառուցվածք և ռեսուրսներ) չափանիշի պատասխանատու
Մ. Թեմուրյան	ՖՌԿԲ պետ	Ինքնավերլուծության 7-րդ (Ենթակառուցվածք և ռեսուրսներ) չափանիշի պատասխանատու

Բովանդակություն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	4
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ	4
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	5
ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ` ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ	7
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	7
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ	15
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ	30
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ	46
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ	68
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ	79
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ	91
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Ը	103
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՅՈՒՄ Ը	113
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ	123

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ուսումնական հաստատության կառավարումը, կրթական և հետազոտական գործունեությունը և հասարակությանը մատուցվող ծառայությունները պարբերաբար բարելավվում են և միտված են.

- որակի մշակույթի ձևավորմանը,
- կրթական այնպիսի միջավայրի ստեղծմանը, որը կնպաստի աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համապատասխան ուսումնառողների գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը,
- մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացմանը և հասարակության առջև հաշվետվողականության ապահովմանը,
- ազգային և միջազգային մակարդակներում ուսումնական հաստատության կողմից մատուցվող ծառայությունների համադրելիության և մրցունակության, ինչպես նաև թափանցիկության ապահովմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Չափանիշներ. հատուկ առանձնացված ձևակերպումներ են, որոնք վերստուգելի տերմիններով սահմանում են հաստատության գործունեության կամ իրականացվող կրթական ծրագրերի բնութագրերը:

Չափորոշիչներ. ձևակերպումներ են, որոնք սահմանում են յուրաքանչյուր չափանիշին համապատասխանելու չափը և անաչառ գնահատելու համար անհրաժեշտ պայմանները:

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վանաձորի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) պատմությունը սկսվում է 1969 թ.-ից: Այն Կիրովականի (հետագայում՝ Վանաձորի) պետական մանկավարժական ինստիտուտի (այսուհետ՝ Ինստիտուտ) իրավահաջորդն է: Ի սկզբանե բուհի հիմնադրումը նպատակ ուներ ապահովելու Հայաստանի հյուսիսարևելյան տարածաշրջանի կրթօջախները մանկավարժական կադրերով: Գործունեության առաջին տարում Ինստիտուտում կրթությունը իրականացվել է ուսուցման հեռակա ձևով, և 1970 թ.-ին ներդրվել է նաև առկա ուսուցման համակարգը: 1989թ.-ին կազմավորվել և շուրջ 3 տարի գործել է Ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը: 2001 թ.-ից ՄՈՒՀ-ը կրում է հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի անունը: 2002-2014 թթ.-ին Ինստիտուտը գործել է որպես պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ): 2014 թ.-ին ՄՈՒՀ-ը ստացել է Համալսարանի կարգավիճակ, իսկ 2016 թ.-ին վերակազմավորվել է «Վանաձորի պետական համալսարան» հիմնադրամի: 2008 թ.-ից ՎՊՄԻ ՊՈԱԿ-ին է միացել 2002թ.-ից ՀՀ կառավարության որոշմամբ գործող Ձորիկ Գևորգյանի անվան վարժարանը (այժմ՝ ՎՊՀ հենակետային վարժարան), և 2011թ.-ին կազմավորվել է ՎՊՀ քոլեջը, որն իրականացնում է միջին մասնագիտական կրթություն:

Համալսարանում ներդրված է կրթության եռաստիճան համակարգ: Բակալավրիատում և մագիստրատուրայում առաջին անգամ ընդունելություն է կատարվել 2008 թ.-ին, ասպիրանտուրայում՝ 2006 թ.-ին: Ներկայումս առկա ուսուցման համակարգում բակալավրի կրթական ծրագրով ուսումնական գործընթաց է կազմակերպվում 25 մասնագիտությունների, իսկ մագիստրոսի կրթական ծրագրով՝ 15 մասնագիտությունների ուղղությամբ: Հեռակա ուսուցման համակարգում ներդրված է բակալավրի 20 կրթական ծրագիր և մագիստրոսական 1 կրթական ծրագիր: Կրեդիտային համակարգը Համալսարանում ներդրվել է 2007 թ.-ից:

Համալսարանում գործում են 3 ֆակուլտետներ՝ հասարակական գիտությունների, հումանիտար գիտությունների և բնական գիտությունների: Ուսումնագիտական գործընթացը կազմակերպվում է 8 մասնագիտական ամբիոնների միջոցով: Այսօր Հայաստանի հյուսիսային տարածաշրջանի հանրակրթության բնագավառում աշխատողների շուրջ 70 %-ը Համալսարանի շրջանավարտներ են: Համալսարանի շրջանավարտները աշխատանքային գործունեություն են ծավալում նաև այլ բնագավառներում, պետական, մասնավոր և հասարակական կազմակերպություններում: Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմը հիմնականում համալրվում է իր շրջանավարտների միջոցով. 60 %-ից ավելին Համալսարանի շրջանավարտներն են, որոնց մեծ մասն ունի գիտական աստիճան:

Համալսարանը հավատարմագրում է անցել 2015 և 2019 թթ.-ին: Հավատարմագրման անցած ուղին պարտավորեցնող է եղել՝ ուղղված փորձագիտական խմբերի դիտարկումների և առաջարկությունների՝ Համալսարանի կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերում ընդգրկմանը և իրականացմանը: Համալսարանի 2021-25 թթ.-ի ռազմավարական ծրագիրն ուղղված է ինքնավարության ընդլայնմանը, ֆինանսական անկախության ապահովմանը, որում հիմնարար նշանակություն ունեն կրթության, գիտության, հասարակական պատասխանատվության տեսանկյունից դիտարկվող հիմնական ուղենիշները: Համալսարանը ձգտում է ստեղծել գիտակրթական միջավայր (էկոհամակարգ), որտեղ շահագրգիռ կողմերը

կարող են բավարարել իրենց սպասելիքները բարձրագույն կրթության տարբեր մակարդակներում՝ նպաստելով Համալսարանի մրցունակության բարձրացմանը մասնագիտական կրթական ծառայությունների շուկայում:

Վերջին հավատարմագրումից հետո Համալսարանի կարևոր ձեռքբերումներից է 2023 թ. Էրազմուս+ կարողությունների զարգացման դրամաշնորհային նախագծերի մրցույթին որպես համակարգող ՄՈՒՀ հաղթող ճանաչվելը (DeSIRE նախագիծ): Համալսարանում 2020 թ.-ից գործում է Էրազմուս+ կոնֆերանս դահլիճը, որը հազեցած է նոր սարքավորումներով և ծառայում է բուհում առկա և առցանց միջոցառումների կազմակերպման համար: 2021 թ.-ին Էրազմուս+ SMARTI նախագծի շրջանակներում հիմնադրվել է EMI կենտրոնը, որը տարբեր դասընթացների միջոցով նպաստում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության անզլերենի իմացության զարգացմանը: 2022 թ.-ին Էրազմուս+ CONNECT նախագծի շրջանակներում համալսարանի համաֆինանսավորմամբ բացվել է ձեռներեցության և նորարարությունների զարգացման կենտրոնը (SMART CAFFE), և նույն տարին «Ինստիգեյթ մոբայլ» ընկերության հետ (ներկայիս «Zealous Tech») համագործակցության շրջանակում՝ «Գերազանցության կենտրոնը», որը գործատուների հետ կապի ապահովման հնարավորություն է ընձեռում: 2023 թ.-ին ԷԲՄՁՍՈՒՍ+ ՀԳ2 ԿԶԲԿ PRINTeL, ARMDOCT և CONNECT նախագծերի շրջանակներում և Համալսարանի համաֆինանսավորմամբ հիմնադրվել է Մեդիալաբը, որը նպաստում է տեսադասերի, կրթական տեսանյութերի ստեղծմանն ու մատուցմանը: Համալսարանը նաև Էրազմուս+ MEDIA նախագծի կոնսորցիումի անդամ է: Նախագիծը միտված է առցանց կրթության որակի ամրապնդմանը: 2021-2023 թթ. գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում իրականացվել է «Թանթրվենի սև բուսատեսակի գեներատիվ օրգաններից էկոլոգիապես մաքուր բնամթերքի և բնական ներկի ստացման մեխանիզմների առանձնահատկությունները» նախագիծը Համալսարանի բնագիտական համալիր լաբորատորիայի պայմաններում: 2022 թ.-ից ընտրական համակարգերի միջազգային հաստատության միջնորդությամբ (IFES) ՄՈՒՀ-ում անցկացվում է «Ներգրավված քաղաքացի» լրացական դասընթացը՝ նպաստելով ուսանողների շրջանում քաղաքացիական մասնակցության ձևերի ճանաչմանը: 2023 թ.-ին «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության հետ համատեղ բացվել է «Քաղաքացիական կրթության կենտրոնը», որի նպատակն է ստեղծել նպաստավոր միջավայր մարզի երիտասարդների քաղաքացիական գիտելիքների, սոցիալական և տեխնիկական կարողությունների զարգացման, ինչպես նաև հանրային որոշումներում նրանց ներգրավման համար: 2021 թ.-ից ՄՈՒՀ-ը ՀՀ ԿԳՄՍ նախարարության երաշխավորմամբ կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալ ցանկացողների, ատեստավորման ենթակա ուսուցիչների, ուսուցչի օգնականների, ՆՈՒՀ մանկավարժական աշխատողների համար: Համալսարանում ամեն տարի կազմակերպվում են մասնագիտությունների և աշխատանքի տոնավաճառներ՝ խթանելով ՄՈՒՀ-դիմորդ, ՄՈՒՀ-շրջանավարտ-գործատու կապերը:

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիջիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիջիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Համալսարանի վարած քաղաքականությունը կառուցվում է ՄՈՒՀ-ի կանոնադրության հիման վրա, որի համաձայն՝ Համալսարանի գործունեությունը նպատակաուղղված է գիտական տարբեր ուղղություններով կրթության, հիմնարար ու կիրառական գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը ՈԱՇ-ի 4-8-րդ, ինչպես նաև լրացուցիչ կրթության մակարդակներում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և կրթական ծրագրերով: Համալսարանի քաղաքականությունը ուղղված է որդեգրած տեսլականի, առաքելության, նպատակների և խնդիրների իրականացմանը, որոնք արտացոլված են ՄՈՒՀ-ի 2021-25թթ. ռազմավարական ծրագրում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

Հիմքեր [ՄՈՒՀ-ի կանոնադրությունը](#)
[ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրները](#)
[Հաստատության որակավորումների շրջանակը](#)
[ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագիրը](#)

Վերլուծել և հիմնավորել, թե որքանով է հաստատության ռազմավարական ծրագիրը համապատասխանում ՄՈՒՀ-ի առաքելությանը, նպատակներին և խնդիրներին /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/

Հաշվի առնելով 2019թ. ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցը և խորհրդատվությունների համաձայն մշակված ՄՈՒՀ-ի 2021-25 թթ. բարելավման գործողությունների պլանի 1.1 կետը՝ հատուկ աշխատանքային խմբի կողմից մշակվել և ներդրվել են Համալսարանի 2021-25 թթ. ռազմավարական ծրագիրը և ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանը: Համաձայն ՄՈՒՀ-ի 2021-25 թթ. ռազմավարական ծրագրի՝ Համալսարանի առաքելությունն է ՀՀ հյուսիսարևելյան տարածաշրջանում դառնալ կրթական, գիտական գործունեություն իրականացնող և նորարարական գաղափարների փոխանցման խթանիչ կենտրոն, որի հիմնական նպատակն է պատրաստել աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին ու մարտահրավերներին պատրաստ որակյալ և մրցունակ մասնագետներ: Համալսարանի առաքելությունը արտացոլված է ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրի նպատակներում, խնդիրներում և միջոցառումներում, որոնք իրենց հերթին տրոհված են

գործողությունների ու քայլերի և ներկայացված են ՄՈՒՀ-ի 2021-25 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանում ([Հավելված 1.ա.1.](#)): Նշենք նաև, որ ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրի խնդիրների սահմանման և բարելավման պլանի ([Հավելված 1.ա.2.](#)) մշակման համար հիմք են հանդիսացել նախորդ հավատարմագրման գործընթացի արդյունքում փորձագիտական խմբի ուղղորդող եզրակացությունները: Ստորև հակիրճ ներկայացված են ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրի հիմնական նպատակներն ու խնդիրները, դրանց իրականացման համառոտ նկարագրությունները (վերջիններիս առավել մանրամասն վերլուծությունները տեղ են գտել հաջորդող չափանիշների վերլուծություններում):

Նպատակ 1. Բարձր որակավորում ունեցող և մրցունակ մասնագետների պատրաստման գործընթացի ապահովում, որի իրականացման համար էական են համարվել հետևյալ խնդիրները. արդիականացնել կրթական ծրագրերը՝ հաշվի առնելով փոփոխվող աշխատաշուկան և եվրոպական կրթական չափանիշները, բարելավել ուսանողական կյանքի շրջափուլը, ապահովել պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական աճը, ապահովել կրթական ծրագրերը ժամանակակից նյութատեխնիկական միջոցներով, բարելավել կրթական միջավայրը:

Կրթական ծրագրերի շրջափուլի ավարտին ամբիոնները, ներգրավելով արտաքին և ներքին շահագրգիռ խմբերին, իրականացնում են ինքնագնահատում, որի արդյունքում վերանայվում են կրթական ծրագրերի վերջնարդյունքները, ուսումնական պլաններում կատարվում են համապատասխան փոփոխություններ: Կրթական գործընթացներում ուսանողների ներգրավվածության խթանման և երիտասարդ դասախոսների դասավանդման, գիտահետազոտական աշխատանքների ուղղորդման նպատակով վերանայվել են խորհրդատվական և մենթորության մոտեցումները: Ուսանողական և դասախոսական խմբերի հետ անընդհատ քննարկումների արդյունքում փոփոխվել է գնահատման մոտեցումը: ՄՈՒՀ-ը նաև որդեգրել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստման նոր մոտեցում, համաձայն որի՝ Համալսարանում պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներուժի զարգացման համար կազմակերպվում են վերապատրաստման նոր դասընթացներ: Ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանն է ուղղված Համալսարանում արտաքին և ներքին շահակիցների համար իրականացվող «Հաշվապահական հաշվառում» դասընթացը («SMART CAFFE» կենտրոնում): Վերանորոգվել և շահագործման են հանձնվել բնագիտական համալիր լաբորատորիան, համակարգչային տեխնիկայով հագեցած լսարաններ, որոնցում ապահովվում է նաև ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար ոչ ֆորմալ մթնոլորտ՝ տարաբնույթ քննարկումների միջոցով խթանելով գիտահետազոտական և նորարարական գաղափարատվությունը և նախագծեր մշակելու ցանկությունը: 2022 թ.-ից գնումների գործընթացով կազմակերպվում է աշխատակիցների առողջության ապահովագրությունը:

Նպատակ 2. Տարածաշրջանում գիտական գաղափարների հզորացման և գիտական նվաճումների ու նորարարությունների փոխանցման խթանիչ կենտրոն դառնալու ձգտում, որի իրականացման տեսանկյունից կարևորվել են հետևյալ խնդիրները. ներդնել ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտահետազոտական աշխատանքների և նորարարական ծրագրերի պլանավորման և աջակցության մեխանիզմներ, բարելավել պրոֆեսորադասախոսական անձնակազմի և երիտասարդ հետազոտողների գիտահետազոտական կարողությունների ձևավորմանը նպաստող պայմանները, ապահովել ուսումնական և գիտական

գործընթացների միասնությունը:

Կատարելագործվել են գիտահետազոտական աշխատանքներին դասախոսների և ուսանողների ներգրավման մեխանիզմները, որի արդյունքում ՄՈՒՀ-ի դասախոսները գիտական հոդվածներ են տպագրել միջազգային ճանաչում ունեցող գիտական շտեմարաններում (Scopus, WoS): Բարելավվել են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմները, որի արդյունքում ամբիոնների հիմնական գիտական ուղղությունները արտացոլվում են ուսանողների ավարտական աշխատանքների թեմաներում, տարբեր դասընթացներում, խրախուսվում են ուսանողների և դասախոսների համատեղ հոդվածները, գիտական աշխատախմբերում՝ ուսանողների և երիտասարդ դասախոսների ներգրավվումը:

Նպատակ 3. Համալսարանի կառավարման համակարգի բարելավում: Նպատակի իրականացման տեսանկյունից էական են համարվել հետևյալ խնդիրները՝ համապատասխանեցնել Համալսարանի կառուցվածքը 2021-25 թթ. ռազմավարությանը, բարելավել Համալսարանի կառավարման գործիքակազմը, Համալսարանի ֆինանսատնտեսական քաղաքականությունը, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը, կառավարման համակարգի նյութատեխնիկական հիմքը:

Կազմակերպական կառույցի բարելավված մոդելի միջոցով ապակենտրոնացվել է կառավարման համակարգը, օրինակ, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի վերահսկման տիրույթից ուսումնական գործընթացների կառավարման որոշ գործառույթներ տեղափոխվել են ֆակուլտետների դեկանների վերահսկման տիրույթներ, պրոֆեսորադասախոսական կազմի ընտրությունների մասով, բացի պրոֆեսորի տարակարգը (պրոֆեսորների ընտրությունը կատարվում է Համալսարանի գիտական խորհրդում), մյուս տարակարգերի ընտրությունները ներկայումս իրականացվում են ֆակուլտետների գիտական խորհուրդներում: Կատարելագործվում են հետադարձ կապի ապահովման մեխանիզմները, որի արդյունքում որոշումների կայացման գործընթացում քննարկումների ծավալման միջոցով ապահովվում է առավել լայն մասնակցայնություն: Կատարելագործվել են վարչական կառույցների աշխատանքների արդյունավետության գնահատման մեխանիզմները. արդյունքում ներդրվել է խրախուսման նոր մոտեցում: Վերանայվել է ՄՈՒՀ-ի ֆինանսատնտեսական քաղաքականությունը, կատարվել են էական փոփոխություններ ֆինանսական միջոցների հատկացման տրամաբանության տեսանկյունից. այժմ կատարվում է նաև ընթացիկ կարճաժամկետ երկամյա պլանավորում: Որակավորման բարձրացման նոր մոտեցմամբ բարելավվել են ուսումնասօժանողակ և վարչական կազմի մասնագիտական աճի հնարավորությունները: Ներդրվել է փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգը, որն ապահովում է առավել կատարյալ թափանցիկություն և հաշվետվողականություն: Ամեն տարի վերանայվում և լրամշակվում է [ԳԱՅ](#)-ը:

Նպատակ 4. Համալսարանի միջազգայնացման գործընթացի ընդլայնում, որի իրականացման համար առանձնացվել են հետևյալ խնդիրները՝ կատարելագործել միջմուհական համագործակցության քաղաքականությունը, խթանել ուսանողների և աշխատակիցների ներգնա և արտագնա շարժունությունը՝ արտասահմանյան մուհերի դրական փորձը Համալսարանում ներդնելու նպատակով, ընդլայնել Համալսարանի միջազգայնացումը օտար լեզվի խթանման և օտարալեզու դասընթացների և կրթական ծրագրերի ներդրման միջոցով, բարելավել բուհական շուկայավարությունը, կատարելագործել հասարակայնության հետ կապերը, բարձրացնել

Համալսարանի տեսանելիությունը:

Համալսարանի համար մեծ ձեռքբերում է Էրազմուս+ կարողությունների զարգացման դրամաշնորհային նախագծերի մրցույթին հաղթած DeSIRE նախագիծը: Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության անգլերենի իմացության զարգացմանը նպաստել են Էրազմուս+ SMARTI նախագծի շրջանակներում իրականացվող վերապատրաստումները: Ավելին, Բացի Էրազմուս+ SMARTI-ի EMI կենտրոնի կողմից «Մերվիս» մասնագիտության ուսանողների համար անգլերենի վերապատրաստման դասընթաց կազմակերպելը, կենտրոնը ուսանողների համար ներդնում է նաև անգլերեն լեզվով լրացական դասընթացներ: Համալսարանում արդեն բարի ավանդույթ են դարձել տարեկան կազմակերպվող մասնագիտությունների տոնավաճառը և աշխատանքի տոնավաճառը, որոնք բարձրացնում են դիմորդների իրազեկվածությունը ՄՈՒՀ-ի կրթական ծառայությունների վերաբերյալ և նպաստում գործատուների ու շրջանավարտների կապին: Փոփոխվել է ՄՈՒՀ-ի կայքը՝ բարելավվելով տեղեկատվության և հաշվետվողականության եռալեզու տարածման հնարավորությունները:

Նպատակ 5. Որակի ապահովման համակարգի կատարելագործում, որտեղ կարևորվել են հետևյալ խնդիրները՝ կատարելագործել որակի ապահովման քաղաքականությունը, բարելավել որակի ապահովման մեխանիզմները և գործիքակազմը, կատարելագործել շահակիցների մասնակցության մեխանիզմները, բարելավել հանրային համագործակցության զարգացման որակի ապահովման մեխանիզմները:

Որակի ապահովման համատեքստում առավել ուշադրության է արժանացել արտաքին և ներքին շահակիցների ներգրավման և հետադարձ կապի ապահովման մեխանիզմների զարգացումը. արդյունքում կարիքների վերհանումը և վերլուծությունները առավել բազմակողմանի են դարձել. օրինակ, արտադրական պրակտիկայի արդյունավետության գնահատումն իրականացվում է որպես շահագրգիռ խմբեր թե՛ ուսանողների, թե՛ պրակտիկայի ղեկավարների, թե՛ պրակտիկայի վայրից կցված ղեկավարների ներգրավման միջոցով: Աշխատանքներ են տարվում որակի կառավարման և բարելավման գործընթացներում ներգրավելու ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական գործունեությամբ հետաքրքրված հասարակական կազմակերպություններին. ՄՈՒՀ-ի որակի ապահովման կենտրոնը որակի ապահովման քաղաքականության վերանայման համատեքստում համագործակցում է «ՆորԱրար» ՀԿ-ի հետ: Վերանայվել են գործող կարգերը և ընթացակարգերը, մշակվել է ներքին և արտաքին շահակիցների ներգրավման քաղաքականություն: Բարելավվել են կրթական ծրագրերի, գիտահետազոտական գործունեության, կառավարման համակարգի ուսումնասիրության որակի ապահովման մեխանիզմներն ու գործիքակազմը. մշակվել են կառավարման արդյունավետության գնահատման, գիտական խմբերի բավարարվածության ուսումնասիրության նոր գործիքներ: Կրթական գործընթացներից բավարարվածության հարցաթերթերը տարբերակվել են ըստ ուսումնառության տարիների:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Բ. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Հիմքեր	ՄՈՒՀ-ի առաքելության, սահմանած նպատակների և խնդիրների վերանայման քաղաքականությունը Ներքին և արտաքին շահակիցների պահանջները բացահայտող
--------	---

մեխանիզմները (օրինակ՝ հարցումներ և այլն) (տե՛ս [Հավելված 10.գ.1](#))
ՄՈՒՀ-ի առաքելության վերանայումն արտահայտող որոշումներ
(փաստաթղթեր)

Վերլուծել, թե ինչպես է ՄՈՒՀ-ը վերհանում ներքին և արտաքին շահակիցների կարիքները: Հիմնավորել մոտեցման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/

ՄՈՒՀ-ի 2021-25 թթ. ռազմավարական ծրագրում շեշտված է այնպիսի համակարգի ստեղծման կարևորությունը, որն ուղղված է արտաքին և ներքին շահակիցների կարիքների բավարարմանը, համակարգ, որը գործունեության բոլոր ոլորտներում մատուցվող ծառայություններով կարող է դիմակայել հնարավոր մարտահրավերներին՝ հնարավորություն տալով սովորողներին ստանալ բարձրորակ կրթություն, և գործատուներին՝ ունենալ որակյալ մասնագետներ: Առաքելության հիմքում դրված են համընդհանուր արժեքներ, որոնք ազդում են Համալսարանի գործունեության վրա և ընդունվում են շահակիցների կողմից: Ինստիտուցիոնալ մակարդակում այդ արժեքներն են՝ հավասարություն, ակադեմիական ազատություն, պատասխանատվություն, ազնվություն, ստեղծագործականություն և նորարարություն, որակ, աշխատակիցների և սովորողների առողջության, բարեկեցության նկատմամբ մտահոգություն, բարեվարքություն: Այս արժեքները ենթադրում են այնպիսի սկզբունքներ և վարքային նորմեր, որոնք Համալսարանի գործունեության տարբեր ոլորտներում և ռազմավարական նպատակների իրականացման գործում ապահովում են շահակիցների ակտիվ մասնակցությունը և արտահայտում են շահակիցների կարիքները:

Ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը ռազմավարական նպատակների իրականացման և խնդիրների լուծմանն ուղղված գործողություններում կանոնակարգված է՝ համաձայն ՄՈՒՀ-ի կանոնադրության: Համալսարանի կառավարման կոլեգիալ մարմիններում ընդգրկված են պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ուսանողության ընտրված և հիմնադրի ու լիազոր մարմնի կողմից նշանակված ներկայացուցիչներ: Ներքին և արտաքին շահակիցները (ուսանողներ, պրոֆեսորադասախոսական անձնակազմ, գործատուներ, շրջանավարտներ) ընդգրկված են նաև ամբիոնային մակարդակում կրթական ծրագրերի շրջանակներում կարիքների վերհանման, նոր կրթական ծրագրերի մշակման, գործող կրթական ծրագրերի վերանայման գործընթացներում: Գործատուները պարտադիր ներգրավվում են նաև ավարտական աշխատանքների պաշտպանության հանձնաժողովներում, դեկավարում են ավարտական աշխատանքներ, վարում դասընթացներ, ինչը նպաստում է համագործակցության սերտացմանը և համատեղ քննարկումների արդյունքում՝ կարիքների ճանաչմանը: Գործատուի հետ համատեղ «Գերազանցության կենտրոնի» հիմնումը Համալսարանում ՄՈՒՀ-ի 2021-25 թթ. ռազմավարության թիրախային գործողության իրականացման և բարելավման գործողությունների պլանի 1.2 կետի իրականացման օրինակ է, սերտացնում է կապը գործատուի հետ և անմիջական դարձնում կարիքների վերհանումը: Տարաբնույթ միջոցառումների շնորհիվ (մասնագիտական տոնավաճառներ, օլիմպիադաներ, համատեղ այցերի կազմակերպում, տարեկան մինչև 5 անգամ կազմակերպվող «Բաց դռների օր») Համալսարանը շարունակում է ամրապնդել «ՄՈՒՀ-դպրոց» կապը՝ ուշադրության կենտրոնում պահելով նաև հանրակրթության շրջանավարտների կարիքները:

ՄՈՒՀ-ի որակի ապահովման կենտրոնի կողմից որդեգրած մոտեցման համաձայն ուսանողների և դասախոսների կարիքների վերհանումն ու վերլուծությունը հնարավոր է դառնում տարվա կտրվածքով շահակիցների շրջանում իրականացված որակական և քանակական հարցումների (հարցաթերթիկային հարցում, առցանց հարցում, ֆոկուս խմբային քննարկումներ, հարցազրույցներ), փաստաթղթային վերլուծության, երկրորդային վերլուծությունների համեմատական ուսումնասիրությունների շնորհիվ: Կարիքների վերլուծությունը ներկայացվում և քննարկվում է գիտական խորհրդի նիստում. կատարված առաջարկությունների հիման վրա կայացվում է որոշում և ուղարկվում հասցեատերերին, ինչը պլանավորվող գործողությունների հիմք է հանդիսանում: Մասնավորապես, վերջին երեք-չորս տարիների կտրվածքով կարիքների վերլուծությունների և դրանց շուրջ ծավալած քննարկումների արդյունքում վերանայվել է սովորողների գնահատման մոտեցումը, փոփոխվել է օտար լեզուներին հատկացված ժամաքանակը ուսումնական պլաններում, պրակտիկայի վայրերի ընտրության պարագայում դիտարկվել են ֆինանսավորման հնարավորությունները, առավել ուսանողամետ է դարձել դասընթացների հերթագայումը դասացուցակներում, ավելացել են ՄՈՒՀ-ի գիտահետազոտական աշխատանքներում սովորողների ներգրավվածության հնարավորությունները: Վերանայվում են պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության մոտեցումը, տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչները, ներդրվել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստման նոր համակարգ:

Ներքին շահակիցներից ուսումնասօժանդակ և վարչական անձնակազմի կարիքների վերհանումը որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացվում է 2-3 տարին մեկ անգամ առցանց հարցման և ֆոկուս խմբային քննարկումների արդյունքում: Արտաքին շահակիցներից տարվա շրջանավարտները ներգրավվում են կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձևավորման և ընդհանուր բավարարվածության գնահատման շրջանակներում, մասնագիտությամբ կամ հարակից ոլորտում աշխատող շրջանավարտները և նրանց գործատուները՝ կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման շրջանակներում: 2-3 տարին մեկ անգամ որակի ապահովման կենտրոնը հարցումներ է իրականացնում մարզի դիմորդների շրջանում՝ վերջիններիս մասնագիտական և բուհական նախընտրությունները բացահայտելու նպատակով: Աշխատանքներ են տարվում որակի ապահովման կենտրոնի և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցության ամրապնդման ուղղությամբ, ինչը նաև միտված է արտաքին շահակիցների կարիքների վերհանմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականությունն ու ընթացակարգերը
 Շահակիցների (դասավանդողների, ուսումնառողների)
 ներգրավվածությունն արտացոլող հիմքեր
 Շահակիցներից ստացված արձագանքները
Ռազմավարական ծրագրի իրականացումը գնահատելու
 քաղաքականությունը

[Ռազմավարական ծրագրի իրականացման գնահատմանը նպաստող այլ հիմքեր](#)
[ՄՈՒՀ-ի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման տարեկան զեկույցները](#)

Կատարել Ռազմավարական ծրագրի իրականացման և որակի ապահովմանը նպաստող մեխանիզմների վերլուծություն (տրամադրել համապատասխան հիմքեր և կատարել հղումներ համապատասխան փաստաթղթերին): Վերլուծել, թե ինչքանով են որակի ապահովման մեխանիզմները նպաստում շարունակական բարելավմանը:

2021 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 1095Ա/Մ ռեկտորի հրամանի համաձայն ձևավորվել է «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2021-25 թթ. ռազմավարական ծրագրի և բարելավման գործողությունների պլանների իրականացման մշտադիտարկման հանձնաժողովը: Հանձնաժողովի կազմում ընդգրկված են ՄՈՒՀ-ի ռեկտորը, ուսումնական և գիտական աշխատանքների գծով պրոռեկտորները, հասարակական և բնական գիտությունների ֆակուլտետների ղեկանները, կրթական բարեփոխումների և վերապատրաստման կենտրոնի ղեկավարը, որակի ապահովման կենտրոնի ղեկավարը: Հանձնաժողովի հետ համատեղ որակի ապահովման կենտրոնի կողմից մշակվել, պիլոտային փորձարկում են անցել և ներդրվել են ամբիոնների ու ստորաբաժանումների տարեկան աշխատանքային պլանների և ռազմավարության գործողությունների պլանի կատարողականը չափող հաշվետվությունների ունիֆիկացված ձևաթղթերը, սահմանվել է աշխատանքային պլանների և հաշվետվությունների ներկայացման ժամանակացույցը, որոշվել է հասցեականությունը: Հանձնաժողովի որոշմամբ հաշվետվությունները ներկայացվում են տարեկան երկու անգամ (հունվարի 15, հուլիսի 1), որը միտված է չիրականացված կամ թերի իրականացված աշխատանքների հնարավորինս արագ հայտնաբերմանը և օպերատիվ միջամտության ապահովմանը: Հանձնաժողովի անդամները պատասխանատվություն են կրում հասցեական ստորաբաժանումների տարեկան աշխատանքային պլանների՝ ՄՈՒՀ-ի 2021-25 թթ. ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի համապատասխանության ստուգման և հաշվետվություններում չիրականացված կամ թերի իրականացված աշխատանքների առանձնացման, շահակիցների շրջանում հասցեական քննարկումների ապահովման և առաջացած խնդիրների լուծումների ներկայացման համար: Ըստ այդմ, հանձնաժողովը նաև քննարկում է կատարողականների վերաբերյալ ներկայացված եզրակացությունները և կայացնում համապատասխան որոշումներ: Այսպիսով հանձնաժողովը պարբերաբար հետևում է ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակների իրականացմանը, գնահատում է արդյունքները՝ հիմք ընդունելով ռազմավարության ծրագրի գործողությունների պլանում տեղ գտած ազդեցության գնահատման ցուցիչները, ըստ անհրաժեշտության իրականացնում միջամտություններ: Մինչև գործող ռազմավարական ծրագրի ավարտը հանձնաժողովը մեկ անգամ նաև քննարկել է գալիք ռազմավարության առաքելության և նպատակների հնարավոր ուղղվածության հարցը:

Հանձնաժողովի աշխատանքի արդյունքում որակի ապահովման կենտրոնի ղեկավարը ՄՈՒՀ-ի 2021-25 թթ. ռազմավարական ծրագրի կատարողականի տարեկան վերլուծություն է իրականացնում և արդյունքները ներկայացնում է գիտական խորհրդի նիստում (հիմնականում՝

մայիս ամսին): Զեկուցման շրջանակներում պարտադիր անդրադարձ է կատարվում բացթողումներին, որպեսզի ծավալվի քննարկում և ներքին շահակիցների արձագանքին նպաստելու միջոցով ՄՈՒՀ-ի առաքելության և ռազմավարական նպատակների իրականացման համատեքստում ապահովվի տեղեկացվածության, հետաքրքրվածության, պատասխանատվության, ներգրավվածության և մասնակցայնության աճ: Համալսարանի որակի ապահովման կենտրոնի կողմից կազմակերպվում և իրականացվում է ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների համաձայն Համալսարանի տարեկան ամփոփ ինքնավերլուծություն, որում նույնպես արտացոլվում է Համալսարանի առաքելության և ռազմավարական նպատակների կատարողականի արդյունավետությունը:

Պրոռեկտորները, դեկանները, ամբիոնների վարիչները, ստորաբաժանումների ղեկավարները տարեկան մեկ անգամ կազմում են նաև իրենց կողմից ղեկավարած աշխատանքների վերլուծական հաշվետվությունները, որոնք համապատասխանաբար ներկայացվում են ամբիոնների նիստերում, ֆակուլտետների խորհուրդների նիստերում, ՄՈՒՀ-ի գիտական խորհրդի նիստում՝ ներքին շահակիցների առջև ապահովելով հաշվետվողականությունն ու թափանցիկությունը: Վերլուծական հաշվետվությունները ակումուլացվում են Համալսարանի տարեկան հաշվետվության մեջ, որը ռեկտորի կողմից ներկայացվում է հոգաբարձուների խորհրդի նիստում: Համալսարանի տարեկան հաշվետվությունը պարտադիր տեղադրվում է ՄՈՒՀ-ի կայքում՝ այսպիսով ապահովելով հաշվետվողականությունն ու թափանցիկությունը արտաքին շահակիցների առջև:

Համալսարանի գործունեության արդյունքները գնահատելու համար 2016 թ.-ից տարին մեկ անգամ ՄՈՒՀ-ում իրականացվում է գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) հավաքագրում և վերլուծություն:

Վերլուծել Չափանիշ 1-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>1. ՈԱՇ-ին համահունչ ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրի և վերջինիս իրականացման գործողությունների պլանի առկայություն՝ հստակ սահմանված ժամանակացույցով և վերջնարդյունքներով:</p> <p>2. ՄՈՒՀ-ի առաքելությունից և նպատակներից բխող ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանմանն ուղղված մեխանիզմների առկայություն:</p> <p>3. ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրի կատարողականի պարբերաբար մշտադիտարկում հաստուկ հանձնաժողովի կողմից:</p> <p>4. ՄՈՒՀ-ի առաքելության և նպատակների իրականացման գործընթացում ներքին շահակիցների ներգրավման մեխանիզմի</p>	<p>1. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի սերնդափոխության դանդաղ տեմպ:</p> <p>2. ՄՈՒՀ-ի առաքելության և նպատակների իրականացման համար անհրաժեշտ ոչ բավարար ենթակառուցվածքների առկայություն (մարզադահլիճ, հանրակացարան, ճաշարան):</p>

առկայություն:	
Արտաքին հնարավորություններ	Վտանգներ
<p>1. Պետության կողմից քաղաքացիական հասարակության կայացման խթանման արդյունքում Համալսարանի գործունեության համատեքստում արտաքին շահակիցների հետաքրքրվածության և ներգրավվածության աճի հնարավորություն:</p> <p>2. Կրթական, գիտահետազոտական ազգային և միջազգային դրամաշնորհային ծրագրերի ավելացում, հետևաբար ֆինանսավորման նոր աղբյուրներ և ռազմավարական նպատակների իրականացման հնարավորությունների աճ:</p> <p>3. Ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների տեսանկյունից արտաքին շահակիցների ներգրավման և ֆինանսական նոր աղբյուրների ստեղծման հնարավորություն:</p>	<p>1. Տարածաշրջանային ոչ կայուն իրավիճակ:</p> <p>2. Ժողովրդագրական անբարենպաստ ցուցիչներով պայմանավորված դիմորդների թվի նվազում:</p> <p>3. Արտաքին շահակիցների կողմից (մասնավորապես՝ գործատուներ) ապագա մասնագետների առջև դրվող պահանջների ոչ հստակ ձևակերպում:</p>

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

- Գիտական հետազոտությունների արդյունքների առևտրայնացման խթանում:
- Ազգային և միջազգային հետազոտական ծրագրերին մասնակցայնության աճի խթանում:
- ՀՀ Կառավարության կողմից ենթակառուցվածքի (մարզադահլիճ) շինարարության հայտի առկայություն, հանրակացարանի կառուցման հայտի ձեռքբերման աշխատանքների խթանում:
- Համալսարանի գիտաշխատախմբերում ներգրավվելու երիտասարդ կադրերի հետաքրքրության խթանում:
- Մենթորության ինստիտուտի զարգացում:
- Գործատուի՝ ՄՈՒՀ-ի տարածք ներգրավվածության խթանում (գերազանցության կենտրոններ, մասնագիտացված լսարաններ):

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի նորմերը:*

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

ՄՈՒՀ-ի կառավարման համակարգի բարելավումը որպես նպատակ ներկայացված է Համալսարանի 2021-25 թթ. ռազմավարական ծրագրում (Նպատակ 3): Կառավարման համակարգի բարելավման տեսանկյունից կարևոր են համարվել Համալսարանի կառուցվածքի փոփոխությունը և համապատասխանեցումը ՄՈՒՀ-ի 2021-25 թթ. ռազմավարությանը (Խնդիր 1), Համալսարանի կառավարման գործիքակազմի (Խնդիր 2), ֆինանսատնտեսական քաղաքականության (Խնդիր 3), մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի (Խնդիր 4) և կառավարման համակարգի նյութատեխնիկական հիմքի (Խնդիր 5) բարեփոխումները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Հաստատության կառավարման համակարգն ապահովում է սահմանված էթիկայի կանոններին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Հիմքեր

[Կառավարման մարմինների կանոնակարգերը և աշխատակարգերը](#)
[Ֆինանսների տնօրինման քաղաքականություն և ընթացակարգ](#)
[Ֆինանսական աուդիտի նշանակման կանոնակարգը և աուդիտի արդյունքները](#)
[ՄՈՒՀ-ի ստորաբաժանումների ցանկը և գործունեության կանոնակարգերը](#)
[Կառավարման մարմինների ընտրության կարգերը](#)
[Կազմակերպական կառուցվածքի սխեմատիկ պատկերը՝ ըստ ենթակայության և հաղորդակցության կապերի](#)
[ՄՈՒՀ-ի աշխատակիցների աշխատանքի ընդունման, տեղափոխման, հեռացման, առաջխաղացման, խրախուսման ու տույժի կիրառման քաղաքականությունն ու ընթացակարգերը](#)
[ՄՈՒՀ-ի էթիկայի հանձնաժողովի կանոնակարգ](#)

Ներկայացնել կազմակերպական կառուցվածքում ներգրավված մարմինների տեղաբաշխման քարտեզը <https://vsu.am/karucvacq/> Հավելված 2.ա.1.

Վերլուծել կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանո՞վ է այն նպաստում հաստատության առաքելության արդյունավետ իրականացմանը և որքանո՞վ է այն հասանելի անձնակազմին:

2020թ. ապրիլ-հուլիս ամիսներին, հիմք ընդունելով 2019թ.-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցի դիտարկումները, ՄՈՒՀ-ի նոր ռազմավարական ծրագրի մշակման համար ձևավորված խմբի կողմից ներքևից վերև սկզբունքով կատարվել է ՄՈՒՀ-ի կառավարման առկա համակարգի արդյունավետության գնահատում, մարդկային և ֆինանսական ռեսուրսների վերլուծություն, ինչի արդյունքում առաջարկվել և Հոգաբարձուների խոհրդի կողմից հաստատվել է Համալսարանի 2021-25թթ. ռազմավարական ծրագիրը, որն արտացոլում է ՄՈՒՀ-ի հետագա զարգացման ուղիները և դրանց հասնելու պլանավորված քայլերը (2021-25թթ ՎՊՀ ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլան):

Համալսարանը կառավարվում է ՀՀ օրենսդրության, ՀՀ կառավարության 2016 թ.-ի մայիսի 19-ի 615-Ն որոշմանը հաստատված ու 2021թ.-ի հոկտեմբերի 22-ին թիվ 001.03 փոփոխություններով գրանցված «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության հիման վրա: Համալսարանի կառավարումը հիմնված է իր ինքնավարության վրա՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների գույակցմամբ, հիմնադրի, լիազոր մարմնի, Համալսարանի հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորի գործառույթների իրականացմամբ: Համալսարանի կառավարման մարմիններ են հանդիսանում հոգաբարձուների խորհուրդը (ձևավորվում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի, սովորողների, հիմնադրի և լիազոր մարմնի ներկայացուցիչներից) և ռեկտորը: Համալսարանի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է: Ռեկտորը ղեկավարում է Համալսարանի գիտական, կրթական, արտադրական, տնտեսական, ֆինանսական, միջազգային և այլ գործունեությունը: Համալսարանի ընթացիկ և օպերատիվ կառավարումն իրականացվում է գիտական խորհրդի, ռեկտորատի, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների միջոցով՝ ռեկտորի և պրոռեկտորների անմիջական ղեկավարմամբ: Գիտական խորհուրդը կոլեգիալ մարմին է (ի պաշտոնե և առնվազն 50% ընտրովի անդամներ, անդամների 25%-ը սովորողներ են), որը պլանավորում, համակարգում և կարգավորում է ՄՈՒՀ-ի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և գիտատեխնիկական գործունեությունը: Ռեկտորատը (ի պաշտոնե անդամներ) ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որը հոգաբարձուների և գիտական խորհուրդների նիստերի միջև ընկած ժամանակահատվածում քննարկում է Համալսարանի գործունեությանը վերաբերող հարցերը, հետևում հոգաբարձուների և գիտական խորհուրդների որոշումների կատարման ընթացքին, կայացնում որոշումներ: Համալսարանում ռեկտորատի նիստեր են գումարվում ամեն շաբաթ՝ ՄՈՒՀ-ի ընթացիկ կառավարումն ապահովելու համար: Ռեկտորին կից գործում է ֆինանսատնտեսական հանձնաժողով, որն իրականացնում է Համալսարանի ֆինանսատնտեսական իրավիճակի վերլուծություն և ըստ այդմ կայացնում որոշումներ: Հոգաբարձուների խորհրդի կողմից 2020 թ.-ի մայիսի 16-ի թիվ 35-Լ որոշման համաձայն հաստատվել է Համալսարանի կառուցվածքը: Կառուցվածքային ստորաբաժանումների անմիջական կառավարումը հիմնվում է վերջիններիս կանոնադրությունների, ՄՈՒՀ-ում գործող կանոնակարգերի և ընթացակարգերի վրա՝ ի նպաստ Համալսարանի առաքելության և ռազմավարական նպատակների իրականացմանը, ապահովում է ներքին խնդիրների նկատմամբ արագ արձագանքի հնարավորություն: Համալսարանի կառավարման համակարգը ֆորմալիզացված է նաև ըստ գործող պաշտոնների անձնագրերի, որոնցում հստակ ներկայացված են տվյալ հաստիքի դերը, գործառույթները, իրավունքները, պարտականությունները, ենթակայությունը: Ըստ անհրաժեշտության պաշտոնի անձնագրերը վերանայվում են ստորաբաժանումների ղեկավարների կողմից ռեկտորի հանձնարարությամբ՝ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի հետ համատեղ: Կառավարման համակարգի կազմակերպման նման մոտեցումը ապահովում է հատկապես ներքին շահակիցների անմիջական և միջնորդավորված մասնակցության հստակ ձևեր ՄՈՒՀ-ի որոշումների կայացման գործընթացում և խթանում ներգրավվածությունը ռազմավարական նպատակների իրականացման գործում: Համալսարանում կառավարման ապակենտրոնացումը ապահովվում է

նաև ռեկտորի հրամանով ձևավորվող աշխատախմբերի և գիտական խորհրդին կից գործող հանձնաժողովների գործառնության միջոցով: Վերջիններս նպաստում են ներքին շահակիցների ավելի լայն մասնակցայնությանը, կարիքների բազմակողմանի քննության հնարավորություն են ընձեռում և ծավալվող քննարկումների միջոցով հնարավոր են դարձնում տեղեկատվության հասանելիությունը ներքին օղակներին, ինչպես նաև՝ ներքին օղակներից: Համալսարանի կառավարման գործընթացներում կարևորվում է էթիկայի կանոնների պահպանումը, ըստ անհրաժեշտության ձևավորվում է էթիկայի հանձնաժողով, որի անդամ կարող են հանդիսանալ պրոֆեսորադասախոսական և վարչական աշխատակազմերից ներկայացուցիչներ, սովորողներ: Կարգերի, կանոնակարգերի վերանայումը և փոփոխությունն ապահովվում է քննարկումների՝ վերևից ներքև և/կամ ներքևից վերև սկզբունքներով: ՄՈՒՀ-ում հարաբերությունները կարգավորվում են գործող ներքին կարգապահական կանոնների հիման վրա: Կառավարման համակարգի բարելավմանը նպաստել է նաև փաստաթղթաշրջանառության «Mulberry Groupware 2.0» էլեկտրոնային համակարգի ներդրումը (2021 թ.): Այն դյուրացրել է տեղեկատվական հոսքերը, ապահովում է ժամանակի խնայողություն, թափանցիկություն և հաշվետվողականություն: ՄՈՒՀ-ում փաստաթղթաշրջանառությունը կատարվում է գործավարության վերամշակված կարգի (2023 թ.) համաձայն: Համալսարանում ներդրված է էլեկտրոնային ուսումնական բազա, ինչը դյուրացնում է ուսանողների վերաբերյալ վիճակագրական տվյալների հետ աշխատանքը:

Իր առաքելության և ռազմավարական նպատակների իրականացման համար Համալսարանն ապահովված է անհրաժեշտ մարդկային և բավարար նյութական ու ֆինանսական ռեսուրսներով: Մարդկային ռեսուրսների կառավարումը իրականացվում է Համալսարանի կողմից որդեգրած մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության և խրախուսման կարգերի հիման վրա, ինչը խթանում է աշխատողների շրջանում առողջ մրցակցությունը, նպաստում է աշխատանքի մեջ արդյունավետության աճին, խրախուսման տեսանկյունից արդարության սկզբունքի ապահովում է ենթադրում: Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և վերապատրաստման, ուսումնաօժանդակ և վարչական կազմի որակավորման բարձրացման ընթացակարգի համաձայն Համալսարանում ներդրվել է որակավորման բարձրացման և վերապատրաստման նոր մոդել:

Համալսարանի ֆինանսական ռեսուրսները հիմնականում գոյանում են ուսանողների վարձավճարներից, պետության հատկացումներից, 2021 թ.-ից սկսած արտաքին շահակիցների համար իրականացվող վերապատրաստումներից, դրամաշնորհներից, միջազգային ծրագրերից, ձեռնարկատիրական գործունեությունից: Ֆինանսական ռեսուրսների բաշխումը իրականացվում է Համալսարանի կրթական ծրագրերի և ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի պահանջների համաձայն: Համալսարանի նյութատեխնիկական բազան համալրվում է գնումների գործընթացով կազմակերպվող մրցույթների արդյունքում ձեռքբերված պայմանագրերի հիման վրա: Ստորաբաժանումները 4 ամիսը մեկ անգամ ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժնին են ներկայացնում աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների վերաբերյալ գնումների տեղեկագրերը: Գնումների պլանավորման նման մոտեցումը առավել կազմակերպված է դարձնում գործընթացը՝ բացառելով ավելորդ քանակով և/կամ ոչ անհրաժեշտ

ապրանքների ձեռքբերումը, և հետևաբար, կրճատելով անհարկի ծախսերը: Համալսարանի կառուցվածքը, հաստիքացուցակը, եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը և հաշվեկշիռը հաստատում է հոգաբարձուների խորհուրդը: Հաշվի առնելով 2019թ. ինստիտուցիոնալ հավատարմագրման վերաբերյալ փորձագիտական գեկույցի դիտարկումները, ՄՈՒՀ-ի բարելավման պլանը՝ իրականացվել են կազմակերպական կառուցվածքի բարեփոխումներ: Մասնավորապես, կրթական ծրագրերի արդյունավետ կառավարման նպատակով բովանդակային առումով վերակազմավորվել են Համալսարանի ֆակուլտետները, ըստ այդմ՝ վերակազմավորվել են նաև թողարկող ամբիոնները: Վարչական մասով վերաբաշխվել են նոր ստեղծված ստորաբաժանումների ենթակայության գործառույթները: Գիտահետազոտական, արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների կառավարելի և արդյունավետ կազմակերպման համար ստեղծվել է գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժինը իր համապատասխան գործառույթներով, որը գործում է գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի երթակայությամբ: Կառուցվածքային վերակազմավորման արդյունքում ստեղծվել է նաև կրթական բարեփոխումների և վերապատրաստման կենտրոն իր նոր բովանդակային գործառույթներով, որը գործում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի երթակայությամբ: Մշակվել և գիտական խորհրդի կողմից հաստատվել են պրոֆետորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և վերապատրաստման, ուսումնաօժանդակ և վարչական կազմի որակավորման բարձրացման ընթացակարգը, ձեռնարկատիրական գործունեության կանոնակարգը, գիտական խմբերի կանոնակարգը, վերանայվել են գիտական աշխատանքների և պրոֆետորադասախոսական անձնակազմի խրախուսման կարգերը: Արդյունքում ՄՈՒՀ-ում առաջացել են ֆինանսավորման հնարավորությունների նոր հիմքեր. Համալսարանը կազմակերպում է արտաքին շահառուների համար վճարովի վերապատրաստման դասընթացներ (ուսուցիչների, տնօրենների, ուսուցչի օգնականների, ՆՈՒՀ մանկավարժական աշխատողների համար), հաշվապահական հաշվառման դասընթացներ, կազմակերպում է «Happy Tour» զբոսաշրջային ծառայություններ: ՄՈՒՀ-ի վերակազմավորման արդյունքում, ինչպես նաև բարելավման պլանի 2.3 կետի համաձայն (ֆինանսական կառավարման համակարգի բարելավում) վերանայվել և վերաձևավորվել է դրույքաչափերի ֆինանսավորման տրամաբանությունը, որը հանգեցրել է ՄՈՒՀ-ի ֆինանսների կայուն կառավարման: Ֆինանսական կայունության տեսանկյունից անհրաժեշտ է աշխատանքներ տանել ֆինանսական բազմազանության շարունակական ապահովման համար. օրինակ, արտաքին շահակիցների համար կրթական այլ ծառայությունների կազմակերպում և գիտելիքահեն ձեռնարկատիրական գործունեության ծավալում, որը կհանգեցնի ֆինանսների 30% գոյացմանը այլ վճարներից, ինչպես նաև՝ աշխատավարձի մասը ընդհանուր բյուջեում կկազմի ընդհանուր ֆոնդի 65%-ը, ՄՈՒՀ-ը կանցնի համակարգային ծրագրային բյուջետավորման:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Բ. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

<p>Հիմքեր</p>	<p>Դասախոսների և ուսանողների մասնակցությունն ապահովող կարգերը Որոշում կայացնելու գործընթացներում ուսումնառողների և դասավանդողների մասնակցությունը երաշխավորող քաղաքականությունը և ընթացակարգերը</p>
<p><i>Ներկայացնել որոշում կայացնելու գործընթացում դասավանդողների և ուսումնառողների ներգրավվածության արդյունավետության վերլուծությունը:</i></p> <p>Համալսարանում դասավանդողների և ուսումնառողների անմիջական ներգրավվածությունն ապահովված է հոգաբարձուների խորհրդում, գիտական խորհրդում և ֆակուլտետների գիտական խորհուրդներում: Համալսարանի կանոնադրության համաձայն կառավարման մարմնում՝ հոգաբարձուների խորհրդում, ընդգրկված են պրոֆեսորադասախոսական անձնակազմից և գործող երեք ֆակուլտետների ուսանողությունից 25-ական տոկոս ներկայացուցիչներ: Պրոֆեսորադասախոսական կազմից հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումները: Թեկնածուներն ընտրվում են գիտական խորհրդում և ներկայացվում լիազոր մարմին: Ուսանողների ներկայացուցիչներից (բարձր առաջադիմություն և ակտիվ հասարակական դիրքորոշում ունեցող ցանկացած ուսանող) հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում ֆակուլտետների ուսանողական խորհուրդները: Համալսարանի ուսանողական խորհուրդը ընտրում է առաջադրած թեկնածուներին և ներկայացնում լիազոր մարմին՝ 2021 թ.-ին լիազոր մարմնի կողմից հաստատված կանոնադրության համաձայն:</p> <p>Համալսարանի կանոնադրության և գիտական խորհրդի կանոնակարգի համաձայն գիտական խորհրդի անդամների թվի 25-ական տոկոսը սովորողներ և դասավանդողներ են: Ուսանողներին առաջադրում են համապատասխան ֆակուլտետների ուսանողական խորհուրդները, ընտրությունն իրականացնում է Համալսարանի ուսանողական խորհուրդը: Դասավանդողներին առաջադրում են ամբիոնները, ընտրություններն իրականացվում են ֆակուլտետների գիտական խորհուրդներում: Համալսարանի ֆակուլտետի կանոնադրության համաձայն ֆակուլտետի գիտական խորհուրդներում նմանապես ընդգրկված են 25-ական տոկոս սովորողների և դասավանդողների ընտրովի ներկայացուցիչներ: Բացի ներկայացուցչական մասնակցայնությունը Համալսարանի գիտական խորհրդին՝ ՄՈՒՀ-ի անձնակազմը և ուսանողները Համալսարանի ներքին ցանցի միջոցով կարողանում են ծանոթանալ գիտական խորհրդի որոշումների նախագծերին և գիտական խորհրդի նիստից երեք օր առաջ ներկայացնում են իրենց հիմնավորումները, հաղորդումները, առաջարկները: Այսպիսով, անդամակցության ընտրովի մոտեցումն ապահովում է առավել վստահելի և օբյեկտիվ ներկայացուցչություն: Համապատասխան մարմիններում անդամների ձայնի միջոցով ներքին շահակիցները իրենց կարիքների համաձայն ներկայացնում են սեփական դիրքորոշումները քննարկման ենթակա հարցերի շուրջ: Ավելին, ռեկտորատի (ի պաշտոնե անդամներ) նիստերին ըստ անհրաժեշտության խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել քննարկվող հարցերին առնչվող մասնագետներ, աշխատակիցներ, հրավիրվել պրոֆեսորադասախոսական կազմից և ուսանողությունից ներկայացուցիչներ:</p>	

Համալսարանի ամբիոնի կանոնակարգի համաձայն ամբիոնի նիստերին մասնակցում են ամբիոնի բոլոր անդամները: Ամբիոնի նիստերում Համալսարանի ամբիոնի կանոնակարգի համաձայն որոշում կայացնելիս վճռական ձայնի իրավունք ունեն պրոֆեսորները, դոցենտները, ասիստենտները, դասախոսները, գիտաշխատողները, և խորհրդակցական ձայնի իրավունք՝ համատեղող ու խորհրդատու աշխատակիցները, ասպիրանտները, ուսումնաօժանդակ անձնակազմը: Ծավալվող ընդհանուր քննարկումների և քվեարկության արդյունքում դասախոսներն արդյունավետորեն մասնակցում են ՄՈՒՀ-ի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ առնչվող որոշումների կայացմանը: Համալսարանի կառավարման համակարգը ֆորմալիզացնող փաստաթղթերի (քաղաքականություններ, կարգեր, կանոնակարգեր, ընթացակարգեր, չափորոշիչներ և այլն) ձևավորման կամ փոփոխման գործում հաշվի են առնվում ամբիոնների քննարկումների արդյունքում ներկայացված առաջարկները, որոնք քննարկվում են ֆակուլտետների գիտական խորհուրդներում, Համալսարանի գիտական խորհրդում, ռեկտորատում: Որոշումների կայացման գործընթացում դասավանդողների մասնակցային ազդեցությունն ապահովվում է նաև հանձնաժողովների աշխատանքների միջոցով:

Համալսարանի կառավարման համակարգին ուսանողության անմիջական մասնակցությունը ապահովվում է նաև ուսանողական խորհրդի միջոցով: Համալսարանի ուսանողական խորհրդի կանոնադրության համաձայն ՈՒԽ-ն սովորողների ինքնակառավարման, ընտրովի ներկայացուցչական մարմին է: Ուսանողական խորհրդի գործունեությունը միտված է ուսանողների շահերի և իրավունքների պաշտպանմանը: Այն ակտիվորեն ապահովում է ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը, կառավարման համապատասխան մարմինների քննարկմանն է ներկայացնում ուսանողությանն առնչվող հարցեր: ՈՒԽ նախագահը պարբերաբար Համալսարանի գիտական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսանողների կարիքների վերաբերյալ ՈՒԽ-ի վերլուծությունը, առաջարկությունները: Համալսարանում գործում է նաև ուսանողական մեկ այլ միավորում՝ ուսանողական գիտական ընկերություն: Համալսարանի ուսանողական գիտական ընկերության կանոնադրության համաձայն ՈւԳԸ-ն Համալսարանի ուսանողներին միավորող ներկայացուցչական ինքնակառավարվող միավորում է: Այն իր ակտիվ գործունեության միջոցով շարունակաբար նպաստում է ուսանողների գիտական, հետազոտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:

Որպես աշխատողների միավորում՝ Համալսարանում գործում է արհեստակցական կազմակերպություն՝ արհմիություն: Այն աշխատողների աշխատանքային, տնտեսական, սոցիալական շահերը և իրավունքները պաշտպանող միավորում է, որը գործում է ՀՀ արհեստակցական միությունների մասին օրենքի համաձայն: Արհմիության նախագահը ի պաշտոնե ռեկտորատի անդամ է հանդիսանում, անհրաժեշտության դեպքում որոշումների կայացման գործընթացում բարձրացնում է աշխատողների շահերը պաշտպանող դիրքորոշումներ: Գործատուի կողմից աշխատողների աշխատանքի պայմանների, աշխատանքի վարձատրության և դրանց հետ կապված սոցիալական ու իրավական հարցերի լուծման համար տրամադրվող երաշխիքների ու արտոնությունների վերաբերյալ արհմիությունը Համալսարանի ռեկտորի հետ 2023 թ.-ին 3 տարով կնքել է կոլեկտիվ պայմանագիր:

Դասախոսների և ուսանողների միջնորդավորված մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին ապահովվում է Համալսարանի որակի ապահովման կենտրոնի կողմից: Որակի ապահովման կենտրոնի ղեկավարը Համալսարանի գիտական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսանողների և դասախոսների կարիքների և բավարարվածության վերաբերյալ վերլուծությունները, առաջարկությունները:

Համալսարանում բարի ավանդույթ է դարձել «Ինքնակառավարման օր» միջոցառումը: Ուսանողները այդպիսով ծանոթանում են Համալսարանի տարբեր ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների աշխատանքային իրավունքներին, պարտականություններին, գործառույթներին: «Ինքնակառավարման օրը» նպաստում է ուսանողների կողմից Համալսարանի կառավարման համակարգի ճանաչմանը և հասցեական է դարձնում նրանց հարցադրումները: Համալսարանում Ռեկտորի կողմից պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվում ուսանողների և ուսանողական խորհրդի ներկայացուցիչների հետ՝ կարիքները վերհանելու նպատակով:

ՉՍՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Հիմքեր	Գործողությունների կարճաժամկետ ծրագիրը և իրականացման հիմքերը Գործողությունների միջնաժամկետ ծրագիրը և իրականացման հիմքերը Գործողությունների երկարաժամկետ ծրագիրը և իրականացման հիմքերը
--------	--

Վերլուծել պլանավորման և պլանների իրականացման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանո՞վ է այն նպաստում հաստատության առաքելության արդյունավետ իրականացմանը:

Համալսարանի գործընթացների կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերն առաջանում են Համալսարանի 2021-25 թթ.-ի ռազմավարական ծրագրի, Համալսարանի ՌԾ 2021-25 թթ.-ի գործողությունների պլանի ու բարելավման պլանի հիման վրա: Ըստ այդմ ֆակուլտետները, ամբիոնները կազմում են իրենց գործունեության երկարաժամկետ ծրագրերը՝ ռազմավարությունները, և կարճաժամկետ ամենամյա աշխատանքային պլանները: Համալսարանի կառուցվածքային մյուս ստորաբաժանումները կազմում են տարեկան աշխատանքային պլաններ: Համալսարանի որակի ապահովման կենտրոնի երկարաժամկետ ռազմավարական մոտեցումը տեղ է գտնում Համալսարանի ՌԾ 2021-25 թթ. գործողությունների պլանում: Համալսարանի կողմից մշակված ընթացակարգերը հնարավոր են դարձնում պլանավորված աշխատանքներն իրականացնել կոնկրետ մեխանիզմներով:

Համալսարանի ռազմավարական ծրագրի և բարելավման գործողությունների պլանների իրականացման մշտադիտարկման հանձնաժողովի (01/11/21թ. 1095Ա/Մ հրաման) կողմից ՄՈՒՀ-ում ներդրվել են Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների տարեկան աշխատանքային պլանների և ռազմավարության գործողությունների պլանի կատարողականը չափող հաշվետվությունների ձևաթղթեր, սահմանվել է աշխատանքային պլանների և հաշվետվությունների ներկայացման ժամանակացույցը (հունվարի 15, հուլիսի 1): Հանձնաժողովի կողմից համապատասխան ժամանակահատվածում ուսումնասիրվում են

կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացրած տարեկան աշխատանքային պլանների և ՌԾ գործողությունների պլանի համապատասխանությունը, հաշվետվություններում՝ դրանց կատարողականը: Հանձնաժողովի անդամ հանդիսացող պրոռեկտորները և որակի ապահովման կենտրոնի ղեկավարը հանձնաժողովին են ներկայացնում իրենց հասցեական եզրակացությունները աշխատանքային պլանների՝ ՌԾ գործողությունների պլանի համապատասխանության և կատարողականների հաշվետվությունների վերաբերյալ: Թերի կամ չիրականացված աշխատանքների վերաբերյալ հանձնաժողովը հասցեական քննարկումների միջոցով ուսումնասիրում է պատճառները, որոշում է կայացնում, սահմանում նոր ժամկետներ կատարողականի ապահովման համար: Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը պարտավորվում է հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովին գրավոր զեկուցել կատարման ընթացքի և ստացված արդյունքների մասին:

Հաշվետվությունների՝ տարեկան կտրվածքով երկանգամյա ներկայացումը նպաստում է չիրականացված կամ թերի իրականացված աշխատանքների առավել արագ առանձնացմանը, շահակիցների շրջանում հասցեական քննարկումների ապահովմանը, առաջացած խնդիրների լուծումների ներկայացմանը և որոշումների կայացմանը: Այդպիսով հանձնաժողովը պարբերաբար հետևում է Համալսարանի առաքելության և ռազմավարական նպատակների իրականացմանը, գնահատում է արդյունքները, ըստ անհրաժեշտության իրականացնում է անհրաժեշտ միջամտություններ:

Հանձնաժողովի աշխատանքի արդյունքում որակի ապահովման կենտրոնի ղեկավարը Համալսարանի 2021-25 թթ. ռազմավարական ծրագրի կատարողականի վերաբերյալ տարեկան վերլուծություն է իրականացնում և արդյունքները ներկայացնում է գիտական խորհրդի նիստում: Պրոռեկտորները, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները Համալսարանի համապատասխան մարմիններում ներկայացնում են նաև իրենց կողմից ղեկավարած տարեկան աշխատանքների վերլուծական հաշվետվությունները՝ հաշվետվողականություն և թափանցիկություն ապահովելով ներքին շահակիցների առջև: Վերլուծական հաշվետվությունների հիման վրա գոյանում է Համալսարանի տարեկան հաշվետվությունը, որը ռեկտորի կողմից ներկայացվում է հոգաբարձուների խորհրդի նիստում և պարտադիր տեղադրվում է Համալսարանի կայքում՝ ապահովելով արտաքին հաշվետվողականություն:

ԶՄՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Հիմքեր [ՄՈՒՀ-ի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության համար կիրառվող մեխանիզմները](#) և գործիքները
[Պլանների գնահատման և վերանայման պաշտոնապես](#) ընդունված քաղաքականությունը
[Այլ հիմքեր և վերլուծություններ](#)

Նշել վերջին երեք տարիներին հաստատության գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունների արդյունքները և դրանց արտացոլումը ռազմավարական ծրագրում:

Համալսարանի գործունեության վրա ազդող արտաքին և ներքին գործոնների ուսումնասիրությունների արդյունքները տեղ են գտնում Համալսարանի տարեկան

հաշվետվությունում, պրոռեկտորների հաշվետվություններում, ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվություններում: Ազդեցության գործոնները տարեկան կտրվածքով վերհանվում են հիմնականում Համալսարանի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների՝ [ԳԱՑ](#)-ի համեմատությունների հիման վրա:

Ներքին ազդեցության գործոններից առավելապես կարևորվում և ԳԱՑ-ում ըստ ցուցանիշների արտահայտված են դիմորդները, ուսանողական համակազմը, աշխատողները (հիմնական պրոֆեսորադասախոսական համակազմը և նրանց ծանրաբեռնվածությունը, ուսումնաօժանդակ կազմը, վարչատնտեսական կազմը) շրջանավարտները, առաջադիմությունը, բյուջեն, տարածքը, նյութատեխնիկական բազան, ուսումնական գործընթացը, գիտությունը և հետազոտությունը, արտաքին կապերը և միջազգային համագործակցությունը: Առանցքային ցուցանիշների համեմատությունը վկայում է, որ միջինում ցուցանիշները պահպանվել են:

Համալսարանի ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման վրա դրական են ազդել կառավարման համակարգի ապակենտրոնացման քայլերը, գիտաշխատախմբերի ֆինանսավորումը, միջազգային վարկանիշ ունեցող գիտական շտեմարաններում Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հոդվածների աճող քանակը, հետազոտական գործունեության արտահայտվածության աճը ուսումնական գործընթացում, աշխատողների խրախուսման նոր մոդելների ներդրումը, ներքին և արտաքին շահակիցների վերապատրաստումների նոր համակարգերի ներդրումը, որակի ապահովման համակարգում արտաքին և ներքին շահակիցների մասնակցայնության աճը, DeSire նախագիծը, արտաքին շահակիցների հետ համաֆինանսավորմամբ նոր կենտրոնների բացումը և շահագործումը, փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային ինքնաշխատ համակարգի ներդրումը, աշխատակիցների առողջության ապահովագրումը:

Հիմնականում ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակների իրականացմանը խոչընդոտում են ֆինանսական և դրանով պայմանավորված՝ նյութատեխնիկական ռեսուրսները: Համալսարանում 2022 թ. ներդրվել է ձեռնարկատիրական գործունեության կարգ, որն ուղղված է խթանելու ֆինանսական նոր մուտքեր:

Եթե ներքին ազդեցության գործոնները Համալսարանի կառավարմանը կարող են ենթարկվել, ապա արտաքին ազդեցության սոցիալ-տնտեսական գործոնները հիմնականում դուրս են գտնվում Համալսարանի վերահսկողությունից և բացասական ազդեցության պարագայում կարող են առավել սուր արտահայտվել: Այսպես, մարզի աղքատության ցուցանիշները, որոշ մասնագետների (հատկապես՝ մանկավարժներ) աշխատավարձի հարաբերական ցածր լինելը և աշխատանքի անընդհատ բարդացումը, աշխատաշուկայի կուտակումը մայրաքաղաքում (մասնագիտական աշխատանքի հայտարարությունների ուսումնասիրությունը վկայում է, որ թափուր աշխատատեղերի գրեթե 90 տոկոսը մայրաքաղաքում են) և հետևաբար՝ նաև ներքին արտագաղթի միտումները, աշխատաշուկայում մասնագիտությունների բևեռացումը (թափուր աշխատատեղերի հայտարարությունների գրեթե 80 տոկոսը վերաբերում են SS ոլորտի մասնագետներին) լուրջ խնդիրներ են առաջացնում մարզային բուհերի համար: Նման խնդիրները հնարավոր է լուծել միայն պետական ուղղորդված քաղաքականության արդյունքում: Արտաքին ազդեցության գործոններից համավարակը և պատերազմը առավել լուրջ բացասական ազդեցություն ունեցան Համալսարանի գործունեության վրա: Վերոնշյալ ազդեցության

գործոնները հապաղեցին Համալսարանի ռազմավարական ծրագրի կատարողականի ապահովումը: Համալսարանը համապատասխան նախարարություններից ստացվող հրահանգների հիման վրա այդ ընթացքում ապահովել է օպերատիվ կառավարում և ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները կրթական գործընթացի շարունակականության ապահովման համար:

Համալսարանը որպես ազդեցության գործոն ուշադրության կենտրոնում է պահում նաև մրցակից ՄՈՒՀ-երին: Այսպես, Համալսարանի որակի ապահովման կենտրոնի կողմից մարզային դպրոցներում իրականացված հարցումները ցույց տվեցին, որ պոստենցիալ դիմորդների այլ ՄՈՒՀ նախընտրությունը հիմնականում ԵՊՀ-ն, ՀԱՊՀ-ն, ԵՊԼՀ-ն են: Նախընտրած մասնագիտություններն են եղել «Թարգմանչական գործ», «Իրավաբանություն» և ՏՏ ոլորտի մասնագիտությունները: 2023-24 ուսումնական տարում Համալսարանը դադարից հետո կրկին ընդունելություն է իրականացրել «Թարգմանչական գործ» մասնագիտությամբ, ներդրել է «Ծրագրային ճարտարագիտություն» մագիստրոսական կրթական ծրագիրը: Համալսարանն իրավաբաններ չի պատրաստում, այլ իրավագետներ, և այդ մասնագիտությամբ սովորողների քանակը աճի միտում ունի: Հաշվի առնելով մագիստրոսական կրթության տևողության կրճատման միտումները ՀՀ-ում՝ Համալսարանն այժմ ունի մագիստրատուրայի 1,5 տարի տևողությամբ 8 կրթական ծրագիր:

Համալսարանը շարունակում է արտաքին քաղաքաիրավական դրական ազդեցության գործոն դիտարկել Բոլոնիայի գործընթացը և իր ռազմավարական նպատակների իրականացմամբ քայլ առ քայլ բարելավում և հարմարեցնում է Համալսարանի գործունեությունը պահանջվող չափանիշներին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. Քաղաքականության և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Հիմքեր	ՄՈՒՀ-ի կառավարման և վարչարարության որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը Քաղաքականության և ընթացակարգերի իրականացման սկզբունքները Քաղաքականության և ընթացակարգերի իրականացման մեխանիզմները Այլ հիմքեր և վերլուծություններ Որակի կառավարման համակարգի կանոնակարգ
--------	---

Վերլուծել որակի ապահովմանը նպաստող մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Նշել, թե ինչքանով են որակի ապահովման մեխանիզմները նպաստում շարունակական բարելավմանը:

Համալսարանում որակի կառավարման սկզբունքով են հաստատվում գործառնության հիմքեր հանդիսացող քաղաքականությունները, կարգերը, ընթացակարգերը.

Պլանավորում - Համալսարանի գործառնությունն ապահովող քաղաքականությունները, կարգերը ընթակարգերը մշակվում, վերանայվում, փոփոխվում են ներքին շահակիցների մասնակցայնության ապահովմամբ: Քաղաքականությունների, կարգերի, ընթացակարգերի մշակման, վերանայման, փոփոխման աշխատանքները համապատասխանաբար կա՛մ իրականացվում են գիտական խորհրդին կից, Համալսարանի ռեկտորին առընթեր

աշխատախմբերում, կամ Համալսարանի ռեկտորի հրամանով նպատակային ձևավորված աշխատախմբերում: Քաղաքականությունները, ընթացակարգերը, մինչև գիտական խորհրդի կողմից հաստատվելը, պարտադիր ուղղորդվում են ամբիոններում քննարկման, և առաջարկությունների ստացման դեպքում հանձնաժողովները կրկին վերանայում են, անհրաժեշտության դեպքում կատարում փոփոխություններ: Գիտական խորհրդի հերթական նիստից 3 օր առաջ գիտական խորհրդի կանոնակարգի համաձայն Համալսարանի ներքին շահակիցները կարող են գրավոր ներկայացնել իրենց առաջարկությունները, որոնք կրկին հաշվի են առնվում հանձնաժողովի կողմից:

Իրականացում - Համալսարանի ռեկտորը, պրոռեկտորները, պատասխանատու ստորաբաժանումները իրենց լիազորությունների շրջանակներում մշտադիտարկում են գործընթացների զարգացումը ըստ ակնկալվող արդյունքների, որոնք շարունակականության հիմք են հանդիսանում: Գործառնության որոշակի փուլում շահակիցների կողմից եկող արձագանքների, պետության վարած բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության համատեքստի փոփոխությունների, նոր առաջացող պահանջների և պայմանների և այլն հիման վրա կարող է պարզվել, որ ստացված և ակնկալվող արդյունքները չեն համապատասխանում առաջանում է վերանայման անհրաժեշտություն:

Գնահատում - Փոփոխության անհրաժեշտությունը դառնում է առավել առարկայական, երբ ստացված արդյունքները բացասական միտում ունեն, առանցքային գնահատման ցուցիչները չեն ստացվում (Համալսարանի 2021-25 թթ. ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի ցուցիչներ), շահակիցները բավարարված չեն, առաջացել են նոր կարիքներ (իրականացված հարցումների, ֆոկուս խմբային քննարկումների, փաստաթղթերի վերլուծության արդյունքներ): Հանձնաժողովների շրջանակներում ծավալվում են քննարկումներ պատճառահետևանքային շղթաները տարրորոշելու նպատակով: Քննարկումները կարող են ծավալվել և ընդգրկել ներքին և արտաքին շահակիցներից ներկայացուցիչների:

Բարելավում - Ընդհանուր քննարկումների ընթացքում պատճառահետևանքային շղթաների կառուցումը, SWOT վերլուծությունները, ռիսկերի գնահատումը, ռեսուրսների գնահատումը հնարավորություն են ընձեռում իրականացնել առավել արդյունավետ փոփոխություններ՝ ապահովելով բարելավում: Դրական կամ ակնկալվող արդյունքների ստացման պարագայում էլ բարելավումը դառնում է հնարավոր անհրաժեշտ ռեսուրսների առաջացման պարագայում:

Համալսարանում որակի կառավարման սկզբունքով են հաստատվել, օրինակ, դասալսումների անցկացման և քննարկման կազմակերպման կարգը, ուսանողների գիտելիքների գնահատման և արդյունքների բողոքարկման կարգը, պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և վերապատրաստման, ուսումնասօժանդակ և վարչական կազմի որակավորման բարձրացման ընթացակարգը, պրոֆեսորադասախոսական կազմի ծանրաբեռնվածության չափորոշիչները և այլն:

Որակի կառավարման սկզբունքը միանշանակ տարածվում է կրթական ծրագրերի վրա: Համալսարանում ներդրված է կրթական ծրագրերի մշակման և ներդրման ռազմավարություն, կրթական ծրագրերի մշակման և ներդրման, ներդրված ծրագրերի վերանայման ռազմավարության իրականացման ընթացակարգ, ուսումնական պլանների մշակման, հաստատման, մշտադիտարկման և գնահատման ընթացակարգ: Համալսարանում ներդրված է

նան որակի ապահովման ինքնագնահատման և վերանայման կանոնակարգ ու ընթացակարգ: Որակի կառավարման սկզբունքով է իրականացվում Համալսարանի 2021-25 թթ. ռազմավարական ծրագիրը՝ ի դեմս համապատասխան հանձնաժողովի աշխատանքների:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Հիմքեր	Մասնագիտությունների կրթական ծրագրերի գնահատման մեխանիզմները Այլ գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմները Տեղեկատվության հավաքագրման համակարգը Համապատասխան վերլուծություններ
--------	---

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների գնահատման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/

Մասնագիտական կրթական ծրագրերի գնահատումը իրականացվում է համալսարանում ներդրված կրթական ծրագրերի մշակման և ներդրման, ներդրված ծրագրերի վերանայման ռազմավարության իրականացման ընթացակարգի, ուսումնական պլանների մշակման, հաստատման, մշտադիտարկման և գնահատման ընթացակարգի, կրթական ծրագրերի ներքին առողիտի կազմակերպման ընթացակարգի համաձայն: Մասնագիտական կրթական ծրագրերը ընթացիկ ուսումնասիրման են ենթարկվում ամբիոնների կողմից՝ համաձայն Համալսարանի ամբիոնի կանոնակարգի: Ամբիոններն իրականացնում են կրթական ծրագրերի վերաբերյալ առաջավոր փորձի, մասնագետների պատրաստման որակի վերաբերյալ ուսումնասիրություններ: Համալսարանի որակի ապահովման կենտրոնը ամբիոնների կողմից կրթական ծրագրերի ընթացիկ ուսումնասիրություններ իրականացնելու համար մշակում, փորձարկում և ամբիոններին է տրամադրում հետադարձ կապի ապահովման տարբեր գործիքներ: Մասնագիտական կրթական ծրագրի շրջափուլի ավարտին Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի անմիջական վերահսկողությամբ ամբիոններն իրականացնում են կրթական ծրագրի ինքնավերլուծություն կամ ինքնագնահատում: Ինքնավերլուծությունն իրականացվում է ՈԱԱԿ-ի կողմից մշակված մասնագիտական կրթական ծրագրերի ինքնավերլուծության ձևաթղթի հիման վրա: Ինքնագնահատումն իրականացվում է Համալսարանի որակի ապահովման կենտրոնի կողմից մշակված կրթական ծրագրերի ինքնագնահատման մեթոդաբանության հիման վրա: Համալսարանի որակի ապահովման կենտրոնը ինքնավերլուծություն իրականացնող ամբիոններին աջակցում է խորհրդատվությամբ, տրամադրում տեղեկատվության հավաքագրման գործիքներ, ըստ անհրաժեշտության անցկացնում արտաքին և ներքին շահակիցների հետ քանակական և որակական հարցումներ և վերլուծությունները տրամադրում ամբիոններին: Արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածության ապահովմամբ մասնագիտական կրթական ծրագրերի ինքնավերլուծությունները հնարավոր են դարձնում կրթական ծրագրերի բարելավումը: Ամբիոնների վարիչները ինքնավերլուծությունները և

առաջարկությունները ներկայացնում են Համալսարանի գիտական խորհրդի նիստում: Ինքնավերլուծությանը հաջորդում է ուսումնական պլանների գնահատումը և փոփոխությունը: Այն իրականացվում է ամբիոնների և ուսումնամեթոդական հանձնաժողովի հետ համատեղ: Ուսումնական պլանները հաստատվում են գիտական խորհրդի նիստում:

Համալսարանի որակի ապահովման կենտրոնը պարբերաբար իրականացնում է կրթական ծրագրերի ընդհանրական գնահատում ըստ արտաքին և ներքին շահակիցների բավարարվածության և կարիքների վերհանման: Վերլուծությունները և շահակիցների կարծիքի հիման վրա ձևավորված առաջարկությունների նախագիծը որակի ապահովման կենտրոնի ղեկավարը ներկայացնում է գիտական խորհրդի նիստերում: Գիտական խորհրդի կողմից առաջարկությունների ընդունման դեպքում դրանք որոշման ուժ են ստանում և ուղարկվում հասցեատերերին՝ բարելավում ապահովելու նպատակով: Համալսարանի ՈԱԿ-ի կողմից համապատասխան գործիքակազմի մշակման և ներդրման միջոցով իրականացվում է նաև Համալսարանի կառավարման գործընթացի արդյունավետության, ուսումնաօժանդակ և վարչական աշխատակազմի բավարարվածության ուսումնասիրություն: Ստացված արդյունքները քննարկվում են Համալսարանի ռեկտորի, պրոռեկտորների, ստորաբաժանումների ղեկավարների հետ: Ուսումնասիրությունների ընթացքում հետադարձ կապն ապահովվում է առցանց և հարցաթերթիկային հարցումների, ֆոկուս խմբային քննարկումների, հարցազրույցների միջոցով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ է. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

Հիմքեր	<p>Հրապարակային տեղեկատվության տարածման քաղաքականությունը և ընթացակարգերը</p> <p>Հրապարակումների մատչելիությունը և օբյեկտիվությունը գնահատող մեխանիզմները</p>
--------	---

Վերլուծել ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված որակական և քանակական տեղեկատվության հրապարակումների գնահատման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համալսարանում ներդրված է համացանցային պաշտոնական կայքի և սոցիալական ցանցերի աշխատանքների կազմակերպման կարգ: Համաձայն կարգի՝ Համալսարանն ապահովում է իր կողմից իրականացվող կրթական գործընթացի թափանցիկություն և հրապարակայնություն: Համալսարանի <https://vsu.am/> կայքը տեղեկատվության հրապարակման հիմնական միջոցն է, որն ապահովում է արտաքին և ներքին շահակիցների իրազեկվածությունը Համալսարանի գործառնության վերաբերյալ: Համալսարանի կայքում տեղադրված են Համալսարանի հիմնական պաշտոնական փաստաթղթերը, առանձին մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն (ուսումնական պլան, դասընթացների տեղեկագիրք, դասընթացների մասնագիր, դասընթացների ուսումնամեթոդական փաթեթներ, դասընթացների համառոտ նկարագրիչներ): Համալսարանի կայքում պարտադիր տեղադրվում են նաև Համալսարանի ռեկտորի տարեկան հաշվետվությունը, ԳԱՅ-ը, ՈԱԿ-ի կողմից

իրականացված ուսումնասիրությունների արդյունքները:
 Համալսարանում ներդրված է ներքին ցանց, որը թափանցիկություն, հաշվետվողականություն է ապահովում ներքին շահակիցների միջև: Այն նաև դուրսացնում է ստորաբաժանումների միջև տեղեկատվության փոխանակման գործընթացը:

Հաշվի առնելով երիտասարդության նախընտրությունները՝ Համալսարանն օգտվում է նաև սոցիալական ցանցերից՝ ուսանողության համար Համալսարանի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի դարձնելու նպատակով:

Տեղեկատվության հրապարակումների գնահատումն իրականացվում է կայքի այցելությունների հաշվարկի և հարցադրումների քանակի, սոցիալական ցանցերի հետևորդների թվի մշտադիտարկման արդյունքում: Դա հնարավորություն է ընձեռում արագ արձագանքել առաջացող նոր պահանջներին և բարելավել հրապարակայնության միջոցները: Ուսանողների և դասախոսների բավարարվածությունը չափող հարցաթերթերում ներառված են նաև կայքի ինֆորմատիվության վերաբերյալ հարցեր:

Վերլուծել Չափանիշ 2-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ol style="list-style-type: none"> 1. Բարելավման պլանի համաձայն ՄՈՒՀ-ի կառուցվածքի վերակազմակերպում: 2. Կառավարման համակարգի ապակենտրոնացում: 3. Որոշումների կայացման գործընթացում ներքին շահակիցների ներգրավվածության քանակական աճ: 4. Վարչական և ուսումնասօժանդակ աշխատակազմի խրախուսման ներդրված նոր մոդել՝ հիմնված աշխատանքի արդյունավետության գնահատման վրա: 5. Կառավարման հետադարձ կապի ապահովում: 6. Աշխատակիցների առողջության և անվտանգության մասին հոգածություն: 7. Փաստաթղթաշրջանառության ներդրված ինքնաշխատ էլեկտրոնային համակարգ: 8. ՄՈՒՀ-ի բազմադրյուր ֆինանսավորման մեջ առաջընթաց: 	<ol style="list-style-type: none"> 1. Վարչական աշխատակազմի երիտասարդացման խնդիր: 2. Վարչական աշխատակազմի շրջանում կառավարման փորձառության զարգացման խնդիր: 3. Արտաքին շահակիցների թույլ ներգրավվածություն կառավարման գործընթացում: 4. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի թույլ ներգրավվածություն գիտելիքահեն ձեռներեցության կազմակերպման գործում:
Արտաքին հնարավորություններ	Վտանգներ
<ol style="list-style-type: none"> 1. ՀՀ բարձրագույն կրթության և գիտության մասին նոր օրենք: 2. Գործատուների և այլ արտաքին 	<ol style="list-style-type: none"> 1. Բազմադրյուր ֆինանսավորման դանդաղ զարգացում: 2. Տարածաշրջանային ոչ կայուն իրավիճակ:

<p>շահակիցների ներգրավման շարունակական ակտիվացում</p> <p>Համալսարանի կառավարման և վարչարարության գործընթացներում:</p> <p>3. Գիտելիքահեն ձեռներեցությանն ուղղված ՀՀ և միջազգային դրամաշնորհային ծրագրերի շահառու դառնալու հնարավորություններ:</p>	
--	--

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

- Համալսարանի՝ որպես երիտասարդների համար գրավիչ աշխատավայրի ապահովմանն ուղղված քայլերի ձեռնարկում:
- «Վարչարարների դպրոցի» զարգացում:
- Պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտելիքի առևտրայնացման հմտությունների և կարողունակությունների զարգացում:
- Ազգային և միջազգային նախագծերին, դրամաշնորհային ծրագրերին մասնակցության խթանում:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ԶԱՓԱՆԻՇ: *ՄԿԾ-երը համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:*

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիջիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիջիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Համալսարանի 2021-25 թթ. ռազմավարական ծրագրում ներկայացված խնդիրների լուծումը ուղղված է մասնագիտական կրթական շուկայում Համալսարանի մրցունակության բարձրացմանը և դիրքի ամրապնդմանը: Համալսարանը մասնագետներ է պատրաստում Որակավորման ազգային շրջանակի պահանջներին համապատասխան: Համալսարանի ռազմավարական ծրագիրը, հաշվի առնելով կրթական ծառայությունների մատուցման և նոր կրթական ծրագրերի մշակման աշխատաշուկայի պահանջները, նպատակաուղղված է կրթական տարբեր մակարդակներում բարձր որակավորում ունեցող մրցունակ մասնագետների պատրաստմանը: Ճկուն կրթական ծրագրերի մշակման և կիրարկման արդյունքում ապահովվել է կրթության բարձր որակ՝ աշխատաշուկայի համար բավարար հմտություններ և կարողություններ ունեցող մասնագետ պատրաստելու համար, ինչպես նաև նպաստել է շարժունությանը և միջազգայնացմանը:

Կրթական ծրագրերի նախագծման և վերանայման փուլերում առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) արդյունքում հնարավոր է դարձել կրթական

վերջնարդյունքների հստակ ձևակերպում, ուսանողների ակադեմիական գրագիտության, հետազոտական հմտությունների և կարողությունների կատարելագործում: Համալսարանի կրթական ծրագրերի մշակման, ներդրման և իրականացման գործընթացում ապահովվում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսանողների, գործատուների և այլ շահառուների ակտիվ մասնակցություն, ինչը նպաստում է համալսարանի ռազմավարական ծրագրի և նպատակների իրականացմանը:

<p>ՉՍՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:</p>
<p><u>Մասնագիտության կրթական ծրագրի նկարագիրը</u></p> <p><u>Մասնագիտության կրթական ծրագրի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման քաղաքականությունը, ընթացակարգերը և կատարված աշխատանքի հիմքերը</u></p>
<p><i>Վերլուծել ՄԿԾ-ում նշված ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչությունը հաստատության առաքելության հետ և համադրելիությունը պետական կրթական չափորոշիչների և Որակավորումների ազգային շրջանակի հետ:</i></p> <p>Վանաձորի պետական համալսարանը, կարևորելով կրթության ոլորտում տեղի ունեցող փոփոխությունները, շահառուների կարիքները լավագույնս բավարարելու, կրթության որակը և արդյունավետությունն էապես բարձրացնելու անհրաժեշտությունը, հետևողականորեն շարունակել է իր գործունեությունը մրցունակ մասնագետների պատրաստման և մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման ուղղությամբ: Համալսարանի կրթական ծրագրերը նպատակաուղղված են ուսանողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների, ինչպես նաև համալսարանի առաքելությամբ սահմանված որակների զարգացմանը:</p> <p>2022-2023 ուստարվա ընթացքում աշխատանքներ են տարվել բակալավրի առկա և հեռակա ուսուցման համակարգերի բազային <u>ուսումնական պլանների մշակման ուղղությամբ</u>: Ուսանողների, գործատուների, շրջանավարտների կարծիքների, պրակտիկաների անցկացման վերլուծությունների հիման վրա նախապատրաստվել են առաջարկություններ նոր ուսումնական պլանների ձևավորման նպատակով: Ամբիոններում ստեղծվել են հանձնախմբեր, որոնք իրականացրել են կրթական ծրագրերի ինքնավերլուծություն:</p> <p>Համալսարանի ՄԿԾ-ները համապատասխանեցվել են ՀՀ ՈԱՇ-ին և, հաշվի առնելով նախորդ փորձագիտական զեկույցում արված դիտարկումը, ՄԿԾ-ների փաթեթներում ներառվել են ՄԿԾ-ների և ՈԱՇ-ի համապատասխանության աղյուսակներ: Որակի ապահովման կենտրոնի կողմից ամբիոններին տրամադրվել է կրթական ծրագրերի ինքնագնահատման մեթոդաբանություն, որի հիման վրա իրականացվել է դասընթացների մակարդակում կրթական</p>

ծրագրի նպատակի իրականացման և վերջնարդյունքների ապահովման ուսումնասիրություն: Նոր ուսումնական պլանների ձևավորման գործում կարևորվել է ներքին և արտաքին շահառուների ակտիվ ներգրավվածությունը: Ապահովվել է գործատուների մասնակցությունը ուսումնական պլաններում նոր դասընթացների ներդրման, [պրակտիկաների](#) կազմակերպման և արդյունավետության բարձրացման, ՄԿԾ-ների պարտադիր և [կամրնտրական դասընթացների](#) ուսումնական ծրագրերի մշակման գործընթացում:

2021-2025 թթ. Համալսարանի ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանը ենթադրում է ՄԿԾ-ների մշտադիտարկում և շարունակական վերլուծություն: ՎՊՀ գիտական խորհրդի 2022 թ. սեպտեմբերի 23-ին տեղի ունեցած նիստում որոշում ընդունվեց 2022-2023 ուստարվա մագիստրոսի կրթական ծրագրով առկա ընդունելության մասնագիտությունների ցանկում ավելացնել 011401.09.7 «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա», 011301.04.7 «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ», 061102.01.7 «Ծրագրային ճարտարագիտություն» կրթական ծրագրերը: Ռեկտորի հրամանով ստեղծվել են աշխատանքային խմբեր՝ մագիստրոսական նշված մասնագիտությունների ուսումնական պլանների մշակման նպատակով: Ուսումնական պլանի մշակման գործընթացը իրականացվել է համապատասխան պրոֆեսորադասախոսական անձնակազմի, համալսարանի որակի բաժնի ներկայացուցչի, գործատուների, բակալավրիատի բարձր կուրսերի և մագիստրատուրայի ուսանողների հետ անցկացված քննարկումների, ֆոկուս խմբերի, կլոր սեղանների և հարցումների արդյունքում: Ուսումնական պլանները քննարկվել են ֆակուլտետային խորհրդում և ներկայացվել գիտխորհրդի հաստատմանը: Նոր կրթական ծրագրերի ընդհանրական և առարկայական կոմպետենցիաների և դրանց ցուցիչների մշակման համար հիմք են ծառայել ամբիոնների իրականացրած ինքնավերլուծությունները: Ներկայացված կրթական ծրագրերի վերջնարդյունքները համապատասխանում են աշխատաշուկայի պահանջներին, ինչն այսօր յուրաքանչյուր կրթական ծրագրի հիմնական նպատակներից է: Կրթական նոր ծրագրերի մշակման և ներդրման գործընթացում կարևոր է՝

- ա) ուսուցման նորագույն մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը,
- բ) գիտելիքի և փորձի, կարողությունների և հմտությունների ձևավորումն՝ ըստ աշխատաշուկայի պահանջների,
- գ) պահանջված կոմպետենցիաների համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը, տվյալ դեպքում՝ դասախոսական կազմի, ենթակառուցվածքների, տեղեկատվական ռեսուրսների որակի և քանակի, նյութատեխնիկական բազայի՝ սպորտդահլիճների, մարզասրահների, լաբորատորիաների, համակարգչային լսարանների:

Նոր ներդրված կրթական ծրագրերի վերջնարդյունքները համապատասխանում են որակավորումների ակնկալվող արդյունքներին և ընդհանուր առմամբ համահունչ են տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին: Մագիստրատուրայի մասնագիտությունների գծով դիմորդների թիվը մեծ չէ, հետևաբար բուհը պետք է բենչմարքինգի մշակված քաղաքականության իրականացման արդյունում շեշտադրում կատարի այնպիսի մասնագիտությունների վրա, որոնց պահանջարկը աշխատաշուկայում առկա է:

Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է մասնագիտությունների կրթական ծրագրերի առաջավոր փորձի համեմատական

վերլուծություն (բենչմարքինգ):

1. Երևանի պետական համալսարան
2. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ
3. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
4. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան
5. Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ
6. Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարան
7. Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարան
8. Ուրալի պետական համալսարան (Եկատերինբուրգ)
9. Յաշի Ալեքսանդրով Իոան Կուզա Համալսարան (Ռուսիա)
10. Դուբնի համալսարանական քոլեջ (Իռլանդիա)

ԶԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

[Ուսումնառության արդյունքները և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումները և մեթոդները \(Հավատարմագրման դիմում-հայտում ամրագրված 3 ՄԿԾ-ների համար\)](#)

Դասավանդման և ուսումնառության մոտեցումների և մեթոդների պարբերաբար արդիականացման քաղաքականությունը և ընթացակարգերը
 Դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման քաղաքականությունը և ընթացակարգերը
 Համապատասխան հիմքեր

Ուսումնառության արդյունքները	Դասավանդման մեթոդները	Ուսումնառության մեթոդները

ՄԿԾ-ով նախատեսված դասընթացների և ուսումնառության ակնկալվող արդյունքների (ՈւԱ) համապատասխանությունը (անհրաժեշտության դեպքում ավելացնել տողերը և սյունները)

Դասընթացի անվանում	ՈւԱ1	ՈւԱ2	ՈւԱ3	ՈւԱ4	ՈւԱ5	ՈւԱ6	ՈւԱ7	ՈւԱ8
--------------------	------	------	------	------	------	------	------	------

[Վերլուծել ՄԿԾ-ներում նշված դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:](#)

Կրթական ծրագրի մշակումը սկսվում է ծրագրի նպատակների սահմանումից, որին հաջորդում է ծրագրի կրթական վերջնարդյունքների ձևակերպումը: Այնուհետև որոշվում են գնահատման այն ձևերը, որոնք հնարավորություն կտան ուսանողներին դրսևորելու ձեռք բերած կրթական վերջնարդյունքները, ապա համարժեք կերպով չափելու դրանք: Հաջորդ քայլը ուսանողների համար առավել արդյունավետ ուսումնառության և դասավանդման մեթոդների ընտրությունն է: Դասավանդման և ուսումնառության մեթոդները ՄԿԾ-ներում նկարագրված են, սակայն առկա չէ նշված մեթոդների ընտրության և բարելավման հստակ քաղաքականություն և ռազմավարություն: Փորձագիտական զեկույցի շրջանակում կատարված

դիտարկումների արդյունքում բուհում դասավանդման և ուսումնառության ուսանողակենտրոն միջավայրի ապահովման ուղղությամբ ամբիոնների կողմից նախանշվել են ուղեցույցի մշակման սկզբունքներ, որոնք ներկայումս մշակման փուլում են: Ըստ նախանշվող քայլերի՝ պատշաճ կրթական ծրագիր կազմելու տեսանկյունից վճռորոշ նշանակություն ունի ծրագրի կառուցման հետևյալ երեք հանգուցային տարրերի փոխհամաձայնեցվածությունը.

1. ծրագրի ակնկալվող կրթական վերջնարդյունքները,
2. ուսումնառության և դասավանդման մեթոդները, որոնք նախատեսված են ուսանողի կողմից այդ վերջնարդյունքները հաջողությամբ ձեռք բերելու համար,
3. գնահատումը, որը որոշում է այդ վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը:

Ծրագրի մշակման գործընթացում այս երեք ասպեկտները դիտարկվում են համատեղ, այսինքն՝ պլանավորված ուսումնառության և դասավանդման ձևերը կապակցվում են ծրագրի կրթական վերջնարդյունքների հետ և առավելագույնս օժանդակում են ուսանողի կողմից այդ վերջնարդյունքների ձեռքբերմանը: Միաժամանակ, յուրաքանչյուր կրթական վերջնարդյունքի ձեռքբերում գնահատվում է այնպիսի մեթոդներով, որոնք ուսանողին դրանք դրսևորելու հնարավորություն են տալիս: Ուսումնառության գործընթացի զարգացումը պայմանավորված է կրթական ծրագրում ուսումնառության, դասավանդման և գնահատման մոտեցումների սահմանմամբ: Այս տեսակետից կապը կրթական վերջնարդյունքների, ուսումնառության, դասավանդման և գնահատման միջև երաշխիք է այն բանի, որ դասավանդման և գնահատման մոտեցումները և ընդհանրապես ուսումնառության միջավայրը համապատասխանում են կրթական ծրագրի բուն նպատակին, հնարավորություն տալիս ուսանողին ձեռք բերելու կրթական ծրագրում նախատեսվող կրթական վերջնարդյունքները: «Հոգեբանություն», «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» և «Պատմություն» կրթական ծրագրերի դասընթացների ծրագրում ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացում ընտրվել են դասավանդման /ուսումնառության/ այնպիսի մեթոդներ, որոնք օժանդակում և խրախուսում են ուսանողին՝ ձեռք բերելու կրթական ծրագրով նախատեսված կրթական վերջնարդյունքները, ինչպես նաև որոշվում են այն ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են այդ նպատակի իրականացման համար: Կարևորվում է նաև ուսանողների ինքնուրույն ուսումնառության խրախուսումը՝ որպես կրթական ծրագրի յուրաքանչյուր մակարդակի հաջող հաղթահարման նախապայման: Կրթական ծրագրի վերանայումը համակարգված շարունակական գործընթաց է, որը ենթադրում է կրթության ոլորտում առաջավոր փորձի, նոր գաղափարների որոնում, փոխառում և տեղայնացում, ինչը նպաստում է ուսումնառության գործընթացի կատարելագործմանը և բուհի առաքելության իրականացմանը:

ՉՍՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Հիմքեր [Ուսանողների գնահատման քաղաքականությունն ու ընթացակարգերը](#)
Ուսումնառության արդյունքներին համապատասխան սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները
[Ակադեմիական ազնվության քաղաքականությունը, ընթացակարգերը, ինչպես նաև հիմքեր ապահովող փաստաթղթերը](#)

<p>Գնահատման մոտեցումների առաջավոր փորձի համեմատական վերլուծությունը Ուսումնառողների գնահատման քաղաքականության վերանայման հիմքերը և արդյունավետությունն ապահովող մեխանիզմները Ակադեմ.կրեդիտների կուտակման և փոխանցման ուս.գործընթացի կազմակերպման կանոնակարգ</p>	
<p>Հավատարմագրման դիմում-հայտում ամրագրված 3 ՄԿԾ-ների համար ներկայացնել ուսումնառության արդյունքները և համապատասխան գնահատման մեթոդները</p>	
<p>Ուսումնառության արդյունք</p>	<p>Գնահատման մեթոդ</p>
<p><i>Վերլուծել ՄԿԾ-ներում նշված ուսանողների գնահատման և գրագողության դեմ պայքարի նախատեսված մոտեցումների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>ՄԿԾ-ների մշտադիտարկման արդյունքում իրականացվել է գործող գնահատման համակարգի արմատական վերլուծություն և վեր են հանվել այս ուղղությամբ առկա թերությունները: Գիտխորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի կողմից լրամշակվել և գիտխորհրդի քննարկմանն է ներկայացվել ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կանոնակարգը, որի նպատակը գնահատման համակարգում օբյեկտիվության և անկողմնակալության ապահովումն է՝ հաշվի առնելով ուսանողակենտրոն միջավայրի պահպանման սկզբունքը: Իրականացված փոփոխությունների արդյունքում համալսարանում գործում է բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝</p> <ol style="list-style-type: none"> 1. կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը 2. իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման: <p>Դասընթացների գնահատումը իրականացվում է հետևյալ կարգով՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Յուրաքանչյուր կիսամյակում ընթացիկ ստուգումների (ստուգարքների և քննությունների) անցկացման ժամկետները որոշվում են ըստ ուսումնական գործընթացի ժամանակացույցի: 2. Ընթացիկ ստուգարքների և քննությունների կազմակերպման, անցկացման և ամփոփման, ինչպես նաև ուսանողների վարկանիշների հաշվառման աշխատանքները կատարվում են համապատասխան դեկանատների կողմից: <p>Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների բնույթից, աշխատաձևավից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական կարողությունների և</p>	

հմտությունների ձևավորման գործում՝ դասընթացները, ըստ ամփոփիչ ստուգման կազմակերպման ձևի, առկա ուսուցման համակարգում ամփոփվում են.

1. ընթացիկ 2 քննությունով (4 և ավելի կրեդիտ ունեցող դասընթացներ, առավելագույն գումարային 40 միավոր),
2. ստուգարքով ավարտվող դասընթացների դեպքում ընթացիկ 2 ստուգումով (մինչև 4 կրեդիտ ունեցող դասընթացներ, առավելագույն գումարային 40 միավոր):

Բոլոր քննություններն առկա ուսուցման համակարգում անցկացվում են ընթացիկ 2 քննության միջոցով: Ընթացիկ քննությունների անցկացման եղանակը ամբիոնի որոշմամբ (մինչև ուսումնական տարվա սկիզբը) կարող է լինել գրավոր, բանավոր կամ թեստային՝ դասախոսի հիմնավորված առաջարկության հիման վրա: Տվյալ մասնագիտության դասընթացներից ուսանողների գիտելիքների, մասնագիտական կարողությունների և հմտությունների ստուգման ձևերն ամրագրվում են դասընթացի ուսումնամեթոդական փաթեթում: Որպես նախընտրելի տարբերակ դիտարկվում է ընթացիկ քննությունների գրավոր կազմակերպումը:

Համալսարանը հետևում է ակադեմիական ազնվության սկզբունքներին և երաշխավորում, որ սովորողները և դասավանդողները տեղեկացված են ակադեմիական ազնվության սկզբունքներին: Ակադեմիական ազնվությունը անհրաժեշտ է համալսարանի առաքելության և հիմնական նպատակների արդյունավետ իրականացման, ազնիվ և փոխադարձ վստահության մթնոլորտի ապահովման, դասական համալսարանական միջավայրի ձևավորման և որակյալ կրթական ծառայությունների մատուցման համար: Ընթացիկ ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը ուսանողներին տրամադրվում է նախապես: Ստուգումների ձևերը, հարցաշարերը, թեստային կամ այլ առաջադրանքները և ստուգումների անցկացման ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշները տեղադրված են բուհի կայքում: Գրավոր ստուգման դեպքում յուրաքանչյուր հարցի համար պետք է նշվի գնահատման առավելագույն միավորը, իսկ առաջադրանքի ծավալը պետք է համապատասխանի հատկացվող ժամանակահատվածին (ընթացիկ քննության համար՝ մինչև 120 րոպե): Գնահատման համակարգի արդյունավետությունը, առկա թերությունները վեր են հանվում կրթության որակի կենտրոնի կողմից անցկացվող ՄԿԾ-ների մշտադիտարկման ընթացքում, ինչպես նաև ուսանողների շրջանում անցկացվող հարցումների արդյունքում: Գնահատականի հետ անհամաձայնության դեպքում ուսանողները կարող են բողոքարկել այն՝ համաձայն Համալսարանում գործող կարգի: Փորձագիտական զեկույցի շրջանակում արված դիտողությունների քննարկման արդյունքում ՄԿԾ-ներում գնահատման ձևերը համապատասխանեցված են դասընթացի վերջնարդյունքներին: Ուսումնամեթոդական հանձնաժողովի կողմից լրամշակվել և Գիտխորհրդի քննարկմանն է ներկայացվել Ամփոփիչ ատեստավորման կարգը, ինչի արդյունքում վերանայվել են ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների բաշխման, դեկավարման, կազմակերպման պայմանները: Գնահատման գործընթացում ակադեմիական ազնվությունը պահպանելու և գրագողության դեմ պայքարելու նպատակով ՎՊՀ-ում գրավոր քննություններն անցկացվում են կնքված հատուկ տետրերում, բոլոր լուծարքներն ընդունում են քննական հանձնաժողովները, իսկ ամփոփիչ ավարտական քննությունները ձայնագրվում են:

Բուհում գործող ներքին համակարգի միջոցով հնարավոր է դարձել բացառել ավարտական

աշխատանքների թեմաների կրկնությունը: Ակադեմիական ազնվությունը սահմանվում է որպես հինգ հիմնարար արժեքների՝ ազնվության, վստահության, անկեղծության, հարգանքի և պատասխանատվության պահպանման պարտավորություն՝ անկախ իրավիճակից:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ղ. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:

Մասնագիտության կրթական ծրագրի տարանջատումը տեսական, գործնական բաղադրիչների:

Ուսումնառողի և շրջանավարտի կրթությունը շարունակելու և կարիերայի զարգացման հնարավորությունները արտացոլող համապատասխան փաստաթուղթը:

Հաստատության ներսում կամ տեղական ու միջազգային այլ հաստատությունների տվյալ կամ այլ մասնագիտության կրթական ծրագրերի հետ համահունչություն ստեղծելու քաղաքականություն:

[ՄԿԾ մշակման և ներդրման ռազմավարություն](#)

[ՄԿԾ ռազմավարություն](#)

[ՄԿԾ մշակման, ներդրման, վերանայման ռազմավարություն և ընթացակարգ](#)

[Ուսանողների և դասավանդող անձնակազմի շարժունության հնարավորությունները պարզաբանող հիմքեր:](#)

Ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և ուսանողների թվաքանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի ուսանողների փոխանակումն ու շարժունությունն ապահովող գործող համաձայնագրեր:

Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության շրջանակներում համալսարանը ունի 11 համալսարանի հետ շարժունության պայմանագիր, որոնց հետ իրականացնում է ուսանողների և աշխատակիցների շարժունություն համաձայն համալսարանում գործող «Ուսանողների, վարչական և պրոֆեսորադասախոսական աշխատակազմի շարժունության կանոնակարգ»-ի: 2019-2024թթ. համավարակով և վիզայի ձեռքբերման խոչընդոտների հետ կապված շարժունությանը մասնակցած ուսանողների և աշխատակիցների քանակը քիչ է եղել: Ընդհանուր առմամբ 2019-2024թթ. շարժունությանը մասնակցել են 18 ուսանող և 10 աշխատակից: Այդ ժամանակատվածում համալսարանը ընդունել է շարժունությամբ 9 դասախոս, որոնք նաև դասընթացներ են անցկացրել համալսարանի ուսանողների և դասախոսների համար:

Ուսանողների արտահոսք

	Երկիր, հաստատություն	2019-2020	2020-2021	2021-2022	2022-2023	2023-2024
1	Լեհաստան, Ադամ Միցկևիչի անվան	2				

	համալսարան					
2	Իսպանիա, Գրանադայի համալսարան	2	1	2		1
3	Գերմանիա, Դյուսելդորֆ, DAAD, լեզվի ամառային դասընթաց	2				
4	Պորտուգալիա, Պորտուի համալսարան		1	1		1
5	Էստոնիա, Տալլինի համալսարան		1			
6	Ռումինիա, Յաշի Բոհան Կուզայի անվան համալսարան				1	1
7	Գերմանիա, Բեռլին, DAAD				1	
8	Իսպանիա, Մալագայի համալսարան					1

Ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և դասավանդողների թվաքանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի դասավանդող անձնակազմի փոխանակումն ու շարժունությունը ապահովող գործող համաձայնագրեր:

Դասավանդողների ներհոսք

	Երկիր, հաստատություն	2019-2020	2020-2021	2021-2022	2022-2023	2023-2024
1	Գերմանիա, Ֆրիդրիխ Ալեքսանդրի անվան Նյուրնդերգ-Էրլանգենի համալսարան	1				
2	Պորտուգալիա, Պորտուի համալսարան	2		1	1	
3	Ռումինիա, Յաշի Ալեքսանդրու Բոհան Կուզայի անվան համալսարան				1	
4	Էստոնիա, Տալլինի տեխնոլոգիական համալսարան				1	
5	Պոզնանի Ադամ Միցկևիչ համալսարան					2

Դասավանդողների արտահոսք

	Երկիր, հաստատություն	2019-2020	2020-2021	2021-2022	2022-2023	2023-2024
1	Ուզբեկիստան, Ուրգենչի համալսարան	1				
2	Իսպանիա, Գրանադայի համալսարան		2		1	
3	Պորտուգալիա, Պորտուի համալսարան			1		1
4	Ռումինիա, Ալեքսանդրու Բոհան Կուզայի անվան Համալսարան				1	

5	Էստոնիա, Տալլինի տեխնոլոգիական համալսարան				1	
6	Իսպանիա, Սեվիլիայի համալսարան				1	
7	Իսպանիա, Մալագայի համալսարան					1

Վերլուծել և հիմնավորել մասնագիտության կրթական ծրագրերի բովանդակային հուսալիությունը, ՄՈՒՀ-ի և այլ հաստատությունների համապատասխան մասնագիտական ծրագրերի հետ համադրելիությունը, ինչպես նաև այդ մոտեցումների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանո՞վ է այն նպաստում ուսումնառողների ու դասավանդողների շարժունությանը:

Վանաձորի պետական համալսարանում իրականացվել է կրթական ծրագրերի բենչմարքինգ, ինչի իրականացման արդյունքում համադրվել են տարբեր բուհերի կրթական ծրագրերի արդյունավետությունը, հայտնաբերվել են խնդիրները, թույլ և ուժեղ կողմերը: Բենչմարքինգը կատարվել է փաստերի, կոնկրետ վերլուծությունների հիման վրա: Բուհում բավարար պայմաններ են ապահովվել համատեղ ծրագրերի, արտաքին և ներքին շահառուների պահանջների բավարարման, որակի կառավարման համակարգի ներդրման և զարգացման համար: Համալսարանը հաջողությամբ համագործակցում է ՀՀ և Միջազգային նախագծերի շրջանակներում ներգրավված բուհերի հետ: Համագործակցության արդյունքում բավարար պայմաններ են ապահովվում կրթական ծրագրերի համեմատական վերլուծության արդյունքում աշխատաշուկայում դրանց գրավչությունը բարձրացնելու նպատակով:

Կրթական ծրագրերի ուսումնական պլանների բոլոր կրթամասերում պարտադիր են կամընտրական դասընթացները, որոնց ընտրությունը կատարվում է համաձայն գործող կարգի: Կամընտրական դասընթացները հնարավորություն են տալիս ապահովել կրթական վերջնարդյունքների ամբողջական ձևավորում: Կամընտրական դասընթացները նպաստում են նաև ուսանողների շարժունության իրականացմանը՝ հնարավորություն տալով փոխանցել ակադեմիական շարժունության ծրագրերով արտերկրի գործընկեր բուհերում ձեռք բերած կրեդիտները այդ դասընթացներին հատկացրած կրեդիտների հաշվին: Կրթական ծրագրերի մոնիթորինգի արդյունքում հնարավոր է դառնում վերլուծել օտարերկրյա առաջատար բուհերում տվյալ ՄԿԾ-ին առնչվող նոր մոտեցումները, կատարվող փոփոխությունները, և անհրաժեշտության դեպքում նվազեցնել կրթական ծրագրերի միջև տարբերությունները: Արտերկրում ուսանողների ձեռք բերված կրեդիտների ճանաչման և հաշվառման հետ կապված ի հայտ են գալիս խնդիրներ, որոնք բխում են ՄԿԾ-ների տարբերություններից: Այդ խնդիրների հաղթահարումը շարունակական գործընթաց է՝ հիմնված ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործում բենչմարքինգի կիրառման: Դուբլինյան նկարագրիչների և որակավորումների ազգային շրջանակի պահանջներին ՄԿԾ-ների վերջնարդյունքների համապատասխանեցման արդյունքում փորձ է արվում լուծել ի հայտ եկած խնդիրները:

ՉՍՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

Շահակիցների կարիքները հաշվի առնող ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման հաստատված քաղաքականությունը
[Արտաքին և ներքին շահակիցների կարիքների ուսումնասիրության մեթոդները](#)
[Մասնագիտությունների կրթական ծրագրերի պարբերաբար գնահատման քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները \(կցել կամ հղում կատարել համապատասխան կանոնակարգին\)](#)
 Մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման և [վերանայման ընթացակարգը](#) (կցել կամ հղում կատարել համապատասխան փաստաթղթին)
[Գործընթացների անաչառությունն երաշխավորող մեխանիզմները](#) (հղում կատարել կամ կցել կանոնակարգը)
[ՄԿԾ ներքին աուդիտի կազմակերպման ընթացակարգ](#)

Վերլուծել ՄԿԾ-ի մշտադիտարկման, գնահատման և վերանայման մեխանիզմները և դրանց արդյունավետությունը:

Կրթական ծրագրի վերանայումը համակարգված շարունակական գործընթաց է, որը ենթադրում է կրթության ոլորտում առաջավոր փորձի, նոր գաղափարների որոնում, փոխառում և տեղայնացում, ինչը նպաստում է ուսումնառության գործընթացի կատարելագործմանը և բուհի առաքելության իրականացմանը: Նախորդ փորձագիտական զեկուցի դիտարկումների արդյունքում բուհում վերանայվել են ՄԿԾ-ների մշտադիտարկման և աուդիտի իրականացման գործընթացները բակալավրիատի համար չորս, մագիստրատուրայի համար երկու տարվա ցիկլով: Արդյունքում մշակված նոր ուսումնական պլաններում կատարվել են նպատակային փոփոխություններ կապված կամընտրական առարկաների կրեդիտների փոփոխության, գործնական և սեմինար պարապմունքների ժամաքանակների ավելացման, նոր դասընթացների ներդրման հետ, մագիստրատուրայի և բակալավրիատի ուսումնական պլաններում բակալավրիատում մեկ կրեդիտը համապատասխանեցվել է 14 ժամի, մագիստրատուրայում՝ 10-12 ժամի: Նշված փոփոխությունները կատարվել են ՄԿԾ-ների մշտադիտարկման և աուդիտի իրականացման գործընթացում գործատուների անմիջական մասնակցության ապահովման պայմաններում՝ աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համապատասխան մասնագետներ պատրաստելուն պատակով: Նախորդ փորձագիտական զեկույցում արձանագրվել էր մշտադիտարկման գործընթացում արտաքին շահակիցների պասիվ մասնակցություն: Ներկայումս ՄԿԾ-ների ինքնավերլուծության իրականացման գործընթացում ապահովվել է գործատուների, արտաքին շահակիցների ակտիվ ներգրավվածություն:

Հիմք ընդունելով 2021-2025 թթ. համալսարանի ռազմավարության ամրագրված գերակա ուղղությունները և աշխատաշուկայի պահանջները՝ ՎՊՀ-ում ներկայումս առկա ուսուցման համակարգում ներդրված է բակալավրի 25 կրթական ծրագիր և մագիստրատուրայի 15 կրթական ծրագիր, հեռակա ուսուցման համակարգում ներդրված է բակալավրի 20 կրթական ծրագիր և մագիստրոսական 1 կրթական ծրագիր՝ «Մանկավարժության բակալավր

(մագիստրոս)» և «Մասնագիտության բակալավր (մագիստրոս)» որակավորումներով: ՄԿԾ-ների արդիականացման համար հիմք են հանդիսացել ՀՀ պետական կրթական չափորոշիչները (առկայության դեպքում), Դուբլինյան նկարագրիչները, ՀՀ որակավորման ազգային շրջանակի պահանջները, TUNING մեթոդաբանության հիմնարար սկզբունքները և մոտեցումները՝ բոլոր շահառուների մասնակցությամբ կազմակերպվող ֆոկուս-խմբերի կողմից ձևակերպված պահանջների և առաջարկների հաշվառմամբ: Բոլոր ՄԿԾ-ները մշտադիտարկման փուլում ենթարկվում են համեմատական վերլուծության (բենչմարքինգի)՝ համաձայն գործող կարգի: ՄԿԾ-ների վերջնարդյունքները (կոմպետենցիաները) ձևակերպված են՝ համաձայն տվյալ կրթական մակարդակին ներկայացվող որակավորման ազգային շրջանակի պահանջների՝ հաշվի առնելով նաև միջազգային փորձը: ՄԿԾ-ների ուսումնական պլաններում ընդգրկված դասընթացների ուսումնամեթոդական փաթեթների (ԴՈԻՓ) մշակումը իրականացվել է՝ համաձայն համապատասխան ձևաչափի: ՄԿԾ-ների փաթեթները և մասնագիտությունների տեղեկագրքերը տեղադրված են ՎՊՀ կայքում <https://vsu.am/bakalavri-himnakan-krtakan-cragrer/>, <https://vsu.am/magistrosi-himnakan-krtakan-cragrer/> :

Կրթական ծրագրերի արդիականացման և վերանայման գործընթացը էականորեն բարելավել է մատուցվող կրթական ծառայությունների որակը: Հիմնականում հաջողվել է հետևողականորեն շարունակել աշխատանքը դասավանդման որակի բարձրացման, կրթական գործընթացների բարելավման և մի շարք այլ ուղղություններով: Համալսարանի կողմից իրականացված կրթական ծրագրերի շարունակական բարելավմանն ուղղված գործունեությունը բխում է Համալսարանի 2021-2025 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանից և դրանից բխող միջոցառումների ծրագրում նախանշված ռազմավարական խնդիրներից և համապատասխան գործողություններից: Ամբիոնների կատարած աշխատանքների արդյունքում՝

. Համալսարանի ՄԿԾ-ների վերջնարդյունքները համապատասխանում են ՀՀ կառավարության 2011 թ. մարտի 31-ի N 332-ն որոշումով հաստատված ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի համապատասխան որակավորումներին,

- Համալսարանի ՄԿԾ-ները ամբողջական են և դրանք ներմուծված են համալսարանի կողմից մշակված ձևաչափի մեջ,
- Համալսարանի ՄԿԾ-ները ուղղված են վերջնարդյունքների ձեռքբերմանը,
- Համալսարանի ՄԿԾ-ների վերանայման գործընթացը իրականացվել է գործատուների և շրջանավարտների ակտիվ ներգրավվածությամբ:

Կրթական ծրագրի գնահատման կարևոր նախապայման է ուսանողի՝ կրթական ծրագրով սահմանված մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացման համար: Կրթական ծրագրերի մշակման գործընթացի կարևոր փուլերից է կրթական ծրագրերի վերանայմանը և մշտադիտարկմանը ներկայացվող ինստիտուցիոնալ և արտաքին պահանջների ձևավորումը: Կարևոր է կրթական ծրագրի մաս կազմող առանձին դասընթացների շարունակական պահանջարկվածությունը, կրթական ծրագրի բովանդակության և կառուցվածքի շարունակական գնահատումը ծրագրի հիմնական շահակիցների կողմից: Ապահովվում են կրթական ծրագրի մշտադիտարկման համար

անհրաժեշտ ռեսուրսները՝ համապատասխան դասախոսական կազմ, կրթական ծրագրի մշտադիտարկմանը հատկացվող նյութական միջոցները՝ գրադարանային ֆոնդ, տեխնիկական միջոցների ներգրավվածություն:

Նկարագրել վերջին 5 տարիների ընթացքում մասնագիտության կրթական ծրագրի վերանայման շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքները և դրանց հիման վրա իրականացրած բարելավումները:

Վանաձորի պետական համալսարանի 2021-2025 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանով նախատեսվում են հստակ նախագծված միջոցառումներ, որոնք ուղղված են բարձր որակավորում ունեցող և մրցունակ մասնագետների պատրաստման գործընթացների ապահովմանը: Այդ նպատակով քայլեր են իրականացվել կրթական ծրագրերի արդիականացման ուղղությամբ՝ հաշվի առնելով փոփոխվող աշխատաշուկան և եվրոպական կրթական չափանիշները: Համալսարանի 2021-2025 թթ. ռազմավարական ծրագիրը նախատեսում է ՄԿԾ-ների մշակման, ստուգման, հաստատման, ներդրման, վերանայման քաղաքականության մշակմանն ուղղված միջոցառումների ծրագիր, որով նախատեսվում է կատարել ՄԿԾ-ների արտաքին գնահատում՝ հիմնված գործընկերային գնահատման վրա՝ թափանցիկության և օբյեկտիվության բարձրացման նպատակով: Կրթական ծրագրերի արտաքին գնահատումը հիմք է հանդիսանում նրա բաղադրիչների որակի բարելավման և որակի ապահովման մշակույթի ձևավորման համար: Համալսարանում գործում են մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, ներդրման, հաստատման կանոնակարգեր և ընթացակարգեր:

Կրթական ծրագրերի հաստատման և վերանայման գործընթացների անկախության և օբյեկտիվության համար կարևորվում է արտաքին փորձաքննությունը, որն էական լծակ է ծրագրերի որակի նկատմամբ հասարակության վստահության բարձրացման համար: Արտաքին փորձաքննությունը հավաստում է, որ կրթական ծրագիրը ձևավորված է, հաստատված կամ վերանայված է անկախ փորձագետի մասնակցությամբ՝ դրանով իսկ ապահովելով գործընթացների թափանցիկությունը և սահմանված չափանիշների պահպանումը: Համալսարանի 2021-2025 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանով նախատեսվում է կատարել ՄԿԾ-ների արտաքին գնահատում՝ հիմնված գործընկերային գնահատման վրա: Նշված գործընթացի իրականացնելու նպատակով Համալսարանի մասնագիտական ամբիոնները պետք է իրականացնեն հետևյալ քայլերը:

1. Իրականացնել ՄԿԾ-ների չափանշում՝ հաշվի առնելով տվյալ բնագավառի լավագույն կրթական հաստատությունների համապատասխան ՄԿԾ-ները,
2. ներգրավել արտաքին շահակիցներին ՄԿԾ-ների գնահատման գործընթացում,
3. անցկացնել հարցումներ արտաքին և ներքին շահակիցների շրջանում՝ կրթական ծրագրերը և ուսումնական պլանները ավելի ճկուն դարձնելու նպատակով,
4. վերլուծել և ճշգրտել ՄԿԾ-ների վերաբերյալ անցկացված հարցումների արդյունքները՝ հաշվի առնելով ներքին և արտաքին շահակիցների պահանջները և կարծիքները,
5. Իրականացնել ՄԿԾ-ի իրականացման և կրթական վերջնարդյունքների ապահովման գործընթացներում հետադարձ կապի և այլ գործոնների հաշվառման ու ազդեցության

գնահատում:

Համալսարանի մասնագիտական ամբիոնների կողմից ներկայացվել են մասնագիտական կրթական ծրագրեր՝ արտաքին կարծիքի ուղարկելու նպատակով: Պաշտոնական գրություններ են ուղարկվել հանրապետության համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ կրթական ծրագրերի վերաբերյալ կարծիքներ ներկայացնելու նպատակով: Արտաքին գրախոսման են ուղարկվել Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա, Հոգեբանություն, Իրավագիտություն, Կառավարում, Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ, Կերպարվեստ, Երաժշտական կրթություն մասնագիտությունների կրթական ծրագրերը: Գործընկերային գնահատման վրա հիմնված ՄԿԾ-ների արտաքին գնահատում իրականացնելու նպատակով Համալսարանը համագործակցության առաջարկով դիմել է Գորիսի պետական համալսարանին, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղին:

Կրթական ծրագրերի ինգնագնահատումը իրականացվել է Որակի ապահովման կենտրոնի կողմից ամբիոններին տրամադրված մեթոդաբանության հիման վրա: Կատարվել է դասընթացների մակարդակում կրթական ծրագրի նպատակի իրականացման և վերջնարդյունքների ապահովման ուսումնասիրություն՝ ներքին և արտաքին շահառուների, ինչպես նաև գործատուների ակտիվ ներգրավվածությամբ: Ամբիոններում ստեղծվել են հանձնախմբեր, որոնք իրականացրել են կրթական ծրագրերի ինքնավերլուծություն: Համալսարանի կրթական ծրագրերը համապատասխանեցվել են աշխատաշուկայի պահանջներին, համադրելի են այլ բուհերի նույնանման ծրագրերի հետ, ինչի արդյունքում ապահովվել է ուսանողների շարժունությունը և կրթական վերջնարդյունքների ճանաչումը:

2022-2023 ուստարվա ընթացքում աշխատանքներ են տարվել բակալավրի առկա և հեռակա ուսուցման համակագերի բազային ուսումնական պլանների մշակման ուղղությամբ: Ուսանողների, գործատուների, շրջանավարտների կարծիքների, պրակտիկաների անցկացման վերլուծությունների հիման վրա նախապատրաստվել են առաջարկություններ նոր ուսումնական պլանների ձևավորման նպատակով: Կրթական ծրագրերի ինքնավերլուծության արդյունքում ուսումնական պլաններում ներդրվել են նոր դասընթացներ, աշխատանքներ են տարվել պրակտիկաների կազմակերպման և արդյունավետության բարձրացման, ՄԿԾ-ների պարտադիր և կամընտրական դասընթացների ուսումնական ծրագրերի մշակման գործընթացի բարելավման ուղղությամբ: Կրթական ծրագրերի ուսումնական պլանների մշակման գործընթացը իրականացվել է համապատասխան պրոֆեսորադասախոսական անձնակազմի, համալսարանի որակի բաժնի ներկայացուցչի, գործատուների, բակալավրիատի բարձր կուրսերի և մագիստրատուրայի ուսանողների հետ անցկացված քննարկումների, ֆոկուս խմբերի, կլոբ սեղանների և հարցումների արդյունքում: Կրթական ծրագրերի վերջնարդյունքները համապատասխանում են աշխատաշուկայի պահանջներին: Կրթական ծրագրերի վերանայման գործընթացում կարևորել ենք՝

ա) ՄԿԾ-ների մշտադիտարկման անցկացում, տվյալների ամփոփում, SWOT-վերլուծություն՝ բենչմարքինգի կիրառմամբ, աշխատաշուկայում տվյալ մասնագիտությամբ մասնագետների

կարիքների վերհանում,

բ) մշտադիտարկման տվյալների ներկայացում ֆակուլտետային գիտխորհրդում ՄԿԾ-ի վերանայման անհրաժեշտությունը որոշելու համար, գիտելիքի և փորձի, կարողությունների և հմտությունների վերաձևակերպում՝ ըստ աշխատաշուկայի նոր պահանջների,

դ) ՄԿԾ-ի ներքին փորձաքննության իրականացում, առանձին դեպքերում ՄԿԾ-ի փաթեթի ներկայացում արտաքին փորձաքննության, փորձաքննության եզրակացության քննարկում,

ե) պահանջված կոմպետենցիաների համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովվածություն, տվյալ դեպքում՝ դասախոսական կազմի, ենթակառուցվածքների, տեղեկատվական ռեսուրսների որակի և քանակի, նյութատեխնիկական բազայի՝ սպորտդահլիճների, մարզասրահների, լաբորատորիաների, համակարգչային լաբարանների:

Վերլուծել Չափանիշ 3-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>1. Համալսարանի ՄԿԾ-ների համապատասխանություն Համալսարանի ռազմավարական նպատակներին,</p> <p>2. Համալսարանի վերջնարդյունքները համապատասխանում են ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի պահանջներին:</p> <p>3. Համալսարանում ներդրված են ՄԿԾ-ների մշակման, հաստատման, ներդրման, վերանայման քաղաքականություն և ընթացակարգեր</p> <p>4. Բարելավվել են ուսանողների գիտելիքների ստուգման մեխանիզմները:</p> <p>5. Կրթական ծրագրերի ինքնավերլուծության արդյունքում վերանայվել են ուսումնական պլանները, ներդրվել են նոր դասընթացներ:</p> <p>6. Համալսարանի 7 կրթական ծրագրեր ներկայացվել են արտաքին կարծիքի:</p> <p>7. Աշխատաշուկայի պահանջներին արագ արձագանքելու նպատակով 8 մագիստրոսական կրթական ծրագրեր իրականացվում են 1.5 տարով:</p>	<p>1. Աշխատաշուկայի ոչ հստակ պահանջարկի ձևավորման պատճառով համալսարանի կրթական ծրագրերի արագ արձագանքման խնդիր:</p> <p>2. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ավագ սերնդի անդամների կողմից նորարարական դասավանդման մեթոդների ոչ բավարար կիրառում:</p>

Արտաքին հնարավորություններ	Վտանգներ
<p>1. ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ստեղծում և ներդրում, այդ չափորոշիչների հիման վրա ՄԿԾ-ների վերանայում:</p> <p>2. ՀՀ տնտեսական զարգացման տեմպերի արագացման արդյունքում Համալսարանի ՄԿԾ-ների նկատմամբ հետաքրքրության աճ:</p> <p>3. ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացում գործատուների ներգրավման հնարավորությունների ընդլայնում:</p>	<p>1. Աշխատաշուկայի ոչ հստակ ձևակերպված պահանջներ:</p> <p>2. Բարձրագույն կրթության նկատմամբ հետաքրքրության նվազում:</p> <p>3. Հանրապետության այլ բուհերի կողմից միննույն կրթական ծրագրերի իրականացման պատճառով աճող մրցակցություն:</p> <p>4. Կրթության և գիտության ոլորտում աշխատելու հետաքրքրության նվազում:</p>

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

- Ուսումնասիրել ՀՀ աշխատաշուկայի քաղաքականությունը և պարզել մասնագետների առաջարկն ու պահանջարկը, համեմատական վերլուծության արդյունքներով բացահայտել ՀՀ կրթության շուկայի զարգացման միտումները և դրանց վրա ունեցած կրթական ծրագրերի կատարելագործման ազդեցությունը:
- Հետազոտել և ներդնել տեղական աշխատաշուկայի մասնագետներին ներկայացվող պահանջների համակարգը և դրանք կրթության ոլորտ տեղափոխելու մեթոդական ուղիներն ու մեխանիզմները, հիմնավորել գործատուների և աշխատաշուկայի պահանջների՝ մասնագիտական կրթական ծրագրերում ներառելու անհրաժեշտությունը:
- Մշակել և քայլեր իրականացնել ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու համար:
- Մշակել և ներդրել դասավանդման ուսումնառության մեթոդների արդիականացման ժամանակակից պահանջներին համապատասխան ուղիներ և մեխանիզմներ՝ կարևորելով դասավանդման և ուսումնառության մեթոդների համապատասխանեցումը ուսումնառության վերջնարդյունքներին:
- Դասավանդողների համար կազմակերպել կրթական ծրագրերի մշակման գործընթացին վերաբերող վերապատրաստումներ՝ համագործակցելով առաջատար բուհերի հետ՝ սահմանելով պարբերաբար գնահատման հստակ մեթոդներ:
- Մշակել և ներդրել արտաքին և ներքին շահակիցների կրթական պահանջմունքների ուսումնասիրման նոր արդյունավետ մեխանիզմներ:
- Բարելավել դասավանդման և ուսումնառության մեթոդների համապատասխանեցումը ուսումնառության վերջնարդյունքներին՝ կարևորելով այդ մեթոդների պարբերաբար արդիականացման անհրաժեշտությունը ապահովող մեխանիզմների մշակումը և ներդրումը:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Վանաձորի պետական համալսարանի ռազմավարական կարևոր խնդիրներից է ուսանողական կյանքի շրջափուլի բարելավումը: Նախատեսված են մի շարք միջոցառումներ, որոնք միտված են ուսանողների կյանքի շրջափուլի կառավարմանը, գնահատման տեղեկատվական համակարգի կատարելագործմանը՝ ռիսկերի գնահատման մեխանիզմների ներդրմամբ և կիրառմամբ, դիմորդների համար ընդունելության հավասար պայմանների ստեղծմանը, մատչելի միջավայրի ապահովմանը, Համալսարանում դիմորդների հավաքագրման շուկայավարական քաղաքականության, ուսանողների առաջընթացին նպաստող և կրթական ծառայությունների որակի բարձրացմանը միտված գործողությունների օժանդակմանը, ուսանողների շրջանում իրենց իրավունքների պաշտպանության վերաբերյալ աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, ուսանողների ինքնուրույն աշխատանքի դերի բարձրացմանը՝ ուսումնական գործընթացի նորովի և արդիական կազմակերպման ապահովման միջոցով: Այս ամենը ամրագրված է [«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2021-2025 թթ. ռազմավարական ծրագրում](#):

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:					
Հիմքեր	Ուսանողների հավաքագրման (մասնագիտական կողմնորոշման) քաղաքականությունը և ընթացակարգերը: Ուսանողների ընդունելության անցկացման քաղաքականությունը և ընթացակարգերը: Ընդունելության արդարությունը և թափանցիկությունն ապահովող ընթացակարգերը և հիմքերը: Յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրում ընդգրկված ուսանողների թիվը: Ընդունելության արդյունավետությունն արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ վերջին 3 տարիների համար: (տե՛ս 2.Կրթական գործունեություն)				
	Մագիստրատուրայի ընդունելության կարգեր Բարելավմանն ուղղված ծրագրեր:				
Ուսումնական հաստատությունում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:					
Ուսանողների թիվը	2019	2020	2021	2022	2023

Բակալավրի	առկա	1030	1039	1032	1074	1057
	հեռակա	829	673	536	516	497
Մագիստրոսի	առկա	124	124	105	85	94
	հեռակա	9	7	14	10	13
Հետազոտողի	Առկա ասպիրանտուրա	0	0	1	1	1
	Հեռակա ասպիրանտուրա	1	2	2	2	1
	հայցորդ	12	8	9	11	7
Ուսումնառողների շարժունությունը						
Ուսումնառողների շարժը վերջին 5 տարվա կտրվածքով						
Ուսանողների արտահոսք						
Հաստատություն/երկիր		2019	2020	2021	2022	2023
Հեռակա բակալավրիատ						
1	Կրասնոյարսկի Վ. Պ. Աստաֆևի անվան պետական մանկավարժական համալսարան /ՌԴ	1				
2	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան				1	
Առկա բակալավրիատ						
1	Տին. համալսարան Լիպեցկի մասն. /ՌԴ	1				
2	Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան	1				
3	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Վանաձորի մասնաճյուղ		1			
4	Երևանի պետական համալսարան		1	1		
5	Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան			1		
6	Կոստրոմայի պետական համալսարան /ՌԴ			1		
Ուսանողների ներհոսք						
Հաստատություն/երկիր		2019	2020	2021	2022	2023
Հեռակա բակալավրիատ						
1	Օրենբուրգի պետական համալսարան /ՌԴ	1				
2	Գորիսի պետական համալսարան			1		
3	Եվրոպական համալսարանի Վանաձորի մասնաճյուղ			1		
4	ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղ				1	
5	Արցախի Հանրապետության Գրիգոր Նարեկացի համալսարան				1	7
6	Արցախի Հանրապետության Մեսրոպ Մաշտոց					5

	համալսարան					
7	Արցախի պետական համալսարան					8
Առկա բակալավրիատ						
1	Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան	1		1		
2	ՀԱԱՀ		1			
3	Երևանի պետական համալսարան			1	1	
4	Երևանի «Գլաձոր» համալսարան			1		
5	Եվրոպական համալսարանի Վանաձորի մասնաճյուղ			3	1	
6	Հայ-ռուսական սլավոնական համալսարան				1	
7	Արցախի Հանրապետության Գրիգոր Նարեկացի համալսարան					4
8	Արցախի Հանրապետության Մեսրոպ Մաշտոց համալսարան					6
9	Արցախի պետական համալսարան					20
Առկա մագիստրատուրա						
1	Արցախի պետական համալսարան					1
Հեռացումներ և վերականգնումներ						
	Ուսանողների թիվ	2019	2020	2021	2022	2023
Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը						
1	Առկա բակալավրիատ	2.82% (29)	4.43% (46)	4.36% (45)	3.54% (38)	1.32% (14)
2	Հեռակա բակալավրիատ	7.84% (65)	6.84% (46)	6.72% (36)	5.62% (29)	1.61% (8)
3	Առկա մագիստրատուրա	1.61% (2)	6.45% (8)	2.86% (3)	5.88% (5)	1.06% (1)
4	Հեռակա մագիստրատուրա	11.1% (1)		7.14% (1)		
Վերականգնված ուսանողների տոկոսը/թիվը						
	Առկա բակալավրիատ	0.78% (8)	0.58% (6)	0.97% (10)	0.56% (6)	0.28% (3)
	Հեռակա բակալավրիատ	5.79% (48)	5.94% (40)	7.46% (40)	8.33% (43)	4.23% (21)
	Առկա մագիստրատուրա		0.81% (1)	0.95% (1)		
<i>Վերլուծել հաստատությունում գործող ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i>						

Դիմորդների հավաքագրման նպատակով յուրաքանչյուր ուսումնական տարում հանդիպումներ են իրականացվում մարզի տարբեր դպրոցներում, ՎՊՀ հենակետային վարժարանում, ՎՊՀ քոլեջում: 2020 թ. սկսած համալսարանում պարբերաբար կազմակերպվում է «Բաց դռների օր» միջոցառումը: Միջոցառման շրջանակներում դիմորդները, ծնողները հանդիպում են համալսարանի ռեկտորի, դեկանների, ընդունելության պատասխանատու քարտուղարի, ՎՊՀ հենակետային վարժարանի և քոլեջի տնօրենների, ինչպես նաև ուսանողների հետ: Հանդիպումների նպատակն է ապահովել մասնագիտական կողմնորոշումը բարձր դասարաններում սովորող աշակերտների շրջանում, տեղեկատվության տրամադրումը համալսարանի կրթական ծրագրերի և ծառայությունների, աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտությունների մասին:

2021 թ.-ից համալսարանում դպրոցականների մասնագիտական կողմնորոշման և դիմորդների հավաքագրման նպատակով կազմակերպվում է «Մասնագիտությունների տոնավաճառ» միջոցառումը: Միջոցառման ընթացքում առանձին տաղավարներով ներկայացվում են համալսարանի բոլոր մասնագիտությունները: Միջոցառումը դպրոցականներին օգնում է ճիշտ կողմնորոշվել և կատարել մասնագիտության ընտրությունը, ծանոթանալ համալսարանում իրականացվող կրթական ծրագրերին, մասնագիտությունների հնարավորություններին և հեռանկարներին:

Մասնագիտությունների, մասնավորապես բնական գիտությունների ոլորտի մասին տեղեկատվության տրամադրման նպատակով պարբերաբար կազմակերպվում են հետաքրքրաշարժ փորձերի ցուցադրում և բաց դասեր՝ 8-12-րդ դասարանների աշակերտների համար: Դիտարժան փորձերի ցուցադրումը նպաստում է հետաքրքրությունների խորացմանը, բարձրացնում է աշակերտների իրազեկվածության մակարդակը այդ ոլորտի մասնագիտությունների մասին:

Մասնագիտական կողմնորոշման աշխատանքների շրջանակներում յուրաքանչյուր տարի կազմակերպվում են դպրոցական օլիմպիադաներ Լոռու մարզի ավագ դպրոցների աշակերտների համար՝ հանրակրթական 13 առարկաներից, որոնց շնորհիվ մասնակիցները հնարավորություն են ստանում ծանոթանալ ուսումնառության պայմաններին, մասնագիտություններին, պրոֆեսորադասախոսական անձնակազմին:

Յուրաքանչյուր ուսումնական տարի՝ գարնանը և աշնանը, անցկացվում են ասմունքի մրցույթներ (նվիրված հայկական, ռուսական պոեզիային), գեղանկարչական և լուսանկարչական աշխատանքների մրցույթներ Լոռու մարզի դպրոցների 9-12-րդ դասարանների աշակերտների համար: Մրցույթները նպաստում են աշակերտների ստեղծագործական ընդունակությունների բացահայտմանը և մասնագիտության ճիշտ ընտրությանը, հայրենասիրական դաստիարակությանը:

2023 թ. անցկացվել է աշակերտների և ուսանողների համատեղ միջոցառում «Բիզնես պլան» խորագրով՝ համալսարանի «Ձեռներեցության և նորարարությունների զարգացման կենտրոնում» (SMART CAFFE)»: Հաղթող թիմերը պարգևատրվել են, և հնարավորություն է ընձեռվել շարունակելու նախագծի աշխատանքները համալսարանի «SMART CAFFE»-ում:

Յուրաքանչյուր ուսումնական տարում՝ սկսած հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներից մինչև մայիսը ներառյալ, կազմակերպվում են համալսարանի ընդունելության քննությունների

առարկայական անվճար դասընթացներ: Դասընթացների մեկնարկը տրվում է համալսարանի կայքի, ֆեյսբուքյան էջի և դպրոցներին տրամադրված տեղեկատվական նամակի միջոցով: Հիմնականում խմբեր ձևավորվում են «Հայոց լեզու», «Անգլերեն», «Մաթեմատիկա» և «Հայոց պատմություն» առարկաներից: Դասընթացների մասնակիցների և բուհ ընդունված դիմորդների թվաքանակի ամենամյա վերլուծությունը ցույց է տալիս, որ արդյունավետությունը միջինով ձգտում է մինչև 50 %: Դասընթացների արդյունքում ամրագրվել են նաև բարձր միավորներ, որոնցով դիմորդներն անվճար հիմունքներով ընդունվել են համալսարան:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա կատարած աշխատանքների, մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ կիրառված մեխանիզմների արդյունավետության գնահատման նպատակով կատարվել է ուսումնասիրություն և որոշակի վերլուծություն: Օլիմպիադաների մասնակիցների և աշակերտների հետ կազմակերպված հանդիպումների շրջանակներում դիմորդների հետ անցկացվել են բանավոր հարցումներ, իսկ առաջին կուրսի ուսանողների հետ՝ գրավոր հարցումներ: Արդյունքում նրանք կարևորում են պրոֆեսորադասախոսական կազմի, ՎՊՀ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումները՝ մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն տրամադրելու նպատակով: Իսկ ուսանողների (շահառուների) դիտարկմամբ հանդիպումները նպաստում են մասնագիտական կողմնորոշմանը, բուհի ընտրությունը, և նրանք առաջարկում են հաճախակի կազմակերպել հանդիպումներ, ինչպես նաև կիրառել տեղեկատվության տրամադրման այլ ձևաչափեր:

Այս ամենը կարելի է տեսնել «Զեկուցում մասնագիտական կողմնորոշման, իրազեկման և դիմորդների հավաքագրման արդյունավետության բարձրացման ուղիների վերաբերյալ» և «Գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի տարեկան հաշվետվություն» զեկուցումներում՝ ներկայացված գիտխորհրդի նիստերում:

Համալսարանում դիմորդների ընդունելությունն իրականացվում է՝ համաձայն ՀՀ Կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի) կարգի», իսկ հեռակա ուսուցման համակարգի ընդունելությունն իրականացվում է համաձայն ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2016 թվականի հուլիսի 19-ի N 743-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա ուսուցման ընդունելության կանոնների»: 2022 թվականից հեռակա ուսուցման համակարգում ևս ընդունելությունն իրականացվում է միասնական քննություններով Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից: Միայն «011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ», «011401.11.6 Կերպարվեստ», «011401.13.6 Երաժշտական կրթություն» կրթական ծրագրերով ընդունելությունը կատարվում է ներբուհական քննություններով, որոնց հանձնաժողովների կազմը ներկայացվում է Գնահատման և թեստավորման կենտրոն: Ընդունելության գործընթացի պլանավորումն իրականացվում է բուհի կողմից, մասնագիտությունների հարցը քննարկվում է ամբիոններում, այնուհետև՝ ֆակուլտետների գիտական խորհուրդներում և ԿԳՄՍ նախարարություն ուղարկվող վերջնական որոշումն կայացվում է բուհի Գիտական խորհրդում:

Մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելությունն իրականացվում է՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԳ նախարարի 2007 թ. դեկտեմբերի 6-ի թիվ 1193-Ն հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը» և յուրաքանչյուր ուստարվա համար բուհի Գիտական խորհրդի կողմից հաստատված մագիստրատուրայի ընդունելության կարգերը (առկա, հեռակա):

Ասպիրանտուրայում ընդունելությունը և հայցորդության ձևակերպումն իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի N 238-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ-ում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգ»-ի: Համաձայն ԲՈԿ-ի որոշման՝ համալսարանն իրավունք ունի գիտական կադրեր պատրաստել հետևյալ ուղղություններով. Բ.00.04 - Ֆիզիկական քիմիա, Գ.00.05- Բուսաբանություն, սնկաբանություն, էկոլոգիա, Ժ.02.01- Հայոց լեզու, Է.02.01-Հայոց պատմություն, ԺԳ.00.01 – Մանկավարժության տեսություն և պատմություն:

2019-2023 թթ. ընդունելության արդյունքների ամփոփումից ակնառու է, որ որոշակի չափով նվազել են ընդունելության արդյունքները, սակայն 2023 թվականի աճի տենդենցը նկատելի է:

Անհանգստացնող են մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության արդյունքները:

Աղյուսակ. 2019-2023 թթ. բուհի ընդունելության արդյունքները

Ուսուցման համակարգ՝ կրթական ծրագիր	2019 թ.	2020 թ.	2021 թ.	2022 թ.	2023 թ.
Առկա ուսուցման համակարգ՝ բակալավրի կրթական ծրագիր	351	355	332	247	298
Հեռակա ուսուցման համակարգ՝ բակալավրի կրթական ծրագիր	75	95	113	70	86
Առկա ուսուցման համակարգ՝ մագիստրոսի կրթական ծրագիր	81	78	47	49	56
Հեռակա ուսուցման համակարգ՝ մագիստրոսի կրթական ծրագիր	9	11	5	7	8
Ընդհանուր	516	539	497	373	448

Դիմորդների թվի նվազման հիմնական պատճառներն են.

-Հայաստանի Հանրապետությունում դիմորդների թվի նվազումը,

-մայրաքաղաքային բուհերի մրցակցության աճը,

Յուրաքանչյուր տարի, ամփոփելով ընդունելության արդյունքները, քննարկումներ են իրականացվում ֆակուլտետային խորհուրդներում, ռեկտորատի նիստում:

Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները և տրամադրել տվյալ խնդիրների լուծման տարբերակները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ըստ վիճակագրական տվյալների՝ բուհից հեռացվող ուսանողների հիմնական խնդիրը վարձավճարի վճարման անկարողությունն է և արտագաղթը (ներառյալ ուսանողների մոտիվացիայի անկումը հետպատերազմյան ժամանակաշրջանում):

Տարիների ընթացքում նվազել է հեռակա ուսուցման համակարգից ակադեմիական առաջադիմության պատճառով հեռացվողների թվաքանակը, ինչը պայմանավորված է հեռակա համակարգի ուսանողների կրթություն ստանալու մոտիվացիայով:

2019-2023 թթ. բուհից անբավարար առաջադիմության համար հեռացված ուսանողների թվաքանակը.

	2018-19	2019-20	2020-21	2021-22	2022-23
Առկա ուսուցման համակարգ՝ բակալավրի կրթական ծրագիր	3	6	11	5	11
Հեռակա ուսուցման համակարգ՝ /բակալավրի կրթական ծրագիր	25	54	25	12	15

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Հիմքեր	<p>Ուսանողների կարիքների վերհանման քաղաքականությունը և ընթացակարգերը</p> <p>Վերհանված կարիքները փաստող հիմքերը և վերջին 3 տարիների վերլուծությունները</p> <p>Վերհանված խնդիրների լուծումները և նրանց արտահայտումը ՄՈՒՀ-ի քաղաքականության մեջ</p> <p>Ուսանողների գիտելիքների գնահատման կարգեր</p> <p>Ուսանողական նպաստների և կրթաթոշակների տրամադրման կարգ</p> <p>Ուսանողների գիտելիքների գնահատման արդյունքների բողոքարկման կարգ</p>
--------	--

Վերլուծել ուսանողների կարիքների վերհանման ՄՈՒՀ-ի քաղաքականության և ընթացակարգերի իրականացման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսանողների կարիքների վերհանման գործընթացը բազմաչափ է և բազմասուբյեկտային, ներառում է դասընթացների որակի և դասավանդման գործընթացի, համալսարանի ռեսուրսային բազայի, կրթական ծառայությունների, վարչական կազմի աշխատանքների, ուսանողների՝ հետազոտություններում ներգրավվածության, ուսխորհրդի կողմից բարձրացված հարցերի գնահատումը: Ուսանողների կարիքները ուսումնասիրվում և արդյունքները պարբերաբար (ըստ նախապես հաստատված գիտխորհրդի պլանի) ներկայացվում են Համալսարանի Գիտական խորհրդում և՛ համալսարանի աշխատակազմի, և՛ ուսանողական խորհրդի կողմից (Գիտխորհրդի նիստեր՝ 27.05.2021 թ., 26.05.2022 թ., 23.02.2023 թ., 30.03.2023 թ.):

ՎՊՀ ՈԱԿ-ի կողմից որդեգրած մոտեցման համաձայն՝ ուսանողների կարիքների վերհանումն

ու վերլուծությունը հնարավոր է դառնում տարվա կտրվածքով արտաքին և ներքին շահակիցների տեսանկյունից իրականացված որակական և քանակական հարցումների, փաստաթղթային վերլուծության, երկրորդային վերլուծությունների համեմատական ուսումնասիրությունների շնորհիվ: Ներքին շահակիցներից ուսանողների կարիքների վերհանումը այսպիսով իրականացվում է ինչպես ուսանողների կողմից բարձրացված խնդիրների, այնպես էլ գործատուների և շրջանավարտների կողմից շեշտված առաջարկների համադրման միջոցով: Քանակական հարցումներից ստացված տեղեկատվության անհանգստացնող ցուցանիշները քննարկվում են ուսանողների հետ կազմակերպվող ֆոկուս խմբերում: Դրանք հիմնականում վերաբերում են ձեռքբերվող վերջնարդյունքներին, հետագա կիրառելիության հնարավորություններին, մասնագիտական և ոչ մասնագիտական դասընթացների բարդության աստիճանին, դասավանդման մեթոդներին, գնահատման օբյեկտիվությանը, դասախոս-ուսանող հարաբերություններին, բուհի տեղեկատվության պաշտոնական աղբյուրներին, նյութատեխնիկական բազային և այլն: Ուսանողների կարիքների վերաբերյալ ուսումնասիրությունները քննարկվում են ռեկտորատում, գիտական խորհրդի նիստերում, ինչպես նաև ուսխորհրդում: Բարձրացված հարցերին պարբերաբար անդրադառնում է բուհի աշխատակազմը և փորձում է կանոնակարգմամբ գտնել բարձրացված խնդիրների լուծումներ և իրականացնել կրթական բարեփոխումներ:

Բացի ուսանողական խորհրդի և որակի ապահովման կենտրոնի նպատակաուղղված աշխատանքից՝ ուսանողների կարիքների վերհանման գործում ներդրում ունեն նաև կուրսերի խորհրդատուները, որոնք ուսանողների հետ պարբերական աշխատանքի արդյունքում միջնորդում են անհատական և փոքր խմբային խնդիրների լուծմանը: Համալսարանի ամբիոնները, դեկանատները, բոլոր ստորաբաժանումների դեկավարները, պրոռեկտորները, ռեկտորը պատրաստակամ են ուսանողների հետ քննարկելու բարձրացված խնդիրները և համատեղ ջանքերով գտնելու դրանց լուծման օպտիմալ տարբերակը:

ՉՍՓՈՐՈՇԻՉ 4. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Հիմքեր	<p>Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների նկարագրությունը, նպատակները և Ժամանակացույցը</p> <p>Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների բարելավման մեխանիզմները և ծրագրերը</p> <p>Խորհրդատուների աշխատանքի ժամանակացույցը</p> <p>Ակադեմիական խորհրդատուների գործունեության կանոնակարգ</p>
--------	--

<i>Պատասխանել հետևյալ հարցին:</i>	%
-----------------------------------	----------

Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված խորհրդատվական ծառայությունների մասին:	89 %	
Ուսանողների ո՞ր տոկոսն է ընդգրկված լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում:	18 %	
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված խորհրդատվական ծառայություններից:	Օգտվողների 76 %	
Հետևյալ հարցերին պատասխանել այո կամ ոչ:	ԱՅՈ	ՈՉ
Արդյոք ուսումնառողներին հատկացվո՞ւմ են խորհրդատուներ:	V	
Եթե ոչ, արդյոք դա նախատեսվո՞ւմ է:		
<p><i>Վերլուծել լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների և ակադեմիական օժանդակությունն ու ուղղորդում տրամադրելու համար գործընթացի կազմակերպման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>Ամբիոններում իրականացվում են խորհրդատվական աշխատանքներ, որոնք հնարավորություն են ընձեռում աջակցել և ուղղորդել ուսանողին լսարանային և արտալսարանային գործառույթների կազմակերպման հարցերում:</p> <p>Խորհրդատվական պարապմունքների արդյունքում ուսանողները ստանում են ակադեմիական, հետազոտական, կրթական, մշակութային, սոցիալական ոլորտին առնչվող հիմնախնդիրների վերհանման ու լուծման աջակցություն, հետազոտական աշխատանք կատարելու հմտություններ, այսպիսով ուսանողների ուսումնառությունը դառնում է ավելի արդյունավետ:</p> <p>Խորհրդատվական պարապմունքների նպատակն է աջակցել, ուղղորդել, խորացնել մասնագիտական գիտելիքները, զարգացնել կարողություններն ու հմտությունները, նպաստել ուսանողի ինքնուրույնության զարգացմանը:</p> <p>Խորհրդատվական պարապմունքները, կախված ուսանողի խնդրից և լուծման հրատապությունից, կարող են ունենալ տարբեր ընթացակարգեր, ինչով պայմանավորված է պարապմունքների կազմակերպման գործիքակազմի ընտրությունը: Խորհրդատվական պարապմունքները մեկնարկելիս հստակեցվում և ձևակերպվում է ուսանողի խնդիրը, տրամադրվում է տեղեկատվական խորհրդատվություն, այնուհետև գործնական հանձնարարականներ: Խորհրդատվական պարապմունքները հիմնվում են SMART չափանիշների վրա:</p> <p>Խորհրդատվական պարապմունքների կառավարման գործընթացներն են՝ աշխատանքների նախաձեռնում, պլանավորում, իրականացում, վերահսկում, ամփոփում: Ամբիոններում իրականացվում են հետևյալ խորհրդատվական աշխատանքները.</p> <ul style="list-style-type: none"> - Մեմինար և գործնական պարապմունքների նախապատրաստելու վերաբերյալ խորհրդատվություն, - Ընթացիկ քննությունների և ստուգարքների պատրաստման վերաբերյալ խորհրդատվություն, - Կուրսային աշխատանքների կատարման վերաբերյալ խորհրդատվություն, - Ինքնուրույն և անհատական աշխատանքների կատարման վերաբերյալ խորհրդատվություն, 		

- Բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման վերաբերյալ խորհրդատվություն,
- Արտադրական, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների անցկացման, օրագրերի և մատյանների վարման վերաբերյալ խորհրդատվություն,
- Գիտական հոդվածների նախապատրաստման, ակադեմիական գրագիտության վերաբերյալ խորհրդատվություն,
- Վանաձորի պետական համալսարանում ուսումնառող Արցախից տեղահանված ուսանողների հետ անցկացվող խորհրդատվություն:

Ամբիոններում հաստատվում են խորհրդատվական աշխատանքների իրականացման ժամանակացույցեր, որոնք տրամադրվում են կուրսերին կուրսերի ավագների օգնությամբ:

Կարևորվում է ակադեմիական խորհրդատուների աշխատանքը, որը կանոնակարգված է «Ակադեմիական խորհրդատուների գործունեության կանոնակարգով», ըստ որի՝ յուրաքանչյուր կուրսի համար հրամանագրված խորհրդատուն պարզաբանում է ուսանողի իրավունքները և պարտականությունները, ապահովում է ուսումնառության արդյունավետությունը, կազմակերպում է կրթական գործընթացին վերաբերող հարցերի անհատական և խմբային խորհրդատվություն, ուսանողին տրամադրում ուսուցման գործընթացում կատարվող փոփոխությունների մասին տեղեկատվություն, մասնակցում է ուսանողի ակադեմիական կարգավիճակի, առաջադիմության քննարկման հանձնախմբերի աշխատանքներին, կազմակերպում է խմբային աշխատանք և միջխմբային համագործակցություն, հսկում և վերլուծում է ուսանողի առաջադիմության դինամիկան:

Կարևոր խորհրդատվական դեր ունի նաև [«Ուսանողի ուղեցույցը»](#), որը յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին տրամադրվում է ուսանողներին, հատկապես կարևոր է առաջին կուրսերի ուսանողների համար: «Ուսանողի ուղեցույցում» առկա է նաև QR կոդի կիրառությունը, որի միջոցով ուսանողին հասանելի են լինում նաև բուհի կայքում տեղադրված կարգեր/կանոնակարգերը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ղ. ՄՈԻՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

Հիմքեր	Ուսումնառողներին՝ վարչական կազմի կողմից հավելյալ օժանդակման և ուղղորդման կանոնակարգը Համապատասխան ժամանակացույցեր
--------	--

Պատասխանել հետևյալ հարցին:	%
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին:	72 %
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	65 %
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված այդ ծառայություններից:	Օգտվողների 83 %

Վերլուծել լրացուցիչ վարչական օժանդակություն ու ուղղորդում տրամադրելու համար գործընթացի կազմակերպման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համալսարանում ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրվում են՝ սկսած դիմորդի կարգավիճակից: Ընդունելության արդյունքում ուսանողը ուղղորդվում է համապատասխան ֆակուլտետի դեկանատ և մասնագիտական ամբիոն: Խորհրդատվական աշխատանքները իրականացվում են և՛ անհատական, և՛ խմբային ձևաչափով:

Հետադարձ կապի մեխանիզմներն առավել արդյունավետ են աշխատում ֆակուլտետային մակարդակներով, որտեղ իր ուրույն տեղն ունի ուսխորհուրդը:

Ռեկտորը պարբերաբար կազմակերպում է արտադրական խորհրդակցություններ ուսխորհրդի, ուսանողների, ավագների մասնակցությամբ /առանց դասախոսական կազմի և խորհրդատուների/: Ուսանողների կողմից բարձրացված հարցերը և առաջարկությունները քննարկվում են համալսարանի տարբեր կառույցներում և մակարդակներում, դեկանատներում՝ խորհրդատուների և ավագների մասնակցությամբ /ըստ խնդրի համապատասխանության/:

Ուսանողների, ծնողների ընդունելության համար ռեկտորը և վարչական աշխատակազմը ունեն սահմանված ժամեր, սակայն անկախ ժամային սահմանումից բոլոր ուսանողները անհրաժեշտ պահին ստանում են օժանդակություն, ուղղորդում և աջակցություն:

Երբեմն անհրաժեշտություն է լինում ուսխորհրդի մասնակցությամբ /համալսարանական, ֆակուլտետային/ որոշ կարգերի վերաբերյալ բացատրական աշխատանքներ իրականացնել, չնայած այն հանգամանքի, որ Գիտական խորհրդում հաստատված յուրաքանչյուր կարգ խորհրդատուի կողմից տրամադրվում է կուրսերի ուսանողներին և տեղեկացման վերաբերյալ կատարվում են նշագրումներ: Այս հանգամանքը շատ կարևոր է հատկապես հեռակա ուսուցման համակարգի ուսանողների համար:

Ուսանողներին, նաև ծնողների ուղղորդելու հարցում կարևոր են www.vsu.am կայքում գործարկվող հարցերի հղման էջը, որը ավելի պրակտիկ գործիք է հուզող հարցերին արագ պատասխան ստանալու համար: Այս հնարավորությունից դարձյալ ավելի շատ օգտվում են հեռակա ուսուցման համակարգի ուսանողները, իսկ առկա ուսուցման համակարգի ուսանողները առավել ներգրավված են քննարկումներում:

Տեղեկատվության արագ տարածման և մեծ կիրառելիության հարցում իրենց ուրույն դերն ու տեղն ունեն Համալսարանի ֆեյսբուքը, ինստագրամը, Տելեգրամ կանալը:

Համալսարանում գործում են մի շարք կարգեր և կանոնակարգեր, որոնցում ամրագրված են վարչական աշխատակազմին դիմելու մեխանիզմները:

ՉՍՓՈՐՈՇԻՉ է. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Հիմքեր	Ուսումնառողների կարիերային նպաստող ծառայությունների կանոնակարգերը Այդ գործընթացներն իրականացնող ենթակառուցվածքը և դրա գործառնությունները
--------	---

Պատասխանել հետևյալ հարցերին:

Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված կարիերային նպաստող	%
	15 %

<p>ծառայությունների մասին: Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:</p>	<p>12 %</p>
<p>Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ ծառայություններից:</p>	<p>Օգտվողների 70 %</p>
<p><i>Վերլուծել ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>Վանաձորի պետական համալսարանում գործում է ուսանողների կարիերայի աջակցման ծառայություններ, որը իրականացնում է շրջանավարտների հետ աշխատանքների համակարգողը:</p> <p>Համալսարանում իրականացվում են աշխատանքներ և՛ ուսանողների, և՛ շրջանավարտների հետ: Տրամադրվում է տեղեկատվություն աշխատաշուկայում առկա աշխատատեղերի, գործատուների կողմից ներկայացվող հիմնական պահանջների վերաբերյալ, կազմակերպվում և անցկացվում են ոչ ֆորմալ դասընթացներ ուսանողների համար, այդ թվում՝ աշխատանքային հարցազրույցի ներկայանալու, մրցունակ կենսագրական կազմելու, աշխատանք փնտրելու, աշխատանքային պայմանագրի կնքման առանձնահատկությունների և այլ թեմաներով: Ուսանողները ներգրավվում են կարիերայի պլանավորման գործընթացում, որը նպաստում է լինել առավել վստահ, մրցունակ, և իրավագիտակ՝ աշխատանքային պայմանագրի կնքման առանձնահատկություններին և մի շարք այլ հանգամանքներին: Իրականացվում են հարցումներ գործատուների շրջանում: Դրանք թույլ են տալիս գնահատել բուհի կրթական ծառայությունների որակը, դրանց համապատասխանությունն աշխատաշուկայի արդի պահանջներին, առավել տեսանելի դարձնել բուհի ուսումնական գործընթացներում առկա բացերն ու առավելությունները և այդպիսով բուհում զարգացնել որակի շարունակական բարելավման մշակույթը: Հարցումների արդյունքները թույլ են տալիս ավելի տեսանելի դարձնել ՎՊՀ-ում առկա թիրախավորված խնդիրները և դրանով իսկ պայմանավորված մշակել վերհանված խնդիրների լուծման ուղիներ:</p> <p>Վերոհիշյալ համատեքստում իրականացվել է առցանց հարցում գործատուների շրջանում, որի նպատակն է ուսումնասիրել պահանջարկված մասնագիտությունները և գնահատել ՎՊՀ-ի կողմից տրվող կրթության որակի համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին: Մասնավորապես՝ գնահատել ՎՊՀ-ի շրջանավարտների ներգրավվածությունը կազմակերպություններում, հասկանալու՝ ինչի վրա են ուշադրություն դարձնում գործատուները աշխատանքի ընդունելիս, գնահատել ՎՊՀ-ի շրջանավարտներին՝ ըստ մասնագիտական պատրաստվածության, վերջիններիս տեսական գիտելիքների մակարդակը, գնահատել ՎՊՀ-ի կողմից մատուցված կրթական ծառայությունների որակը և բացահայտել ՎՊՀ շրջանավարտների գիտելիքի առավելություններն ու թերությունները:</p> <p>Հարցումներ են իրականացվել դպրոցների, մանկապարտեզների, բանկերի, Վանաձորի համայնքապետարանի և մարզպետարանի շրջաններում:</p> <p>Հարցման արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ներկայումս գործատուների համար առավել կարևոր է մասնագիտական գիտելիքների մակարդակը (57,1 %), քան աշխատանքային փորձը (7,1 %): Չի զիջում նաև անձնային և գործնական որակների ու</p>	

ընդհանուր ընդունակությունների գնահատումը՝ 78,6 %: Գործատուի համար բավականին կարևոր են նաև շրջանավարտների անձնային և գործնական որակները:

Որակի ապահովման կենտրոնի կողմից ընդհանրական կոմպետենցիաների վերաբերյալ հարցում է անցկացվել աշխատող շրջանավարտների շրջանում: Շրջանավարտները համեմատաբար բարձր են գնահատել գործիքային կոմպետենցիաների զարգացման մակարդակը (3,6-4,5), որին հաջորդում է միջանձնային կոմպետենցիաների զարգացման մակարդակը (3,0-3,5): Իրենց աշխատանքում շրջանավարտները կարևորել են մայրենի և օտար լեզուներով հաղորդակցման հմտությունները, տեղեկատվության տարբեր աղբյուրներից օգտվելու կարողությունը, որոշումներ կայացնելու հմտությունները, բարոյական արժեքները, թիմային աշխատանքը, բազմազանության ընդունումը և բազմամշակութայնությունը: Համակարգային կոմպետենցիաներից շրջանավարտների կողմից կարևորվել են գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունը, անընդհատ սովորելու կարողությունը, ինքնուրույն աշխատելու կարողությունը, նախագծեր մշակելու և կառավարելու կարողությունը, որակի կարևորության գիտակցումը, հաջողության ձգտումը:

Տարվա կտրվածքով ուսումնասիրվել են նաև թափուր աշխատատեղերի հայտարարությունների կայքերը (careercenter.am , staff.am, job.am, linkedin.com, jobfinder.am). նպատակն էր՝ դուրս բերել այն ընդհանրական կոմպետենցիաները, որոնք ներառված չեն բուհի կրթական ծրագրերում: Պահանջվածների շարքում ամենատարածված կոմպետենցիաներն են՝ բանակցելու կարողությունը, լարված, սթրեսային իրավիճակներում աշխատելու կարողությունը, փոխվելու պատրաստակամությունը, բարձր մոտիվացիան, մանրուքներին ուշադրություն դարձնելու և միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողությունը, սեղմ ժամկետներում աշխատելու կարողությունը, ժամանակի կառավարումը, առաջնահերթություններ սահմանելու կարողությունը, հրապարակային խոսքի հմտությունները:

Գործոտանունների պահանջը ավելի լավ հասկանալու նպատակով հանդիպումներ և քննարկումներ են իրականացվել մի շարք կազմակերպությունների հետ.

- Լոռու մարզպետարան
- Վանաձորի համայնքապետարան
- «Դասավանդի՛ր, Հայաստան»
- ՎՏԲ Հայաստան բանկ ՓԲԸ
- «PMCH group»
- «Ինստիտյոս մոբայլ»
- «Թումո Ստեղծարար տեխնոլոգիաների» կենտրոն
- Լոռու մարզի զբաղվածության կենտրոն
- Լոռու մարզի կրթական հաստատություններ:

Արդեն ավանդական է դարձել «Աշխատանքի տոնավաճառ» միջոցառումը, որի նպատակն է ապահովել գործատուների կապը ուսանողների և շրջանավարտների հետ՝ հնարավորություն տալով ներկայացնել կազմակերպության գործունեությունը, աշխատանքային գործառույթները ու թափուր հաստիքները քուլեջի ու բուհի ուսանողներին, շրջանավարտներին, որը տալիս է փոխշահավետ հարթակ բուհ-գործատու համագործակցության համար: Գործատուների

մասնակիցների թիվը տարեցտարի աճում է: «Աշխատանքի տոնավաճառ» միջոցառումից հետո գործատու-մասնակիցների շրջանակներում իրականացվել է հարցում՝ հետագա աշխատանքի արդյունավետությունը բարելավելու միտումով: Մասնավորապես՝ ինչպես կգնահատեն «Աշխատանքի տոնավաճառ» միջոցառման կազմակերպման որակը՝ գործատուների 97 %-ը գնահատել է 5 (ամենաբարձր միավորը), միջոցառման արդյունավետությունը միջինում գնահատվել է 4,2: Աշխատանքի տոնավաճառից հետո առաջարկված թափուր հաստիքների համար գործատուներին են դիմել է 40-45 % ուսանող և շրջանավարտ:

www.vsu.am պաշտոնական կայքէջում առանձին բաժին կա հատուկ շրջանավարտների համար, որտեղ մեկնարկել է «Հաջողության պատմություններ» ծրագիրը: ՎՊՀ-ի շրջանավարտները ներկայացրել են իրենց հաջողությունները՝ ինչու են ընտրել և ինչ է իրենց տվել համալսարանը:

Աշխատանքներ են տարվում «Շրջանավարտների ակումբ» ծրագրի մեկնարկման համար, որի նպատակն է գտնել լավագույն շրջանավարտներին, ովքեր, ի նպաստ և ի բարօրություն համալսարանին, պատրաստ են կատարել իրենց ներդրումը:

Շարունակաբար իրականացվում են համալսարանի շրջանավարտների բազայի համալրման աշխատանքներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Հիմքեր	ՄՈՒՀ-ի համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում ուսումնառողների մասնակցության ապահովման քաղաքականությունը և ընթացակարգը
--------	--

ՄՈՒՀ-ի համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի

	Ուսումնառողներ	2019	2020	2021	2022	2023	2024
1	Բակալավր					1	1
2	Մագիստրոս				3		2
3	Հետազոտող				1	3	2

Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվն ըստ տարիների

	Գիտահետազոտական ծրագիր	2019	2020	2021	2022	2023	2024
1	Եվրոպական ազգային-ազատագրական, հասարակական-քաղաքական և մշակութային իրադարձությունների արձագանքը հայ պարբերական մամուլում (Գիտական խումբ)				1		
2	Էպոնիմները ժամանակակից				1		

	հայերենում (Գիտական խումբ)						
3	Sambucuc nigra L. և Grataegus sanguine Pall. բույսերի գեներատիվ օրգանները որպես կենսաբանական ակտիվ միացությունների աղբյուր (Գիտական խումբ)				1		
5	Լոռու մարզի զբոսաշրջային ռեսուրսների ներուժի և բիզնես միջավայրի գնահատումը (Գիտական խումբ)					1	
6	Գրքի գովազդը թիֆլիսահայ պարբերական մամուլում (1905-1918 թթ.)				1		
7	Անդրմշակութային հաղորդակցությունը ժամանակակից երկրագնացության պայմաններում					1	
8	Կրթական ծառայությունների գովազդը թիֆլիսահայ պարբերական մամուլում (1858-1905 թթ.)					1	
9	19-րդ դարի եվրոպական հեղափոխական և ազգային ազատագրական շարժումների արձագանքը հայ պարբերական մամուլում					1	
10	Գրական արևելահայերենի և անգլերենի եղանակաժամանակային համակարգերի հանդիպարական քննություն						1
11	Ամանորը Թիֆլիսի պարբերական մամուլում 1858-1905 թթ. (հայկական և ռուսական պարբերականների զուգադրական վերլուծություն)						1
12	XIX դարի ամերիկյան և եվրոպական ազգային շարժումների արձագանքը հայ հասարակական մտքում						1
	Կանոնավոր և դանդաղ փոփոխվող ֆունկցիաների հաճախականությունների դասերի հետազոտում						1

1 3	Լոռու մարզում աճող վայրի ուտելի որոշ բույսերում կարոտինոիդների պարունակության ուսումնասիրություն և մարդու օրգանիզմի վրա օգտակարության գնահատում					1
Ուսումնառողների հեղինակությանը և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը						
	Տպագրված աշխատանք	2019	2020	2021	2022	2023
1	Դասախոսների հետ համահեղինակությամբ հրատարակված հոդվածներ	29	8	16	19	7
2	ՎՊՀ ուսանողական գիտական ընկերության գիտաժողովների ժողովածուներում տպագրված հոդվածներ	31	0	36	58	30
3	Այլ բուհերի ուսանողական գիտական ընկերության գիտաժողովների ժողովածուներում տպագրված հոդվածներ	25	3	6	14	14
4	«Մագիստրոս» ժողովածուում տպագրված հոդվածներ	27	45	23	28	37
<p><i>Վերլուծել հաստատության գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>Համալսարանում կարևորվում է ուսանողների ներգրավումը գիտահետազոտական աշխատանքներում: Կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները տրվում են՝ հաշվի առնելով ամբիոնների գիտահետազոտական ուղղությունները: Ամբիոններում ուսանողների հետ կատարվող աշխատանքների վերլուծությունը ցույց տվեց, որ ուսանողների հետ հետազոտական աշխատանքներ (դա կլինի ՈԻԳԸ գիտաժողովներում ուսանողների ղեկավարում, համատեղ հոդվածներ) իրականացնում են ամբիոնի դասախոսների մոտ 50 %-ը: Ուսանողների հետ կատարվող հետազոտական աշխատանքները հիմնականում առնչվում են ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի թեմաների հետ:</p> <p>Ոչ ավարտական աշխատանքների թեմաներով ուսանողների հետազոտական աշխատանքները խրախուսելու համար «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան հիմնադրամի աշխատողներին գիտական, ուսումնական, մշակութային, մարզական և կազմակերպական աշխատանքների համար խրախուսման կարգ»-ի մեջ կա կետ, ըստ որի՝ խրախուսվում է ՀՀ կամ արտերկրյա պետական բուհերի կազմակերպած</p>						

ուսանողական գիտաժողովների, ուսանողական գիտական աշխատանքների ժողովածուներում ուսանողի կողմից հրատարակված աշխատանքի ղեկավարումը: Ընդ որում խրախուսման ենթակա չէ ուսանողի կուրսային կամ ավարտական աշխատանքի մաս կազմող տպագրված հոդվածը:

Ամբիոնների դասախոսները իրենց գիտահետազոտական թեմաների շրջանակում տպագրում են նաև համատեղ աշխատանքներ ուսանողների հետ: 2019-2023 թթ. ուսանողների հետ տպագրվել է 79 համատեղ աշխատանք: Համատեղ աշխատանքներից մեկը տպագրված է Scopus շտեմարանում ընդգրկված ամսագրում: Ուսանողների հետ համատեղ աշխատանքների տպագրումը «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի աշխատողներին գիտական, ուսումնական, մշակութային, մարզական և կազմակերպական աշխատանքների համար խրախուսման կարգ»-ի համաձայն խրախուսվում են այն դասախոսները, ովքեր ունեն ուսանողների հետ համատեղ աշխատանքներ, խրախուսման միավորին ավելացվում է 15 %: 2022 թ. գիտխորհրդի կողմից հաստատվել է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտական խմբերի կանոնակարգը, ըստ որի՝ գիտական խմբերում, բացի դասախոսներից, պետք է ընդգրկվեն ասպիրանտներ, հայցորդներ, մագիստրատուրայի և բակալավրի ուսանողներ: Կանոնակարգի հաստատումից հետո ամբիոններում իրենց գիտահետազոտական թեմաների շրջանակում ձևավորվել են գիտական խմբեր: Այժմ բուհում գործող գիտական խմբերում ընդգրկված են 5 հայցորդներ, մագիստրատուրայի 5 ուսանողներ և բակալավրի 3 ուսանողներ: Այս ամենը հնարավորություն կտա ուսանողների հետ համատեղ հոդվածի տպագրում Scopus և Web of Science շտեմարաններում ընդգրկված ամսագրերում:

Համալսարանի Ուսանողական գիտական ընկերությունը, համաձայն իր կանոնակարգի, նպաստում է ուսանողների ներգրավվածությանը ՈՒԳԸ կողմից կազմակերպվող ներհամալսարանական միջոցառումներին, արտահամալսարանական գիտաժողովներին և միջոցառումներին: Յուրաքանչյուր տարի մայիս ամսին կազմակերպում են ՈՒԳԸ ընկերության գիտաժողովներ, որտեղ իրենց զեկույցներով են հանդես գալիս ինչպես ՎՊՀ ուսանողները, այնպես էլ տարբեր մասնակիցներ այլ համալսարաններից: Ուսանողները նախապես ներկայացնում են հոդվածները, որոնք անցնում են գրախոսում և նոր թույլատրվում զեկույցման: Համալսարանի կազմակերպած գիտաժողովներին 2019-2024 թթ. ընթացքում մասնակցել են համալսարանի բոլոր ֆակուլտետներից 198 ուսանողներ: Այլ բուհերի կազմակերպած ուսանողական գիտական ընկերության գիտաժողովներին մասնակցել են 43 ուսանողներ:

Ամեն տարի Ուսանողական գիտական ընկերության աշխատանքների համար Համալսարանը արտաբյուջեի միջոցներից կատարում է ֆինանսավորում՝ տարեկան մոտ 400 հազար դրամի չափով:

Համաձայն «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի աշխատողներին և ուսանողներին դրամական օգնություն և աջակցություն տալու, ուսանողներին խրախուսելու և պարգևատրելու կարգ»-ի՝ խրախուսվում է հանրապետական և միջազգային գիտաժողովներին մասնակցած և հոդված տպագրած ուսանողը:

Համալսարանը ունի ուսանողների համար նախատեսված «Մագիստրոս» ժողովածու, որի

<p>աշխատանքները կազմակերպվում են «Մագիստրոս» ժողովածուի հրատարակման կանոնակարգով: «Մագիստրոսը» և ՈՒԳԸ գիտաժողովների ժողովածուների բոլոր համարները տեղադրված են կայքում:</p> <p>Համալսարանում 2022 թ. Ձեռներեցության և նորարարությունների զարգացման կենտրոնի (SMART CAFFE) բացվելուց հետո ուսանողների համար ստեղծվել է տարատեսակ քննարկումների հնարավորություն՝ ստեղծելու և զարգացնելու գաղափարներ, այդ թվում՝ բիզնես ուղղվածության: SMART CAFFE-ում տեղի են ունենում հանդիպումներ ուսանողների հետ, նրանց հետ քննարկվում են նոր բիզնես-գաղափարներ և աշխատանք է տարվում այդ գաղափարների շուրջ: Երկու ստարտափ գաղափարներ 2023 թ.-ին ուսանողները ներկայացրել են Բուլղարիայի Մոֆիա քաղաքում կազմակերպված բիզնես գաղափարների եզրափակիչ մրցույթին:</p> <p>Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավման մասին զեկուցումները (Հավելված 4.գ.1.) ամեն տարի ներկայացվում են գիտական խորհրդի նիստերին:</p>	
<p>ՉՍՓՈՐՈՇԻՉ է. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:</p>	
<p>Հիմքեր</p>	<p>Ուսումնառողների իրավունքները արտացոլող փաստաթուղթը Ուսանողական խորհրդի կանոնադրությունը</p> <p>Ուսումնառողների իրավունքներով, բողոքներով և բողոքարկումներով զբաղվող ենթակառուցվածքի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերը</p> <p>Վերջին 5 տարիների ընթացքում ուսանողների բողոքների և այդ խնդիրների լուծման վիճակագրական տվյալները և համապատասխան հիմքերը</p>
<p>Պատասխանել հետևյալ հարցերին:</p>	<p>%</p>
<p>Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված համապատասխան ծառայությունների վերաբերյալ:</p>	<p>86 %</p>
<p>Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում համապատասխան ծառայությունից:</p>	<p>16%</p>
<p>Ուսումնառողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացից:</p>	<p>Օգտվողների 84 %</p>
<p><i>Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող ուսումնառողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմնի աշխատանքների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>Վանաձորի պետական համալսարանում ուսանողների պաշտպանության պատասխանատու մարմինը Ուսանողական խորհուրդն է, որը ուսումնառողների ինքնակառավարման, ընտրովի ներկայացուցչական մարմինն է: Ուսանողական խորհուրդը բուհում պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում նրանց կրթական, գիտական, ստեղծագործական, ֆիզիկական, բարոյական և հոգևոր զարգացմանը:</p> <p>Համալսարանում ուսանողների իրավունքները ամրագրված են մի քանի փաստաթղթերում.</p>	

<p>«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրությունը, Ուսխորհրդի կանոնադրություն, Ներքին կարգապահական կանոններ, «Ուսանողի ուղեցույց», Ուսանողի հետ կնքվող պայմանագիր: Ուսանողական խորհրդի ներկայացուցիչները ներգրավված են համալսարանի կառավարման մարմինների աշխատանքներում՝ Հոգաբարձուների խորհուրդ, Գիտխորհուրդ, Ֆակուլտետային գիտխորհուրդներ, նաև գիտխորհրդի տարբեր հանձնաժողովներում: Ուսխորհուրդը ունի համալսարանական և ֆակուլտետային կառույցներ: Համալսարանի Ուսխորհրդի կազմում ենթակարգության սկզբունքով ներգրավվում են համալսարանի ուսանողները: Ուսխորհուրդի բարձրագույն ղեկավար մարմինը համալսարանի ուսանողական խորհրդի ընդհանուր ժողովն է, որտեղ ընտրում է նախագահին, լսում է տարեկան հաշվետվություն, քննարկում և սահմանում է տարեկան գործունեության ուղղությունները: Ուսանողների ընդգրկվածության և լսելի լինելու համար կարևորվում են Ուսխորհրդի նախագահությունում գործող հանձնաժողովները:</p>	
<p>1) իրավական, 2) գիտաուսումնական, 3) լրատվության և քարոզչության, 4) արտաքին կապերի և հարաբերությունների, 5) մշակույթի, ազատ ժամանցի և սպորտի:</p>	
<p>Ուսանողական խորհրդի նախագահը Համալսարանի Գիտխորհրդում պարբերաբար ներկայացնում է ուսանողների կողմից վերհանված կարիքները, որոնք վերաբերում են հիմնականում ուսումնական գործընթացին և կրթական միջավայրի բարելավման խնդիրներին: Յուրաքանչյուր տարի Ուսխորհրդի աշխատանքների համար Համալսարանը արտաբյուջեի միջոցներից կատարում է ֆինանսավորում՝ տարեկան մոտ 400 հազար դրամի չափով: Ուսխորհուրդն ակտիվորեն մասնակցում է լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների («Լավագույն ուսանող») տրամադրման մրցույթի անցկացման, կազմակերպչական աշխատանքներին՝ գնահատելով ուսանողների կատարած հասարակական աշխատանքները, ակտիվ մասնակցությունը ներբուհական կյանքին, ուսանողական ինքնակառավարման աշխատանքներին:</p>	
<p>Համալսարանի Ուսխորհուրդն ունի ինտերնետային էջ՝ https://web.facebook.com/profile.php?id=100016034530352, և բլոգ՝ www.vphusxorhurd.blogspot.com/:</p>	
<p>ՉՍՓՈՐՈՇԻՉ ը. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:</p>	
<p>Հիմքեր</p>	<p>ՄՈՒՀ-ում գործող ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների մատուցման գնահատման և որակի ապահովման քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները</p>

	<p><u>Հաստատության գործունեության որակի ապահովման գործընթացներում ուսումնառողների դերը սահմանող կանոնակարգերը</u></p> <p><u>Ուսումնական գործընթացների վերաբերյալ ուսումնառողների արձագանքի օրինակները</u></p>
<p><i>Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>Աշխատանքի և ուսումնառության համատեղում համատեքստում պարզվել է, որ առկա համակարգի մագիստրատուրայում կան 100 տոկոսանոց աշխատանքային զբաղվածություն ունեցող կուրսեր, իսկ ընդհանուր առմամբ աշխատում է մագիստրատուրայում սովորողների մոտ 60 %-ը: Նշենք, սակայն, որ օրինաչափ է դառնում նաև բակալավրի ուսանողների աշխատանքային զբաղվածությունը:</p> <p>2023 թվականի փետրվար ամսի դրությամբ աշխատում էր առկա ուսուցման համակարգի չորրորդ կուրսի ուսանողների 19,4 %-ը, երրորդ կուրսի ուսանողների 21 %-ը, երկրորդ կուրսի ուսանողների 11 %-ը: Աշխատող ուսանողներ ունեին նաև առաջին կուրսեցիների շրջանում: Հեռակա ուսուցման համակարգում աշխատող ուսանողների թվաքանակն ավելի շատ է: Այս համատեքստում երբեմն ուսանողները առաջ են բերում հեռավար կրթության կազմակերպման պահանջ:</p> <p>Համալսարանում կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատումն իրականացվում է.</p> <p>ա) սոցիոլոգիական հարցումների միջոցով - կազմակերպվում են հարցումներ՝ ըստ «Վանաձորի պետական համալսարանում «Դասախոսը ուսանողների աչքերով» սոցիոլոգիական հարցման անցկացման» կանոնակարգի դրույթների, բուհի որակի ապահովման կենտրոնի կողմից և, ըստ անհրաժեշտության, առանձին ֆակուլտետներում: Հարցումների համար երբեմն կիրառվում է էլեկտրոնային հարցման համակարգը, որը ժամանակի կառավարման և արդյունքների վերլուծման տեսանկյունից բավականին արդյունավետ գործիք է,</p> <p>բ) ֆոկուս խմբերի միջոցով - հիմնականում կազմակերպում է որակի ապահովման կենտրոնը, երբեմն՝ ուսխորհուրդը,</p> <p>գ) հանդիպումներ ռեկտորի, դեկանների հետ - քննարկվում են կրթական ծառայությունների, ուսումնաօժանդակ կազմի մատուցած ծառայությունների, ուսումնական ռեսուրսների վերաբերյալ հարցեր:</p> <p>Հարցումների արդյունքները վերլուծվում, քննարկվում են տարբեր ստորաբաժանումներում, վերհանված կարիքները հիմնականում քննարկվում են ռեկտորատի և Գիտխորհրդի նիստերում և կարգավորման նպատակով ձեռնարկվում միջոցառումներ:</p> <p>Համալսարանի ռեկտորի նախաձեռնությամբ Ուսանողների միջազգային օրվա առիթով համալսարանում կազմակերպվել է ուսանողների Ինքնակառավարման օր: Նպատակն էր</p>	

ուսանողներին ծանոթացնել համալսարանի տարբեր ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների աշխատանքային մեկ օրվան՝ իրավունքներ, պարտականություններ, աշխատանքի նրբություններ, և մասնակից դարձնել համալսարանի տարբեր աշխատանքներին:

Ըստ ուսանողներից ստացած հետադարձ կապի՝ նախաձեռնությունը հետաքրքիր փորձառություն էր և առաջարկվել է յուրաքանչյուր տարի կազմակերպել:

h / h	Զբաղվածություն/ուսման շարունակություն	4 տարի առաջ		3 տարի առաջ		2 տարի առաջ		նախորդ տարում		ընթացիկ տարում	
		2019-2020		2020-2021		2021-2022		2022-2023		2023-2024	
		միլոնոմ	%	միլոնոմ	%	միլոնոմ	%	միլոնոմ	%	միլոնոմ	%
1	Ավարտելուց հետո ուսումը շարունակող ուսանողների տոկոսը	120	20,87	116	25	137	40,18	184	44,99	-	-
2	Նախքան ավարտելն աշխատանք ստացած շրջանավարտների թիվը		0,00		0,00		0,00		0,00	144	34,62
3	Մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թիվը	270	46,96	137	29,53	163	47,80	156	38,14	96	23,08
4	Ոչ մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թիվը	150	26,09	77	16,59	79	23,17	46	11,25	48	11,54
5	Ավարտելուց անմիջապես հետո աշխատանք ստացած շրջանավարտների թիվը	420	73,04	214	46,12	241	70,67	198	48,41	-	-
6	Գործազուրկ շրջանավարտների տոկոսը՝ ըստ ՄՈՒՀ-ն ավարտելու տարիների	155	26,96	250	53,88	99	29,03	207	50,61	272	65,38

Վերլուծել Չափանիշ 4-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմերը
<ol style="list-style-type: none"> 1. Դիմորդների հավաքագրման մեխանիզմների բազմազանության առկայություն: 2. Ուսանողների անհրաժեշտ տեղեկատվության թափանցիկ և պարբերական իրազեկման ապահովման մեխանիզմների առկայություն: 3. Ուսանողների և վարչական անձնակազմի անմիջական կապի մեխանիզմների առկայություն: 4. Ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող միջավայրի առկայություն: 5. Գիտական խմբերում ուսանողների ներգրավման մեխանիզմներ: 	<ol style="list-style-type: none"> 1. Գործատուների հետ համատեղ նախագծերի իրականացման պասիվություն: 2. Ուսանողների կողմից օտար լեզվի կիրառական իմացության ոչ բավարար մակարդակ: 3. Կրթական գործընթացներում առցանց հարթակների ոչ բավարար կիրառություն: 4. Մագիստրոսական կրթության նկատմամբ ուսանողների հետաքրքրության նվազում:
Արտաքին հնարավորություններ	Վտանգներ
<ol style="list-style-type: none"> 1. Կրթական ծրագրերի մշակման գործընթացում գործատուների ներգրավման ակտիվացում, որը կհանգեցնի բուհի գրավչության ավելացմանը: 2. Միջազգային ստանդարտներին համապատասխան դասավանդման ժամանակակից տեխնոլոգիաների և մեթոդների ներդրում: 	<ol style="list-style-type: none"> 1. Երիտասարդության շրջանում բարձրագույն կրթության անհաժեշտության ընկալման նվազման միտում: 2. Մագիստրոսական կրթության և աշխատաշուկայի պահանջների համահունչության խնդիր: 3. Գիտահետազոտական աշխատանքների նկատմամբ ուսանողների մոտիվացիայի նվազում:
<p><i>Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:</i></p> <ul style="list-style-type: none"> – Ուսանողների շրջանում լրացական կիրառական օտար լեզվի դասընթացների կազմակերպում – Նախագծային կրթության բաղադրիչում գործատուների ներգրավման մեխանիզմների մշակում – Կրթական գործընթացում Moodle հարթակի ներդրում և կիրառման մեղանիզմների ընդլայնում – Մագիստրոսական կրթական ծրագրերի մշտադիտարկում և համապատասխանեցում աշխատաշուկայի արդի պահանջներին 	

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Որակյալ պրոֆեսորադասախոսական կազմի (ՊԴԿ) ձևավորումը, համալրումը և սերնդափոխության իրականացումը ՎՊՀ-ի ռազմավարական ծրագրի իրականացման մասն է կազմում: Բարելավման գործողությունների պլանով կատարվել է կադրային ոլորտում իրականացվող քաղաքականության համապատասխանեցում արդի պահանջներին: Մարդկային ռեսուրսների կառավարման տեսանկյունից նպաստավոր միջավայր է ստեղծվել նոր դասավանդողների մուտքը Համալսարան ապահովելու և աշխատանքային միջավայրում նրանց ադապտացմանը նպաստելու համար: Վերամշակվել են աշխատանքային գործունեության կանոնակարգմանը վերաբերող մի շարք փաստաթղթեր: ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներն ամրագրված են պաշտոնների անձնագրերում, ինչպես նաև ՎՊՀ-ի դասախոսական կազմի ձևավորմանը և համալրմանը վերաբերվող կարգերում և այլ փաստաթղթերում. «ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման», «Դասախոսն ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցման անցկացման» կանոնակարգեր, «ՎՊՀ ամբիոններում դասալսումների անցկացման և քննարկման կազմակերպման» կարգ:

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈԻՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:*

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈԻՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր

Հիմքեր [Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականությունը և ընթացակարգերը](#) [Հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմը](#)՝ ըստ ամբիոնների և որակավորումների՝ նշելով գիտական աստիճանները և կոչումները, աշխատանքային ստաժը բուհում, նրա կողմից վարվող հիմնական դասընթացները [Դասավանդողների խրախուսման քաղաքականությունը և ընթացակարգերը](#)

Վերլուծել ՄՈԻՀ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական որակների համապատասխանությունը ՄՈԻՀ-ի առաքելությանը և կրթական ծրագրի նպատակներին:

ՊԴԿ մասնագիտական որակները պարտադիր համապատասխանում են կրթական ծրագրի

առաքելությանն ու նպատակներին: Այդ չափորոշիչները պարբերաբար կարող են փոփոխվել բուհի առաքելության և նպատակների փոփոխությանը զուգահեռ, ինչպես նաև բուհի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: ՊԴԿ-ն հաստատության առաքելության և նպատակների իրականացման գործընթացը քննարկում և իր վերաբերմունքն է արտահայտում համապատասխան ամբիոնների նիստերում, ֆակուլտետային և գիտական խորհուրդներում տեղի ունեցող քննարկումների ժամանակ:

Հիմնարար և կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով օժտված կոմպետենտ մասնագետներ պատրաստելու նպատակով Վանաձորի պետական համալսարանը, համաձայն իր առաքելությանը, քայլեր է իրականացնում անհրաժեշտ մասնագիտական որակավորում ունեցող ՊԴԿ-ի և ուսումնաօժանդակ անձնակազմի շարունակական զարգացման ուղղությամբ: Համալսարանը ձևավորում և համալրում է իր պրոֆեսորադասախոսական անձնակազմը մրցութային հիմունքներով՝ համաձայն իրականացվող կրթական ծրագրերի և աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում, առանց մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման նպատակով նոր աշխատանքային պայմանագիր կնքելու միջոցով՝ ըստ ՄՌԿ բաժնի կողմից մշակված [պաշտոնների անձնագրերի](#) պահանջների: Դասախոսների տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչները ուսումնական տարվա համար վերանայվում են՝ ըստ համապատասխան կանոնակարգի: 2024 թ. ապրիլի գիտխորհրդի ընդունած որոշման համաձայն վերանայվել են տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչները՝ համաձայն Աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատաժամկետի թույլատրելի սահմանների: Պարբերաբար իրականացվում է ՊԴԿ-ի աշխատանքային գործունեության վերլուծություն՝ ըստ Համալսարանի ամբիոնների ներկայացրած հաշվետվությունների: Բակալավրիատի պատրաստման հիմնական կրթական ծրագրերը, որպես կանոն, իրականացնում են դասընթացների դասավանդման ուղղվածությանը համապատասխանող հենքային կրթություն ունեցող կադրեր, որոնք հետևողականորեն զբաղվում են հետազոտական և գիտամեթոդական գործունեությամբ: ՊԴԿ-ի պաշտոնների և գիտական կոչումների հավակնորդների փաստաթղթերը ստուգվում են ՎՊՀ և ֆակուլտետային գիտական խորհուրդներին կից մրցութային հանձնաժողովների կողմից: 2024 թ.-ի մայիսին լրամշակված և համալսարանի գիտխորհրդով հաստատված «ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման» կարգը կարգավորում է դասախոսների մասնագիտական առաջընթացը, ըստ այստեղ սահմանված պրոֆեսորադասախոսական համակազմի տարակարգերի՝ պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս, ասիստենտ, ինչպես նաև տվյալ տարակարգին հավակնելու որակավորման պահանջների: Ըստ կարգի՝ պրոֆեսորի թափուր պաշտոնին կարող են հավակնել պրոֆեսորի գիտական կոչում ունեցող անձինք, իսկ դոցենտի թափուր պաշտոնին՝ պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք: Ասիստենտի թափուր պաշտոնին կարող են հավակնել գիտական աստիճան ունեցող կամ համապատասխան մասնագիտության գծով ասպիրանտուրան ավարտած անձինք, իսկ դասախոսի թափուր պաշտոնին՝ համապատասխան մասնագիտության գծով մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք: Նշված պահանջները ապահովում են դասախոսների մասնագիտական առաջընթացը:

Վերլուծել ՄՈՒՀ-ի պրոֆետրադասսախոսական և ուսումնասովորական կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համալսարանի պրոֆետրադասսախոսական անձնակազմի՝ հաստիքային և ժամավճարային կարգով աշխատողներով համալրումը իրականացվում է մրցութային հիմունքներով և աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում առանց մրցութային ընտրության պաշտոնների տեղակալման նպատակով նոր աշխատանքային պայմանագիր կնքելու միջոցով՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջների և դրույթների, ՎՊՀ ներքին կարգապահական կանոնների և կոլեկտիվ պայմանագրի դրույթների: Մրցույթների հետ կապված հարցերը կարգավորելու համար գործում է մրցութային հանձնաժողով՝ բաղկացած Համալսարանի առաջատար մասնագետներից և ուսանողներից, որն ուսումնասիրում է մրցույթին ներկայացվող անձանց փաստաթղթերը: Որակյալ կադրեր ներգրավելու համար Համալսարանն ուղղորդվում է նաև պաշտոնների անձնագրերով: Համալսարանի կրթական ծրագրերի պահանջներից ելնելով՝ Համալսարանը հրավիրում է դասախոսներ այլ ՄՈՒՀ-երից, ինչպես նաև ուրտի մասնագետներ՝ կնքելով համապատասխան աշխատանքային պայմանագրեր:

ԶԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆետրադասսախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Հիմքեր [Մասնագիտության կրթական ծրագրի պրոֆետրադասսախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները](#)
[Մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների վերանայման քաղաքականությունը](#)
[Վերանայման վերլուծությունները և արդյունքների արտացոլումը նոր քաղաքականության մեջ](#)

Հիմնավորել պրոֆետրադասսախոսական կազմի կոմպետենցիաների համապատասխանությունը մասնագիտության կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող որակավորումներին:

ՎՊՀ պրոֆետրադասսախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներն ամրագրված են պաշտոնների անձնագրերում, ինչպես նաև ՎՊՀ-ի դասախոսական կազմի ձևավորմանը և համալրմանը վերաբերվող կարգերում, մասնավորապես՝ «ՎՊՀ պրոֆետրադասսախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման» կանոնակարգում: Պրոֆետրադասսախոսական անձնակազմի մասնագիտական որակները պարտադիր համապատասխանում են կրթական ծրագրի առաքելությանն ու նպատակներին: Մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների համապատասխանությունը կրթական ծրագրի սահմաններում շնորհվող որակավորումներին դրսևորվում է դասավանդման պրոցեսի մշտադիտարկման և շրջանավարտների շրջանում

անցկացված հարցումների և մնացորդային գիտելիքների ստուգման արդյունքում: Այդ պահանջները պարբերաբար կարող են փոփոխվել բուհի առաքելության և նպատակների փոփոխությանը զուգահեռ, ինչպես նաև բուհի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Մրցութային հանձնաժողովը և ղեկավարությունը առաջնորդվում են ընտրվող պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներով: Բակալավրի հիմնական կրթական ծրագրերը իրականացնում են դասընթացների դասավանդման ուղղվածությանը համապատասխանող հենքային կրթություն ունեցող կադրեր, որոնք հետևողականորեն զբաղվում են հետազոտական և գիտամեթոդական գործունեությամբ:

Հատուկ մասնագիտական դասընթացներ դասավանդող դասախոսները ունեն գիտական աստիճան (կամ գիտական կոչում, արվեստի ոլորտի պատվավոր կոչում և այլն) և/կամ գործունեության համապատասխան ոլորտում աշխատանքային փորձ: Հիմք ընդունելով նախորդ փորձագիտական զեկույցի դիտարկումները՝ ներկայումս բուհի համապատասխան ամբիոնները աշխատանքներ են տանում կրթական ծրագրերում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների ձևավորման ուղղությամբ: «ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման» կանոնակարգում կատարված փոփոխությունների արդյունքում բուհում նախկինում գործող 4 տարակարգի փոխարեն սահմանվել է պրոֆեսորադասախոսական կազմի 5 տարակարգ՝ պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս, ասիստենտ: Պրոֆեսորների թափուր հաստիքների ընտրությունը կազմակերպվում է Համալսարանի գիտխորհրդում: Հավակնորդների փաստաթղթերը ներկայացվում են համալսարանի մրցոյթային հանձնաժողովին: Մյուս չորս տարակարգերի թափուր հաստիքների ընտրությունները կազմակերպվում են ֆակուլտետների խորհուրդներում, իսկ փաստաթղթերը ներկայացվում են ֆակուլտետային մրցոյթային հանձնաժողովներին: Մրցութային հանձնաժողովները և ղեկավարությունը առաջնորդվում են ընտրվող պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Հիմքեր [Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման քաղաքականությունը և ընթացակարգերը](#)
[Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման մեխանիզմներն ու գործիքները](#)
 Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի [գնահատման գործընթացի արդյունավետությունն արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ](#)
 Արձագանքների օրինակները (ուսումնառողների, այլ դասավանդողների, ղեկավարների)

Վերլուծել և հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի պարբերաբար գնահատման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը /կատարել համառոտ

մեջբերումներ համապատասխան հիմքերից:

ՎՊՀ-ում գործում են դասախոսական կազմի գնահատման մի շարք մեխանիզմներ, որոնցից կարևորվում են դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները և դասալուծումները: Ուսանողական հարցումների արդյունքները էական դերակատարություն ունեն դասախոսների մասնագիտական առաջընթացի ապահովման գործում: ՎՊՀ-ում ՊԴ կազմի գնահատումն իրականացվում է 2015 թվականին մշակված և 2019 թվականին, այնուհետև՝ 2023 թվականին փոփոխությունների ենթարկված «Դասախոսն ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցման կանոնակարգի համաձայն: Ուսանողների կողմից դասախոսական կազմի գնահատման մեխանիզմի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հարցման մեթոդաբանությունը, ընթացակարգը և չափանիշները (հարցաշարը) պարբերաբար լրամշակվել և կատարելագործվել են: Հարցման անաչառությունն ապահովելու նպատակով հարցումները և տվյալների մշակումն իրականացվում են կենտրոնացված, հարցման անցկացման պայմանների և արդյունքների վերլուծության միասնական չափանիշների հիման վրա: Նախորդ փորձագիտական զեկույցում առաջարկվում էր մշակել հարցումների արդյունքում վեր հանված խնդիրների լուծման մեխանիզմներ: Այս ուղղությամբ ամբիոններում իրականացվում են հստակ քայլեր: Ուսանողական հարցման արդյունքները քննարկվում են համապատասխան ամբիոնում, այնուհետև ֆակուլտետի խորհրդի նիստում: Անհրաժեշտության դեպքում քննարկման արդյունքում մշակվում են համապատասխան առաջարկություններ և խորհուրդներ՝ ուղղված տվյալ դասախոսի դասավանդման որակի բարելավմանը և բացահայտված տարաբնույթ թերությունների շտկմանը: Ուսանողների գրավոր կարծիքները քննարկվում են ֆակուլտետի խորհրդի նիստում: Ֆակուլտետի խորհրդում ամբիոնի վարիչը ներկայացնում է ցածր միավորներ հավաքած դասախոսների դասավանդման որակի բարելավմանն ուղղված քայլերը, արդյունքները: Ուսանողական հարցման ընդհանուր ամփոփ արդյունքներն օգտագործվում են հավակնորդի՝ պաշտոնում ընտրվելու և առաջխաղացման գործընթացում: Ամփոփելով ուսանողական հարցումների անցկացման գործընթացը՝ կարելի է արձանագրել, որ հարցումների արդյունքների վերլուծությունը և բարելավող միջոցառումների իրականացումը նպաստել են դասախոսների աշխատանքի որակի և արդյունավետության բարձրացմանը: Ուսանողական հարցումն իրականացվում է այն ֆակուլտետում, որտեղ դասավանդել է դասախոսը՝ պարտքերի մարմանը հաջորդող ամսվա ընթացքում: Ավարտական կուրսերում երկրորդ կիսամյակի վերաբերյալ հարցումն իրականացվում է քննաշրջանի ավարտից հետո՝ մինչև ավարտական որակավորման քննությունների սկիզբը: Հնգամյա ժամկետով ընտրված դասախոսի համար անցկացվում է առնվազն երեք հարցում: Հրավիրված դասախոսների համար հարցումն անցկացվում է Համալսարանում առնվազն մեկ տարի աշխատելուց հետո: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի գնահատման համար ՎՊՀ-ում գործում է 2016 թ-ին ընդունված և 2023 թ-ին փոփոխությունների ենթարկված «Ամբիոններում դասալուծումների անցկացման և քննարկման կազմակերպման կարգ», որը հնարավորություն է տալիս դասալսման արդյունքներով գնահատել դասախոսի մասնագիտական, մանկավարժական և մեթոդական պատրաստվածության աստիճանը, կազմակերպական, դասախոս-ուսանող հարաբերությունների ձևավորման և դասը

կազմակերպելու և վարելու համար ժամանակակից մեթոդներ կիրառելու, նոր տեխնոլոգիաներ ներդնելու ունակությունները: Պրոֆեսորադասախոսական կազմի անհրաժեշտ որակի ապահովման համար չկան գործող մեխանիզմներ և ընթացակարգեր, սակայն կրթական ծրագրերի մշտադիտարկման, ուսանողների հարցումների, դասալսումների անցկացման և վերլուծության միջոցով ամբիոններում այս ուղղությամբ նախանշվում են որոշակի ուղենիշեր՝ գործող նոր մեխանիզմներ և ընթացակարգեր ձևավորելու նպատակով:

ՉԱՓՈՂՈՇԻՉ դ. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Պահանջվող որակավորումներին համապատասխան դասավանդողների կոմպետենցիաների շրջանակի ընդլայնումն ապահովող մեթոդները և հիմքերը

[Դասավանդողների կատարելագործման միջոցառումների պլանները՝ քսա մեթոդական, մասնագիտական և բարեփոխումների ուղղվածությունների](#)

[Դասավանդողների կատարելագործման թեմաները](#)

[Դասավանդողների կատարելագործման միջոցառումների ժամանակացույցը](#)

[Այլ հիմքեր](#)

Վերլուծել և հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործման գործընթացների արդիականությունը վերջին 3 տարիների համար /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործման գործընթացների արդիականացման ուղղությամբ Վանաձորի պետական համալսարանում ձեռնարկվել են որակավորման բարձրացմանն ուղղված քայլեր: Մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ընդլայնմանը և խորացմանը նպաստում են դասավանդող անձնակազմի վերապատրաստումները, որոնք կատարվում են տարբեր ուղղություններով, հատուկ մշակված ծրագրերով՝ հաշվի առնելով Համալսարանի ռազմավարական զարգացման տվյալ փուլի խնդիրները: Աշխատանքներ են տարվում արտաքին շահակիցների հետ՝ նրանց ներգրավելու ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրի վերանայման, տարածաշրջանի նաև ՀՀ-ի ամբողջ տարածքում աշխատաշուկայի հնարավոր պահանջներն ուսումնասիրելու, պրոֆեսորադասախոսական կազմի պարտադիր վերապատրաստման ուղղությամբ: Բարձրորակ դասախոսական կազմի ներգրավումը և նրան շարունակական կատարելագործման հնարավորությունների տրամադրումը ՎՊՀ որակյալ կադրային ներուժի ձևավորման կարևորագույն սկզբունքն է :Այդ նպատակով ՎՊՀ-ում ստեղծվել և գործում են դասախոսների որակավորման բարձրացման ծրագրեր: Համալսարանի աշխատակիցների որակավորման բարձրացումը և վերապատրաստումը շարունակական գործընթացներ են՝ միտված պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական կազմի համալրմանը և աշխատանքի որակի բարելավմանը: Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման

բարձրացման աշխատանքները կազմակերպում է Համալսարանի Կրթական բարեփոխումների և վերապատրաստման կենտրոնը՝ համապատասխան ամբիոնի /ների/ հետ համատեղ: ՎՊՀ աշխատակիցների և դասախոսների որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացները կազմակերպվում են՝ ըստ «Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և վերապատրաստման, ուսումնաօժանդակ և վարչական կազմի որակավորման բարձրացման ընթացակարգի»: Ամբիոնը, Կենտրոնի և Աշխատախմբի հետ համատեղ, կարիքների վերհանման արդյունքում մշակել է որակավորման բարձրացման դասընթացի ծրագիր, որը հաստատվել է Ռեկտորի կողմից: Դասախոսը, ծանոթանալով առաջարկվող դասընթացների ցանկին, ընտրել է իր նախընտրած դասընթացը: Կենտրոնը սահմանված ժամկետում ձևավորել է խմբերը: Ամբիոնը մասնագիտական որակավորման բարձրացման կամ վերապատրաստման դասընթաց կազմակերպելու նպատակով կարող է հրավիրել ամբիոնի գիտական ուղղվածությամբ, գիտական կոչում ունեցող կամ ոլորտի երկարամյա փորձառություն ունեցող մասնագետի այլ հաստատությունից: Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման դասընթացներն իրականացվում են 4 բաղադրիչներով, յուրաքանչյուր բաղադրիչի տևողությունը կազմում է 18 ժամ:

- «Գիտական հետազոտության մեթոդաբանություն» որակավորման բարձրացման դասընթացի մասնակիցների թիվը՝ 58:
- «Մանկավարժահոգեբանական կարողունակություններ» որակավորման բարձրացման դասընթացի մասնակիցների թիվը՝ 26:
- «Նախագծերի կառավարում» որակավորման բարձրացման դասընթացի մասնակիցների թիվը՝ 49:
- ««Moodle» հեռավար ուսուցման համակարգի հմտություններ» որակավորման բարձրացման դասընթացի մասնակիցների թիվը՝ 39:

Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման դասընթացների մասնակիցների ընդհանուր թիվը կազմում է 172:

Բուհի պրոֆեսորադասախոսական կազմի մի շարք անդամներ միջազգային ծրագրերի շրջանակում անցել են վերապատրաստման ծրագրեր:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Հիմքեր [Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի ցանկը \(նշելով որակավորումները, գիտական աստիճանները և/կամ կոչումները\)](#)
[Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի կայունությունն ապահովող քաղաքականությունը և ընթացակարգերը](#)
[Համատեղությամբ աշխատող դասավանդողների ցանկը \(նշելով որակավորումները, գիտական աստիճանները և/կամ կոչումները\)](#)

Վերլուծել և հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողությունների արդիականությունը վերջին 3 տարիների համար / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ՎՊՀ-ում հիմնական դասախոսական կազմը հետևյալն է՝ պրոֆեսոր՝ 7, դոցենտ՝ 70, ասիստենտ և դասախոս՝ 49: Հիմնական դասախոսական կազմի 126 անդամներից 102-ը ունեն գիտական աստիճան և կոչում:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչները վերջին երեք տարիների ընթացքում պարբերաբար լրամշակվել են , կատարվել են փոփոխություններ աշխատանքի ծավալի հաշվարկի օրինակելի չափորոշիչներում՝ պայմանավորված լսարանային և արտալսարանային ժամաքանակների հարաբերակցությամբ: 2024թ-ի մայիսին ՎՊՀ գիտական խորհրդի հաստատմամբ «Պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման կանոնակարգում» կատարվել է աշխատանքի ծավալի հաշվարկի չափորոշիչների փոփոխություն՝ ըստ պրոֆեսորադասախոսական կազմի հինգ տարակարգերի: 2024 թ-ին լրամշակվել է «Պրոֆեսորադասախոսական կազմի մրցույթային ընտրության և պաշտոնների տեղակալման կանոնակարգը», ինչի արդյունքում պրոֆեսորադասախոսական կազմը համալրվել է մրցույթային հիմունքներով: Համապատասխան կանոնակարգում սահմանվել են աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում առանց մրցույթային ընտրության նոր աշխատանքային պայմանագիր կնքելու պայմանները: Պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով համալսարանում ձևավորվում են ֆակուլտետային և համալսարանական մրցույթային հանձնաժողովներ , որոնք ստուգում են հավակնորդների կողմից ներկայացվող փաստաթղթերը, մրցույթին դիմած դասախոսների մասնագիտական որակների համապատասխանությունը կրթական ծրագրերի առաքելությանը և նպատակներին: Կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով աշխատանքային պայմանագրեր են կնքվում բարձր որակավորում ունեցող ոլորտի մասնագետների հետ:

Համալսարանում գործում են պրոֆեսորադասախոսական անձնակազմի կայունության ապահովման ,արդյունավետ աշխատանքի խրախուսման մեխանիզմներ: Համալսարանի աշխատողների խրախուսումը հաշվարկվում և վճարվում է տարվա ավարտին՝ ՎՊՀ տարեկան նախահաշվում գիտական, ուսումնական, մշակութային, կազմակերպչական աշխատանքների դրամական խրախուսման համար հատկացված գումարը համամասնորեն բաշխվում է աշխատողների միջև: Վերջին երեք տարիներին հիմնականում պահպանվել են պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարակարգերի միջև եղած հարաբերակցությունները: Ժամավճարային կարգով աշխատողների թիվը՝ վերջին երեք տարիներին էական փոփոխություն չի կրել: Դասախոսների միջին տարիքային բաշխումը մնացել է անփոփոխ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ.ՍՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հիմքեր [Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը](#)
[Սկսնակ դասավանդողների խրախուսման և մասնագիտական](#)

[առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը](#)
[Սկսնակ դասավանդողների մենթորության քաղաքականությունը և ընթացակարգերը](#)

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը վերջին 3 տարիների համար /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ՎՊՀ-ում դասախոսների մասնագիտական և մանկավարժական առաջընթացի ապահովման միասնական քաղաքականության` դասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման, դասախոսների որակավորման բարձրացման և նրանց աշխատանքի գնահատման ու խրախուսման ընթացակարգերը: Այս գործընթացում առաջնահերթ նշանակություն ունի պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կարգը, որը լրամշակվել և ՎՊՀ Գիտխորհրդով հաստատվել է 2024 թ-ի մայիսին : ՎՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կարգը կարգավորում է նաև դասախոսների մասնագիտական առաջընթացը, քանի որ այստեղ հստակ սահմանված են պրոֆեսորադասախոսական համակազմի հինգ տարակարգեր` պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս, ասիստենտ, ինչպես նաև տվյալ տարակարգին հավակնելու որակավորման պահանջները: Ըստ կարգի, պրոֆեսորի թափուր պաշտոնին կարող են հավակնել պրոֆեսորի գիտական կոչում ունեցող անձինք, իսկ դոցենտի թափուր պաշտոնին` պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք: Ավագ դասախոսի թափուր պաշտոնին կարող են հավակնել գիտական աստիճան ունեցող կամ համապատասխան մասնագիտության գծով ասպիրանտուրան ավարտած անձինք, իսկ դասախոսի թափուր պաշտոնին` համապատասխան մասնագիտության գծով մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք, ասիստենտի պաշտոնին` համապատասխան մասնագիտության գծով մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք: Պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության և պաշտոնների տեղակալման մրցույթների կազմակերպման ընդհանուր վերահսկողության նպատակով ստեղծվել և գործում են մրցութային հանձնաժողովեր, որոնց տրված եզրակացությունների հիման վրա որոշվում են տվյալ պաշտոնի համար սահմանված պահանջներին հավակնորդի համապատասխանության գնահատման արդյունքները և իրականացվում է մրցույթը: Նշված պահանջները ապահովում են դասախոսների մասնագիտական առաջընթացը: Մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ընդլայնմանը և խորացմանը նպաստում են դասավանդող անձնակազմի վերապատրաստումները, որոնք կատարվում են տարբեր ուղղություններով` հատուկ մշակված ծրագրերով` հաշվի առնելով Համալսարանի ռազմավարական զարգացման տվյալ փուլի խնդիրները: 2024 թ. հունվարի 9-ին ՎՊՀ Գիտական խորհուրդը հաստատել է «Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և վերապատրաստման ուսումնաօժանդակ և վարչական կազմի որակավորման բարձրացման ընթացակարգը», ինչը պրոֆեսորադասախոսական կազմին շարունակական կատարելագործման հնարավորություններ է ընձեռնում: ՎՊՀ որակյալ կադրային ներուժի

ձևավորման կարևորագույն սկզբունք է, ՎՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման իրականացումը բաց մրցույթային ընտրության միջոցով: Պաշտոնների տեղակալման համար սահմանվում են չափանիշներ, որոնք ապահովում են դասախոսների մասնագիտական որակների համապատասխանությունը տվյալ ժամանակահատվածի կրթական ծրագրերի առաքելությանը և նպատակներին: Անհրաժեշտության դեպքում ուսումնական գործընթացի որակի ապահովման նպատակով աշխատանքի են հրավիրվում բարձր որակավորում ունեցող մասնագետներ: Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողությունների արդիականությունը ապահովելու նպատակով կարևորվում է բարձրագույն և/կամ հետբուհական ասպիրանտական կրթության զարգացումը: Համալսարանում իրականացվում է նաև կադրերի պատրաստումը հայցորդության միջոցով: Ներկայումս ՎՊՀ-ում գրանցված է 6 հայցորդ և 2ասպիրանտ, որոնցից 2-ի ուսուցումը ընդհատված է ֆիզիոլոգիական արձակուրդի անցնելու կապակցությամբ: Պրոֆեսորադասախոսական կազմի աշխատողների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով բուհում գործում է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության խրախուսման կարգ», գիտական կոչումների համար սահմանված են հավելվածներ: Բուհում գործող «Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և վերապատրաստման ուսումնաօժանդակ և վարչական կազմի որակավորման բարձրացման ընթացակարգը» նպաստում է Պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետության բարձրացմանը: «Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և վերապատրաստման, ուսումնաօժանդակ և վարչական կազմի որակավորման բարձրացման ընթացակարգ»-ի համաձայն ամբիոնների նախաձեռնությամբ պետք է իրականացվեն պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումներ, Այս ուղղությամբ ամբիոններում պլանավորվում են հստակ քայլեր :

ՉԱՓՈՐՈՇԻՉ է. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Հիմքեր [Վարչական աշխատակազմի ցանկը` ըստ հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների](#)
[Ուսումնաօժանդակ աշխատակազմի գործառույթները](#)
[Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի կայունության ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը](#)
[Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը](#)
[Աշխատակազմի գործունեության որակն ապահովող մեխանիզմները և գործիքները](#)

Վերլուծել ՄՈՒՀ-ի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի արդյունավետությունը վերջին 3 տարիների համար /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ՎՊՀ-ի ուսումնաօժանդակ, վարչական և վարչատնտեսական անձնակազմի ընդհանուր թիվը

117 է, որից ուսումնաօժանդակը՝ 30:

2024 թ հունվարի 9-ին ՎՊՀ գիտական խորհուրդը հաստատել է «Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և վերապատրաստման ուսումնաօժանդակ և վարչական կազմի որակավորման բարձրացման ընթացակարգը», ինչը ուսումնաօժանդակ և վարչական որակյալ կադրային ներուժի ձևավորման կարևորագույն սկզբունք է: Բուհում գործող «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի վարչական և ուսումնաօժանդակ կազմի գործունեության խրախուսման կարգը հնարավորություն է տալիս գնահատել և խրախուսել աշխատողների աշխատանքը, բարձրացնել նրանց աշխատանքի արդյունավետությունը:

Վանաձորի պետական համալսարանում վարչական, ուսումնաօժանդակ, վարչատնտեսական պաշտոնների տեղակալումը իրականացվում է համաձայն բուհի կայքում տրված հայտարարության, ինչից հետո պաշտոնի հավակնորդների հետ անց է կացվում հարցազրույց: Համալսարանի վարչական կազմի աշխատողները գնահատվում են պլանավորված և իրականացված նպատակների, աշխատանքների, ինչպես նաև տարվա ընթացքում ցուցաբերած նախաձեռնությունների հիման վրա: Տարեկան մեկ անգամ (դեկտեմբեր ամսին) իրականացվում է աշխատակիցների գնահատում և խրախուսում: Վարչական աշխատակիցների գնահատման համար ներդրվում է տարեկան գնահատման համակարգ, որը հիմնված է անմիջական ղեկավարի կողմից աշխատակիցների անհատական գնահատման վրա: Նշված քայլերը միտված են բուհի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի արդյունավետության բարձրացմանը:

Վերլուծել Չափանիշ 5-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Կրթական ծրագրի առաքելությանն ու նպատակներին համապատասխան պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի առկայություն:	1. Պրոֆեսորադասախոսական կազմի սերնդափոխության իրականացման ոչ բավարար մակարդակ:
2. Պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման հստակ քաղաքականության առկայություն:	2. Օտար լեզուներին տիրապետող դասախոսական կազմի անդամների ոչ բավարար քանակ:
3. Պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական կազմի խրախուսման համակարգի առկայություն:	3. Համալսարանի ամբիոններից պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի անդամների միջազային ծրագրերում թույլ ներգրավվածություն:
4. Պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական կազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման հստակ մշակված	

<p>քաղաքականություն:</p> <p>5. Շարժունության ծրագրերում Համալսարանի Օտար լեզուների և գրականության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվ ներգրավվածություն:</p> <p>6. Գիտական խմբերում պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվածություն:</p>	
<p>Արտաքին հնարավորություններ</p>	<p>Վտանգներ</p>
<p>1. Պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի հավաքագրման ժամանակակից մեխանիզմների մշակում և կիրառում:</p> <p>2. Պրոֆեսորադասախոսական կազմի և արտաքին շահառուների կապերի ընդլայնում և խորացում՝ գիտահետազոտական գործունեություն իրականացնելու, ՄԿԾ-ների արդիականացումն ապահովելու նպատակով:</p> <p>3. Միջազգայնացման գործընթացներում պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի մասնակցության ընդլայնում և խորացում</p>	<p>1. Ցածր վարձատրության պատճառով երիտասարդ կադրերի թույլ մոտիվացում:</p> <p>2. Ժողովրդագրական առկա խնդիրների պատճառով ուսանողների թվի անկում և որպես հետևանք՝ հաստիքների կրճատում:</p>
<p><i>Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:</i></p> <ul style="list-style-type: none"> - Պրոֆեսորադասախոսական անձնակազմի՝ ակադեմիական շարժունության և միջազգային գիտահետազոտական նախագծերում մասնակցության խթանում: - Պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական վերապատրաստմանն օժանդակող աշխատանքների խթանում, ատեստավորման գործընթացների կատարելագործում: - Պրոֆեսորադասախոսական անձնակազմի զարգացման, սերնդափոխության ապահովման, գիտական գործունեությամբ զբաղվելու խթանման մեխանիզմների մշակում և ներդրում: 	

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

ԶԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:*

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանը կարևորում է հիմնարար և կիրառական հետազոտությունների պլանավորումը և իրականացումը: Համալսարանը ձգտում է դառնալ տարածաշրջանում գիտական գաղափարների հղացման և գիտական նվաճումների ու նորարարությունների փոխանցման (տրանսֆեր) խթանիչ կենտրոն: Գիտահետազոտական գործունեության իրականացումը, զարգացումը և կապը ուսումնառության հետ ամրագրված է՝ «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2021-2025 թթ. ռազմավարական ծրագրում և Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտության ոլորտի զարգացման 2023-2025 թթ. ռազմավարության մեջ:

<p>ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:</p>	
<p>Հիմքեր</p>	<p>Հետազոտությունների ռազմավարությունը և ուղղությունները Հաստատության ռազմավարության և հետազոտությունների ուղղությունների միջև կապն արտացոլող փաստաթուղթը (կցել կամ հղում կատարել) Հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմները</p>
<p><i>Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը վերջին 3 տարիների համար և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>Համալսարանը կարևորելով հետազոտության կազմակերպումը և իրականացումը, հաշվի առնելով 2019թ. փորձագիտական զեկույցում արձանագրված խնդիրները, առ այն որ <<...հստակ ռազմավարություն չի իրականացվում հաստատությունում...>>, <<...բուհում գործում են մի շարք ամբիոններ, որոնց գիտական պոտենցիալը չի ներառվում հետազոտական համակարգում...>>, ինչպես նաև, համաձայն համալսարանի բարելավման գործողությունների պլանի, հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ է կատարել գիտության ոլորտի զարգացման ռազմավարության ստեղծման ուղղությամբ, և 2023թ. հաստատել է <u>Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտության ոլորտի զարգացման 2023-2025 թթ. ռազմավարությունը</u>:</p> <p>Համալսարանի գիտության զարգացման գերակայություններն են.</p> <ol style="list-style-type: none"> 1) Հայագիտություն 2) Գիտություններ կյանքի և առողջության մասին 3) Նորագույն արդյունավետ տեխնոլոգիաներ, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, այդ թվում՝ արհեստական բանականության օգտագործմամբ տեխնոլոգիաներ 	

4) Տնտեսության և հասարակության զարգացման կարևորագույն հիմնախնդիրների լուծմանն ուղղված հիմնարար և կիրառական հետազոտություններ

Այս ուղղությունների հիման վրա էլ Համալսարանի ամբիոններում հաստատվել են գիտահետազոտական թեմաներ՝ երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորմամբ: Համալսարանը կարևորում է նաև գիտահետազոտական գործունեության ծավալումը միջազգային ասպարեզում, ընդ որում՝ ոչ միայն գիտաժողովների մասնակցությամբ, այլև համատեղ ծրագրերի իրականացմամբ: Ներկայումս աշխատանքներ են տարվում ավելացնելու արտերկրում միջազգային գիտաժողովների մասնակցությունը և համատեղ հետազոտական ծրագրերի կազմակերպման ուղղությամբ:

Համալսարանում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների արդյունքները վավերացվում են.

- ✓ մագիստրոսական ու թեկնածուական ատենախոսությունների պաշտպանությունների, գիտական հոդվածների, մենագրությունների, մեթոդական ուղեցույցների, ձեռնարկների, զեկույցների հրատարակման, հանրայնացման, վերջիններիս արդյունքների կիրարկման մեխանիզմներով ([Հավելված 6.ա.1.](#) և [Հավելված 6.ա.2.](#)),
- ✓ հանրապետական ու միջազգային [գիտաժողովներում](#) ՎՊՀ-ում իրականացված հետազոտությունների վերաբերյալ հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմով,
- ✓ պրոֆեսորադասախոսական համակազմի հաշվետվողականության համակարգի կիրառմամբ,
- ✓ դրամաշնորհային ծրագրերին հայտադիմումներում մասնակցությամբ,
- ✓ ամբիոններում գործող գիտական խմբերի հրատարակված աշխատանքներում:

Այս ամենը արտահայտվում է նաև ՎՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի գիտական խորհրդի նիստերում [«Ամբիոնների գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության վերլուծությունը»](#) և [«ՎՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի հաշվետվություն»](#) զեկույցներում:

Համալսարանի դասախոսները իրենց աշխատանքները տպագրում են ԲՈԿ ցանկում ընդգրկված ամսագրերում, տարբեր միջազգային ամսագրերում, այդ թվում ամսագրերում, որոնք ընդգրկված են Scopus և Web of Science շտեմարաններում: Շատ աշխատանքներ համալսարանի դասախոսները տպագրում են նաև [ՎՊՀ Գիտական տեղեկագրում](#), որն ընդգրկված է ԲՈԿ ցանկում, և մասնակցում են համալսարանում կազմակերպված միջոցառումներին:

Ուսանողների հետ կատարվող գիտահետազոտական աշխատանքները վավերացվում են հոդվածների և գիտաժողովների մասնակցության մեխանիզմով: Համալսարանը ունի ուսանողական հետազոտական աշխատանքների հրատարակման համար «Մագիստրոս» ժողովածու, որի աշխատանքները կազմակերպվում են [«Մագիստրոս» ժողովածուի հրատարակման կանոնակարգով](#): Յուրաքանչյուր տարի համալսարանի ՈԻԳԸ կազմակերպում է ուսանողական գիտաժողով, որի արդյունքները հրատարակվում են ՈԻԳԸ գիտաժողովի ժողովածուի մեջ:

Բոլոր ժողովածուները հասանելի են ՎՊՀ կայքում: ՎՊՀ Գիտական տեղեկագրում ([U](#), [F](#)) հրատարակված աշխատանքները տեղադրված են նաև e-library էլեկտրոնային հարթակում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հիմքեր	Միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերը Հետազոտությունների մեթոդաբանությունն ու հրապարակումներին ներկայացվող պահանջները
--------	--

Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերի իրականացման արդյունավետությունը վերջին 3 տարիների համար և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համալսարանի ամբիոններն ունեն գիտահետազոտական թեմաներ՝ կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորմամբ: Հաշվի առնելով 2019թ. փորձագիտական զեկույցում նշված խնդիրները, առ այն որ համալսարանում առկա չեն բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում հրատարակված հոդվածներ, համալսարանի դասախոսական կազմի համատեղ հոդվածներ, մասնակցություն դրամաշնորհային մրցույթներին, հաշվետու ժամանակաշրջանում նախաձեռնել է աշխատանքներ նշված խնդիրների լուծման ուղղությամբ: 2022 թ. հունվարի 27-ին գիտխորհրդի կողմից հաստատվել է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտական խմբերի կանոնակարգը ([Հավելված 6.բ.1.](#)): Կանոնակարգի հաստատումից հետո ամբիոններում իրենց գիտահետազոտական թեմաների շրջանակում ձևավորվել են [գիտական խմբեր](#):

Գիտական խմբերում ընդգրկված են երիտասարդ մասնագետներ ի դեմս ասպիրանտների, հայցորդների, մագիստրատուրայի և բակալավրի ուսանողների: Գիտական խմբի շրջանակում համալսարանը ֆինանսավորում է հետազոտություններ, որոնց վերջնաարդյունքը Scopus և Web of Science շտեմարաններում հոդվածի հրատարակումն է: Ֆինանսներ հատկացվում է հետազոտության համար անհրաժեշտ նյութերի, սարքերի, միջոցների ձեռք բերման համար, գործուղման, հոդվածի թարգմանության և տպագրման համար: Արդյունքում 2022 թ. ձևավորվել է 5 գիտական խումբ, 2023 թ.՝ 4 գիտական խումբ, 2024 թ.՝ 4 գիտական խումբ:

Գիտական խմբերի ստեղծումը հնարավորություն է տալիս հետազոտությունների արդյունքում ձևավորվել խմբեր ներպետական և միջազգային դրամաշնորհային հայտեր ներկայացնելու համար:

Գիտական խմբի շրջանակում համալսարանը ֆինանսավորում է Scopus և Web of Science շտեմարաններում հոդված տպագրելը: Ֆինանսներ հատկացվում է հոդվածի տպագրման, թարգմանության, հետազոտության համար, գործուղման, հետազոտության համար անհրաժեշտ նյութերի, սարքերի, միջոցների գնման համար:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում ֆինանսավորման է արժանացել քիմիայի և կենսաբանության ամբիոնի դասախոսների կողմից ներկայացված հայտը («Թանթրվենի սև (Sambucus nigra L.) բուսատեսակի գեներատիվ օրգաններից էկոլոգիապես մաքուր բնամթերքի և բնական ներկի ստացման մեխանիզմների առանձնահատկությունները»), որի շրջանակում

խումբը ձեռք է բերել «Թանթրվենի սև բույսից թուրմի պատրաստման եղանակ» գյուտի կարճաժամկետ արտոնագիր:

2021-2024թթ. ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի և հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի հետ համատեղ միջազգային մրցույթի դրամաշնորհային ծրագրի անդամ էր հանդիսանում քիմիայի և կենսաբանության ամբիոնի դասախոսը Երևանի պետական համալսարանի «Ալգինատ-Ag հիդրոզոլների սինթեզը և դրանց հիման վրա նոր հակաբիոտիկների հետ միացության ձևավորում՝ ձկների հիվանդությունների կանխարգելման և բուժման համար» ներկայացված թեմայով նախագծում:

2024թ.-ին Գիտության պետական կոմիտեի «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթին համալսարանից ներկայացվել է **25RG-2H027** (Հեռանկարային դեղաբույսերի կենսակոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրումը կլիմայի գլոբալ փոփոխության պայմաններում) և **25RG-6B101** (Գրական արևելահայերենի կառուցատիպը՝ նորագույն լեզվաբանության հայեցակերպերով) ծածկագրերով հայտերը, արդյունքները դեռ հայտնի չեն:

2019-2024 թթ. ընթացքում համալսարանում կազմակերպվել է չորս միջազգային գիտաժողով: Գիտաժողովների սակավ լինելը պայմանավորված է եղել այդ ժամանակահատվածում համավարակով և պատերազմով: «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում» խորագիրը կրող 7-րդ միջազգային գիտաժողովը նախատեսված է 2024 թ. Հոկտեմբերին ([Հավելված 6.բ.2.](#)):

Համալսարանի Գիտական տեղեկագրի երկու պրակները ընդգրկված են ԲՈԿ ցանկում: Աշխատանքներ են տարվել ՎՊՀ Գիտական տեղեկագրերի վարկանիշը բարձրացնելու ուղղությամբ ([Հավելված 6.բ.3.](#)): Վերանայվել է կանոնակարգը ԲՈԿ-ի նոր ներկայացված պահանջներին համապատասխանեցնելու համար: Այդ իսկ նպատակով 2022 թ. տարվա սկզբին փոփոխություն է տեղի ունեցել տեղեկագրերի խմբագրական կազմերում, և ընդգրկել են գիտնականներ արտասահմանից: Այժմ հնարավորություն կա օտարալեզու հոդվածները ուղարկելու արտասահմանյան խմբագրական կազմի անդամներին գրախոսման համար:

Համալսարանը «Հայաստանի ազգային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ 2022 թ.-ին կնքել է պայմանագիր, որի համաձայն միացել է CrossRef միջազգային մատենագիտական տեղեկատու համակարգին: ՎՊՀ գիտական տեղեկագրերում տպագրվող բոլոր հոդվածները ունեն թվային օբյեկտի նույնականացուցիչ (Digital Object Identifier — DOI), որը հնարավորություն է տալիս Գիտական տեղեկագրում տպագրվող նյութերը ավելի հասանելի դարձնել: 2023 թ. դեկտեմբերից համալսարանի և **e-Library** գիտական էլեկտրոնային գրադարանի հետ կնքվել է պայմանագիր և համալսարանի գիտական տեղեկագրերը՝ Պրակ Ա (Հումանիտար և հասարակական գիտություններ) և Պրակ Բ (Բնական և ճշգրիտ գիտություններ), գրանցվել են գիտական հրատարակությունների տվյալների բազա հանդիսացող **e-Library** գիտական էլեկտրոնային գրադարանում: Այժմ քայլեր են իրականացվում՝ ամսագիրը PIIHL համակարգում ներառելու ուղղությամբ:

Թե՛ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտական տեղեկագրի հրատարակման», թե՛ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտաժողովների կազմակերպման և անցկացման» կանոնակարգերում հստակ սահմանված

են թե՛ հոդվածներին և թե՛ գրախոսմանը ներկայացվող պահանջները: Ստացված բոլոր հոդվածները գրախոսվում են անանուն:

Համալսարանի դասախոսները իրենց զեկույցներով մասնակցել են Հայաստանում կազմակերպված 38 հանրապետական և միջազգային գիտաժողովների և արտասահմանում կազմակերպված 26 միջազգային գիտաժողովների՝ ակադեմիական հանրությանը ներկայացնելով իրենց հետազոտությունների արդյունքները: Յուրաքանչյուր տարվա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին իրականացվում է ամբիոնների գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության վերլուծություն և ներկայացվում է գիտխորհրդի նիստերին: 2023 թ. մշակվել է նոր բանաձև, որով որոշվում է ամբիոնի արդյունավետության գործակիցը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր դասախոսի ունեցած գիտական աշխատանքները և տպագրված հոդվածների ամսագրերի վարկանիշները: Ամբիոնների արդյունավետության վերլուծությունը հնարավորություն է տալիս բնութագրել տպագրված գիտահետազոտական աշխատանքները և կատարել աշխատանքների գնահատում: Վերլուծության ընթացքում պարզվել է, որ միջազգային ամսագրերում տպագրված հոդվածներից որոշները տպագրված են ցածր վարկանիշ ունեցող, չգրախոսվող ամսագրերում: Այդ նպատակով վերանայվել է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի աշխատողներին գիտական, ուսումնական, մշակութային, մարզական և կազմակերպական աշխատանքների համար խրախուսման կարգ»-ը, որտեղ հստակ սահմանվել է, որ խրախուսման ենթարկվում են միայն բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում տպագրված հոդվածների համար: (Տե՛ս [Հավելված 6.ա.3.](#) և [Հավելված 6.ա.4.](#)): Միջազգային գրախոսվող ամսագրերում ազդեցության գործակցով ընթացակարգերին և հնարավորությունների համալսարանի դասախոսներին տեղեկացնելու համար պրոֆեսորադասախոսական կազմի համար կազմակերպվել է ՏԳիտական հետազոտության մեթոդաբանություն՝ վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել են 58 դասախոս: Վերապատրաստման ժամանակ դասախոսները ծանոթացել են ինչպես պլանավորել և իրականացնել գիտական հետազոտության գործընթացները, ինչպես փնտրել բարձր վարկանիշ ունեցող ամսագրեր Scopus և Web of Science գիտատեղեկատվական շտեմարաններում և ձևակերպել և հրատարակման ներկայացնել այնտեղ գիտական հոդված, ինչ է Հիրշի ինդեքսը, ORCID-ը, ինչպես նաև ծանոթացան դրամաշնորհային արդյունավետ ծրագրեր գրելու սկզբունքներին:

Համալսարանի դասախոսները 2019-2023 թթ. տպագրել են 22 գիտական աշխատանքներ Scopus և Web of Science շտեմարաններում ընդգրկված բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում, որոնցից 2021թ-ին տպագրվել է 3 հոդված, 2022 թ.՝ 5 հոդված և 2023 թ-ին՝ 11 հոդված): Ընդհանուր առմամբ նման ամսագրերում հոդվածներ ունեն համալսարանի 16 դասախոսներ: Scopus և Web of Science շտեմարաններում ընդգրկված ամսագրերում տպագրված 4 հոդվածները համալսարանի դասախոսների համահեղինակությամբ են (Տե՛ս [Հավելված 6.ա.2.](#)): Համալսարանը արձանագրում է տվյալ ոլորտում առկա խնդիրը՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ավելի լայն շրջանակների ընդգրկումը գիտական խմբերում, բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում հրատարակումը և իրականացնում է աշխատանքներ այդ ուղղությամբ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Հիմքեր [Որակյալ հետազոտությունների իրականացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու մեխանիզմները](#)
[Հետազոտության և զարգացման համար հատկացված բյուջեն](#)՝ արտահայտված տոկոսներով (վերջին 3 տարվա համար)
[Բյուջեի բաշխման քաղաքականությունը և ընթացակարգերը](#)
[Երիտասարդ աշխատակազմի հետազոտական գործունեությունը](#)
խրախուսելու քաղաքականությունն ու ընթացակարգերը
[Ակադեմիական ազնվությունը](#) (օբյեկտիվություն) երաշխավորող և գրագողությունը կանխարգելող միջոցների քաղաքականությունն ու ընթացակարգերը

Վերլուծել ՄՈՒՀ-ում հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

2022 թ. համալսարանի նախահաշվում ավելացվել է Գիտահետազոտական աշխատանքների խթանման ֆոնդ, որով կատարվում է գիտական խմբերի ֆինանսավորումը: Գիտական խմբի շրջանակում համալսարանը ֆինանսավորում է Scopus և Web of Science շտեմարաններում հոդված տպագրելը: Ֆինանսներ հատկացվում է հոդվածի տպագրման, թարգմանության, հետազոտության համար, գործուղման, հետազոտության համար անհրաժեշտ նյութերի, սարքերի, միջոցների գնման համար: Դասախոսների գիտահետազոտական աշխատանքները խրախուսվում են՝ համաձայն «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի աշխատողներին գիտական, ուսումնական, մշակութային, մարզական և կազմակերպական աշխատանքների համար խրախուսման կարգ»-ի: 2022 թ. համալսարանի նախահաշվի մեջ առանձնացվել է Աշխատակիցների խրախուսման ֆոնդ՝ ՎՊՀ հիմնադրամի աշխատողներին գիտական, ուսումնական, մշակութային, մարզական և կազմակերպական աշխատանքների համար: 2022 թ. գիտության համար հատկացված գումարը կազմել է բյուջեի 1,67 %, 2023 թ-ին՝ 1,2 %, իսկ 2024 թ. նախատեսված գումարը կազմում է բյուջեի 1,35 %:

Հետազոտական աշխատանքներ կատարելու համար համալսարանում հնարավորինս ստեղծվել են բարենպաստ պայմաններ: Բնագիտական համալիր գիտահետազոտական լաբորատորիան վերանորոգվել է, որտեղ իրականացվում են քիմիայի և կենսաբանության ամբիոնի երկու գիտական խմբերի՝ դրամաշնորհային ծրագրի շրջանակում կատարվող աշխատանքները, ուսանողների ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի, ատենախոսության համար անհրաժեշտ փորձերը:

Համալսարանում 2022 թ. բացվել է Ձեռներեցության և նորարարությունների զարգացման կենտրոնը (SMART CAFFE) ([Հավելված 6.գ.1.](#)), որը հնարավորություն է տալիս բուհի ուսանողներին և դասախոսներին մասնակցելու վերապատրաստումների, ինտերակտիվ մեթոդներով կազմակերպվող դասընթացների՝ նաև թվային տիրույթում, ունենալ տարատեսակ քննարկումներ, ստեղծել և զարգացնել գաղափարներ, այդ թվում՝ բիզնես

ուղղվածության: Այս ամենը նպաստում է վերջիններիս մասնագիտական աճին, նոր հմտությունների ձեռքբերմանը, ինչպես նաև աշխատաշուկայում լավագույնս ներկայանալուն: SMART CAFFE-ում տեղի են ունենում տարբեր հանդիպումներ ուսանողների հետ, քննարկվում նրանց հետ նոր բիզնես-գաղափարներ և աշխատում այդ գաղափարների շուրջ: Երկու ստարտափ գաղափարներ 2023 թ.-ին ուսանողները ներկայացրել են Բուլղարիայի Սոֆիա քաղաքում կազմակերպված բիզնես գաղափարների եզրափակիչ մրցույթին: Համալսարանը կարևորում է գիտական նախագծերի արդյունքների առևտրայնացումը և քայլեր է ձեռնարկում մշակելու մեխանիզմներ:

Երիտասարդ աշխատակազմի հետազոտական գործունեությունը խրախուսելու քաղաքականությունն ու ընթացակարգերը սահմանված են առանձին կարգերում:

ՎՊՀ Գիտական խմբերի կանոնակարգում նախատեսված է մինչև 35 տարեկան անդամի պարտադիր առկայությունը: Գիտական խմբի մեջ պետք է ներառված լինեն կամ բակալավրի և մագիստրատուրայի ուսանողներ, կամ ասպիրանտ և հայցորդ, որը հնարավորություն է տալիս երիտասարդ հետազոտողին ունենալ համատեղ գիտական աշխատանք՝ Scopus և Web of Science շտեմարանում ընդգրկված ամսագրերում հոդված:

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի աշխատողներին գիտական, ուսումնական, մշակութային, մարզական և կազմակերպական աշխատանքների համար խրախուսման կարգ»-ում խրախուսվում է վերջին երկու տարում Համալսարանում աշխատող և 36 տարին չըրացած հայցորդի (ասպիրանտի) ատենախոսության պաշտպանություն,

ՎՊՀ աշխատակից հայցորդների և ասպիրանտների ուսման վճարների 50 % զեղչ (գիտխորհրդի որոշում, արձ. թիվ 7, 24. 09. 2015): Երիտասարդ հայցորդները և ասպիրանտները նաև հնարավորություն ունեն դասավանդելու իրենց մասնագիտությամբ:

Յուրաքանչյուր նոր կանոնակարգ մշակելիս հաշվի է առնվում երիտասարդ գիտնականների համար արտոնություններ սահմանելու, խրախուսելու դրույթը:

Ակադեմիական ազնվությունը երաշխավորվում է «Ակադեմիական ազնվության կարգով», որը վերամշակվել է և հաստատվել 2024 թ.-ին և «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի էթիկայի կանոնագրքով»: «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտական տեղեկագրի հրատարակման կարգի» և «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտաժողովների կազմակերպման և անցկացման կարգի» մեջ ամրագրված է այն դրույթը, որով բոլոր ստացված հոդվածները ուղարկվում են անանուն գրախոսման:

Մենագրություններն ու ուսումնական ձեռնարկները տպագրության են երաշխավորվում համալսարանի գիտխորհրդում, ամբիոններում կամ ֆակուլտետների խորհուրդներում քննարկվելուց հետո: 2024 թ. գիտխորհրդում երաշխավորման ներկայացված աշխատանքները ուղարկվում են համալսարանի կողմից արտաքին գրախոսման մինչև գիտխորհրդի օրակարգ ներառելը:

Մագիստրոսների թեզերը նույնպես ուղարկվում են արտաքին գրախոսման. Օրինակ՝ 2023 թ.-ին մագիստրոսական թեզերը ուղարկվել են գրախոսման Շիրակի պետական համալսարան:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ղ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Հիմքեր	Միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությունը խրախուսող կանոնակարգերը ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների կարգավորումը Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների կարգավորումը Միջազգային (ԱՊՀ և օտարերկրյա) գրախոսվող ամսագրերում հրապարակումների ցանկը վերջին 3 տարվա համար						
	ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկ						
	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	2019	2020	2021	2022	2023
Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը (տե՛ս Հիմքեր)							
ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկի							
	Ամսագիրը	Վարկանիշը	2019	2020	2021	2022	2023
<p><i>Վերլուծել ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականության արդյունավետությունը և վերջին հինգ տարիների նվաճումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>Համալսարանում գիտության բնագավառում միջազգային համագործակցությունը կանոնակարգվում է՝ համաձայն արտասահմանյան երկրների հետ կնքված պայմանագրերի և համաձայնագրերի:</p> <p>Համալսարանը համագործակցում է ինպես հայաստանյան այնպես էլ օտարերկրյա համալսարանների հետ: 2019-2024 թթ ընթացքում համալսարանն ունի կնքված 27 համագործակցության պայմանագիր: Նշված համալսարանների աշխատակիցները մասնակցություն են ունենում ՎՊՀ-ում կազմակերպվող միջազգային գիտաժողովներին ինչպես նաև ընդգրկված են գիտաժողովների կազմկոմիտեներում և խմբագրակազմերում: Աշխատանքներ են տարվում համատեղ հետազոտական ծրագրեր իրականացնելու հետ կապված:</p> <p>Համալսարանը խրախուսում է արտասահմանյան համահեղինակների հետ աշխատանքների հրատարակումը, Scopus և Web of Science շտեմարաններում ընդգրկված ամսագրերում հոդվածների տպագրումը, այդ ամենը ամրագրված է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի աշխատողներին գիտական, ուսումնական, մշակութային, մարզական և կազմակերպական աշխատանքների համար խրախուսման կարգում»:</p> <p>Գիտական խմբերի կանոնակարգը հնարավորություն է տալիս գիտական խմբերին հոդված տպագրել Scopus և Web of Science շտեմարաններում ընդգրկված ամսագրերում:</p> <p>Համալսարանի դասախոսները և ուսանողները մասնակցում են ԱՊՀ և արտասահմանյան</p>							

բուհերում անցկացվող միջազգային գիտաժողովներին:

2022 թ. Գիտական տեղեկագրի խմբագրական կազմերում ընդգրկել են գիտնականներ արտասահմանից: Այժմ կա հնարավորություն օտարալեզու հոդվածներ ուղարկելու արտասահմանի խմբագրական կազմի անդամներին գրախոսման համար:

2022թ. հոկտեմբերին կազմակերպվել է «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում» խորագիրը կրող 6-րդ միջազգային գիտաժողովը, որը ավանդական է համալսարանում կազմակերպվող գիտաժողովների ցանկում: Գիտաժողովի կազմկոմիտեում ընդգրկված են արտերկրի տարբեր համալսարաններից գիտնականներ: Գիտաժողովին մասնակցել են 25 մասնակիցներ ինչպես Հայաստանից, այնպես էլ Ռուսաստանից, Վրաստանից, Լեհաստանից և Բուլղարիայից: 7-րդ գիտաժողովը նախատեսվում է անցկացնել 2024 թ. հոկտեմբերին:

Միջազգային վարկանիշը համարելով համալսարանի գրավչության բարձրագույն գործոն՝ համալսարանը ձգտում է վարկանիշային աղյուսակում միջազգային կրթական շուկայում համալսարանի հեղինակությունը բարձրացնելուն: Այդ նպատակով 2022 թ.-ից համալսարանը տանում է աշխատանքներ QS վարկանիշային համակարգում ընդգրկվելու համար: Այդ աշխատանքները իրականացվում են համապատասխան «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարանի QS վարկանիշային համակարգում ընդգրկվելու աշխատանքային պլանի» ([Հավելված 6.դ.1.](#)):

Այս ամենը արտահայտվում է նաև ՎՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի գիտական խորհրդի նիստերում «Ամբիոնների գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության վերլուծությունը» և «ՎՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի հաշվետվություն» թեմայով զեկույցներում (Տե՛ս Հավելված 6.ա.3. և Հավելված 6.ա.4):

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

[Հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելուն](#) ուղղված քաղաքականությունը, ընթացակարգերը և մեթոդները

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության արդյունավետությունը արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ

Գործընթացի բարելավմանն ուղղված միջոցառումները

Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումը արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ)

Պատասխանել հետևյալ հարցերին:	գիտ.աշխատախմբերի	%
ներկայացուցիչներից		
Ուսումնառողների n ը տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:		90
Դասավանդողների n ը տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:		95

Գործատուների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում գիտական և ուսումնական գործընթացների փոխկապակցվածությունը ենթադրում է.

- ամբիոնների գիտահետազոտական ուղղություններով դասընթացների ներդրում ուսումնական պլաններում,
- ամբիոնների գիտահետազոտական ուղղություններով թեմաների ներդրում դասավանդվող դասընթացներում,
- ամբիոնների գիտահետազոտական ուղղություններով կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարում,
- գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների մասնակցություն,
- գիտական խմբերում ուսանողների ներգրավում,
- ուսանողների հետ համատեղ հոդվածների տպագրում,
- ուսանողների ղեկավարում Ուսանողական գիտական ընկերության գիտաժողովներին:

Նոր ուսումնական պլանների մշակման ժամանակ հաշվի առնելով 2019թ.փորձագիտական զեկույցում նշված խնդիրները (ուսումնական գործընթացի և հետազոտական գործունեության թույլ փոխկապակցվածությունը) և առաջնորդվելով համալսարանի բարելավման գործողությունների պլանի ամբիոնները իրենց գիտահետազոտական ուղղությամբ նոր դասընթացներ են ներդրել ուսումնական պլաններում: Մագիստրատուրայի ուսումնական պլաններում ներդրվել է "Գիտական հետազոտության մեթոդաբանություն" առարկան, որի ընթացքում ուսանողները ձեռք են բերում գիտելիքներ ինչպես պլանավորել և իրականացնել գիտական հետազոտության գործընթացները, ինչպես փնտրել բարձր վարկանիշ ունեցող ամսագրեր Scopus և Web of Science գիտատեղեկատվական շտեմարաններում, ինչպես կծանոթանան դրամաշնորհային արդյունավետ ծրագրեր գրելու սկզբունքներին:

Ընդհանուր առմամբ 49 դասընթաց ներդրվել է 16 կրթական ծրագրերում (օրինակ՝ «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրում ներդրվել են «Մաթեմատիկական լեզվաբանություն», «Հատկանվանագիտություն», «Տեղանվանագիտություն» առարկաները, «Ծրագրային ճարտարագիտություն» կրթական ծրագրում՝ «Արհեստական ինտելեկտի արդի լեզուներ», «Բնական լեզվի մշակում» առարկաները):

Կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները տրվում են՝ հաշվի առնելով ամբիոնների գիտահետազոտական ուղղությունները: Ամբիոնների դասախոսները իրենց ուսումնասիրության թեմաների շրջանակում ինչպես տպագրում են ուսանողների հետ համատեղ աշխատանքներ (79 համատեղ աշխատանք), այնպես էլ ղեկավարում են ուսանողների մասնակցությունը ուսանողական գիտական ընկերության գիտաժողովներին (217 մասնակցություն): Մագիստրատուրայի ուսանողի հետ համատեղ տպագրված աշխատանքներից մեկը տպագրված է Scopus շտեմարանում ընդգրկված ամսագրում: Մագիստրատուրայի 5 և բակալավրի 3 ուսանողներ ընդգրկված են 2021-2024 թթ. համալսարանում գործող գիտական խմբերում ([Հավելված 6.ե.1.](#)):

Վերլուծել Չափանիշ 6-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ol style="list-style-type: none"> 1. Ամբիոնների կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորմամբ գիտահետազոտական թեմաների առկայություն: 2. Գործող գիտական խմբեր և նրանցում ներգրավված երիտասարդ հետազոտողներ; 3. Scopus և Web of Science շտեմարաններում ընդգրկված ամսագրերում տպագրված աշխատանքների թվաքանակի աճ: 4. Համալսարանի նախահաշվում գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման, սարքերի և նյութերի ձեռք բերման, հետազոտական աշխատանքների խրախուսման համար ֆինանսավորման առանձին հոդվածների առկայություն: 5. Պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքների խրախուսման նոր մեխանիզմներ: 6. Ուսանողների հետ համատեղ աշխատանքների թվաքանակի աճ: 7. Ներպետական և միջազգային դրամաշնորհային հայտերի մասնակցություն: 8. ՎՊՀ Գիտական տեղեկագրի վարկանիշի աստիճանական բարձրացում: 9. Ամբիոնների գիտահետազոտական ուղղություններով դասընթացների ներդրում ուսումնական պլաններում: 	<ol style="list-style-type: none"> 1. Գիտության առևտրայնացման մեխանիզմների ներդրման խնդիրներ: 2. Ժամանակակից սարքավորումներով լաբորատորիաների վերազինման խնդիր: 3. Գիտական գործունեությամբ զբաղվող դասախոսական կազմի ոչ բարձր տոկոս: 4. Ներպետական գիտահետազոտական կազմակերպությունների հետ համատեղ աշխատանքների խնդիր: 5. Միջմասնագիտական թեմաների բացակայություն:
Արտաքին հնարավորություններ	Վտանգներ
<ol style="list-style-type: none"> 1. Բարձրագույն կրթության և գիտության նոր օրենքը: 2. Պետական և միջազգային դրամաշնորհային նախագծերի մասնակցության հնարավորություն: 3. ՀՀ և արտասահմանյան տարբեր համալսարանների հետ համագործակցություն: 	<ol style="list-style-type: none"> 1. Գիտության բնագավառում երիտասարդ մասնագետների ներգրավվածության մոտիվացիայի բացակայություն: 2. Համալսարանի ֆինանսավորման մեխանիզմներում գիտության ոլորտի խթանման նվազման վտանգներ:

--	--

Վերոնշյալ թույլ կողմերի հաղթահարման ուղիներն են՝

- Ժամանակակից սարքավորումներով լաբորատորիաների վերազինում,
- Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավում,
- Գիտահետազոտական կազմակերպությունների հետ համատեղ աշխատանքների կատարում,
- Գիտության առևտրայնացման մեխանիզմների մշակում և ներդրում,
- Գիտահետազոտական աշխատանքներում դասախոսների առավել մեծ քանակով ընդգրկում:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար:

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Համալսարանի ենթակառուցվածքների և ռեսուրսների բարելավումը ՄՈՒՀ-ի 2021-25 թթ.-ի ռազմավարական ծրագրում ռիսկերի նվազեցմանն ուղղված նախատեսված աշխատանքներից է: Աշխատանքներում հիմնականում շեշտադրվել է աշխատակիցների գործառույթների վերանայումը՝ Համալսարանի ռազմավարության կարևորագույն խնդիրների իրականացման տեսակետից, տարվա ֆինանսական պլանի մշակումը և ներդրումը, օժանդակություն ֆոնդիայթայթման մեխանիզմների ներդրմանը, կրթական և գիտատեխնիկական աշխատանքների համար նախատեսված նյութատեխնիկական բազայի հզորացումը և համապատասխանեցումը ժամանակակից պահանջներին, Համալսարանում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ներդրումը և այլն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Հիմքեր	<p>Հաստատության մասնաշենքերը և դրանց օգտագործման նպատակները</p> <p>Լաբորատորիաները, ուսումնական կաբինետները, արվեստանոցները, արհեստանոցները և դրանց օգտագործման նպատակները</p> <p>Գրադարանների, պաշտոնական ինտերնետային կայքերի և գրականության հասանելի այլ աղբյուրների ցանկը</p>
--------	---

Ռեսուրսներով ապահովվածության վերլուծությունը
Գործընթացների բարելավմանն ուղղված միջոցառումները և
մեխանիզմները

Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Արդյո՞ք ուսումնառողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	62
Արդյո՞ք դասավանդողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	65

Վերլուծել ուսումնական ռեսուրսների համապատասխանությունը հաստատության որակավորումների շրջանակի հետ:

Համալսարանում բակալավրական, մագիստրոսական և ասպիրանտական կրթական և հետազոտական կարիքներն ապահովելու համար առկա են բավարար ռեսուրսներ: Բակալավրի և մագիստրատուրայի ուսանողներին հասանելի են դասընթացների ուսումնամեթոդական փաթեթները, մասնագիտական կրթական ծրագրերի հետ կապված այլ փաստաթղթեր, որոնք նաև տեղադրված են Համալսարանի կայքում: Դասախոսների կողմից ուսանողներին է տրամադրվում դասընթացների վերաբերյալ իրենց կազմած դասախոսական տեքստերը, որոնք ուղղորդում են ուսանողների ուսումնառության գործընթացը, պարունակում են գործնական և սեմինար պարապմունքների համար անհրաժեշտ նյութեր: Համալսարանի գրադարանը բավարար հագեցած է դասախոսների կողմից հանձնարարվող գրականությամբ: Տարեկան երկու անգամ ամբիոններ ուղարկված հարցման արդյունքում ՄՈՒՀ-ի գրադարանը ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժնի հետ համատեղ կազմակերպում է անհրաժեշտ գրքագնման գործընթացը:

Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի արդյունավետությունը՝ նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համալսարանում մասնագիտությունների կրթական կարիքներն ապահովելու և հագեցած կրթական միջավայր ստեղծելու համար առկա են 1 վարչական, 2 ուսումնական մասնաշենքեր, որոնք գտնվում են համալսարանի հիմնական տարածքում: Ուսումնական (թիվ 1) և ուսումնալսաբարատոր (թիվ 2) շենքերի ընդհանուր ներքին մակերեսը կազմում է 7434.34 քմ: Ուսումնական թիվ 1 (գլխավոր մասնաշենք) մասնաշենքում են գտնվում հումանիտար գիտությունների և հասակական գիտությունների ֆակուլտետները՝ դեկանատներով, ամբիոններով, լսարաններով, դասախոսական սենյակներով: Համալսարանի ուսանողական խորհրդի, յուրաքանչյուր ֆակուլտետի ուսանողական խորհուրդների, ինչպես նաև ուսանողական գիտական ընկերության համար հատկացված են աշխատանքային սենյակներ՝ հագեցած համակարգիչներով: Դասախոսությունները, սեմինար և գործնական պարապմունքները կազմակերպվում են վերանորոգված լսարաններում, լսաբարատորիաներում: Անհրաժեշտ քանակությամբ լսարաններ համալրված են համակարգիչներով և պրոյեկտորներով:

Բնագիտական հոսքի ուսումնական գործընթացը անցկացվում է ուսումնական 2-րդ մասնաշենքում, որն էլ հիմնականում ներկայացվում է որպես ուսումնալաբորատոր մասնաշենք: Այս մասնաշենքում տեղակայված են բնական գիտությունների ֆակուլտետը՝ համապատասխան ամբիոններով (մաթեմատիկայի և ինֆորմատիկայի, քիմիայի և կենսաբանության ամբիոնները): Բնական գիտությունների ֆակուլտետի (ուսումնական 2-րդ) մասնաշենքում ուսումնական, գիտական գործընթացի կազմակերպման նպատակով գործում են հնարավորինս արդիականացված լաբորատորիաներ: Պարբերաբար կատարվում են լաբորատորիաների, սարքավորումների և սարքերի վերանորոգում և համալրում: Արդյունքում՝ ՎՊՀ-ի մասնաշենքերում այսօր առկա են բարվոք պայմաններ, սակայն կահավորման և տեխնիկական հագեցվածության առումներով դեռ անելիքներ կան:

Համալսարանում Erasmus + CONNECT նախագծի շրջանակներում ՄՈՒՀ-ի ֆինանսավորմամբ վերակառուցվել, արդիական տեխնիկայով և գույքով կահավորվել է ձեռներեցության և նորարարությունների զարգացման կենտրոնը (SMART CAFE):

Ավարտվել են համալսարանի տարածքում նախատեսվող ունիվերսալ մարզադահլիճի նախագծանախահաշվային աշխատանքները, ինչպես նաև պատշաճ կատարվել են շինարարություն իրականացնելու համար պահանջվող բոլոր փաստաթղթային ձեռքբերումները՝ իրականացվել է մրցույթ, կնքվել է հաղթող ճանաչված շինարարական կազմակերպության հետ պայմանագիր: Ակնկալվում է շինարարության ազդարարման սկիզբը, հակառակ դեպքում Համալսարանը կշարունակի ունենալ մարզադահլիճի խնդիր:

891.74 քմ մակերես ունեցող վարչական մասնաշենքում են գտնվում ռեկտորի, պրոռեկտորների և այլ վարչական բաժինների սենյակները: Մասնաշենքում առկա են նաև հանդիսությունների փոքր դահլիճը, շախմատ առարկայի և ռիթմիկայի կաբինետը:

Արխիվին ուսումնական թիվ 1 մասնաշենքի նկուղային հարկում տրամադրվել է նոր, վերակառուցված 112.8 ք.մ մակերեսով տարածք, որը համալրվել է չափորոշիչներին համապատասխան մետաղական դարակաշարերով, որն էլ իր հերթին հնարավորություն է տվել կենտրոնացնել և թվայնացնել համալսարանի արխիվը մեկ վայրում:

Լոռու մարզի Բագում համայնքում 1000.1քմ ընդհանուր մակերեսով 2 մասնաշենքի ջրամատակարարման անխափան աշխատանքները ապահովելու համար կատարվել են ջրատարի վերանորոգում, շենքերի ներքին շինվերանորոգման աշխատանքներ: Այդ տարածքում նախատեսված մարզադաշտի, լողավազանի կառուցման նախագծերը կատարված են, սակայն ֆինանսական հնարավորությունների սակավության պատճառով դեռևս հետաձգվում են:

Համալսարանի բյուջեով ամեն տարի գումարներ են հատկացվում մասնաշենքերի, Բագում ուսումնամարզական հանգրվանի ու այլ շինությունների վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար, ինչը բխում է ՄՈՒՀ-ի 2021-25թթ. բարելավման պլանի 7.1 կետից: Արտաբյուջեի մուտքերից ամեն տարի որոշակի հատկացումներ են կատարվում կապիտալ և կոսմետիկ վերանորոգումների համար՝ էլնելով բյուջեի հնարավորություններից:

Գրադարանի զարգացումը ՄՈՒՀ-ի կարևոր ռազմավարական ուղղություններից է: Ավանդականին զուգահեռ էլեկտրոնային կրթական տեղեկատվական միջավայրում

անցկացվող ուսումնական գործընթացներին աջակցելու նպատակով միջոցներ են ձեռնարկվել ներքին շահակիցների՝ ուսանողների և դասախոսների գրադարանային-տեղեկատվական ռեսուրսների պահանջարկը նաև թվային ձևաչափով բավարարելու ուղղությամբ: Նման միջոցառումներից է լոկալ էլեկտրոնային գրադարանի տեղակայումը ՄՈՒՀ-ի կայքէջում և թվային գրքերի պարբերական համալրումը, որը համապատասխանում է ՄՈՒՀ-ի 2021-25թթ. բարելավման պլանի 7.3 կետին: Բարելավման պլանի պահանջից ելնելով՝ էլեկտրոնային գրադարան այս պահին ներառված են 53 մասնագիտությունների հայերեն և օտարալեզու մոտ 12000 մասնագիտական գրքեր, գրանցված են 1470 ընթերցողներ (01.12.23 դրությամբ): ՄՈՒՀ-ի գրադարանի երեք գրապահոցներում առկա են 139 714 միավոր գիրք, որոնցից մոտ 3000-ը ներառված են հնատիպ և հազվագյուտ գրքերի առանձնացված հավաքածուում՝ «Ոսկե ֆոնդ»-ում: Վերջինս ամբողջությամբ վերագույքագրվել, վերաքարտագրվել, ցուցակագրվել (էլեկտրոնային և թղթային նույնական տարբերակներով) և վերադասավորվել է, կազմվել են առանձին քարտարաններ:

Գրադարանի ընթերցասրահի 2687 միավոր գրականությունը սպասարկվում է բաց դարակային սկզբունքով: Գրադարանային ծառայությունների արդիականացման շրջանակներում ընթերցասրահը տեխնիկապես հագեցվել է, ինչը նպաստել է ընթերցասրահի հաճախումների թվաքանակի աճին: Համացանցին հասանելիությունն ապահովող 10 համակարգիչները հնարավորություն են տալիս թե՛ ուսանողներին, թե՛ պրոֆեսորադասախոսական կազմին ընթերցասրահում աշխատել առարկայական գրքի և տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների համադրությամբ: Այս հանգամանքը բարձրացրել է գրադարանային ծառայություններից բավարարվածության մակարդակը:

Սպասարկման որակի բարելավման նպատակով կատարելագործվել է էլեկտրոնային քարտադարանի և գրքի հեռահար պատվերի ծրագիրը՝ թղթայինին զուգահեռ համապատասխան շարժն արտաձելով թվային ձևաչափով: 2020-21 ուսումնական տարվանից սկսած գրադարանն ընթերցողներին սպասարկել է բացառապես էլեկտրոնային պատվերի հիման վրա: Նման սպասարկումը դուրսին է դարձրել գրքերի և ընթերցողների շարժի վերահսկումը, ինչպես ընթերցողի ժամանակը: 2023 թ.-ից բուհը ձեռնամուխ է եղել էլեկտրոնային քարտադարանի նոր ծրագրի՝ KOHA գրադարանային-տեղեկատվական համակարգի ներդրմանը:

Գրքագնման աշխատանքների պլանավորման գործում մեծացել է ամբիոնների ներգրավվածությունը: Վերջիններիս հետ համատեղ գնման ցուցակները կազմելու ժամանակ հատկապես կարևորվել է առարկայական ուսումնական փաթեթներում ներառված, սակայն գրադարանի ֆոնդում բացակայող գրքերի գնման առաջնայնությունը: Գրադարանը բաժանորդագրվել է Իրտեկ իրավաբանական-տեղեկատվական համակարգին և պարբերական հրատարակությունների:

Գրադարանը՝ որպես կրթամշակութային կառույց, պարբերաբար կազմակերպել է թեմատիկ ցուցադրություններ, ուսումնաճանաչողական սեմինարներ, գիտական, տեղեկատվական, կրթական և մշակութային ուղղվածությամբ միջոցառումներ:

ՄՈՒՀ-ի համակարգչային ցանցը ուղղված է կրթական պահանջների բավարարմանը: Համալսարանի ներքին ցանցը ներառում է 300-ից ավել համակարգիչ: ՄՈՒՀ-ի

համակարգչային ցանցը ապահովված է WiFi կապով, որոնց միջոցով Համալսարանի տարածքով հնարավորություն է տրվում օգտվել Համացանցի ծառայություններից: Չնայած եղած հնարավորություններին և պայմանների անընդհատ բարելավմանը՝ ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի գնահատականները Համալսարանի նյութատեխնիկական հագեցվածության վերաբերյալ դեռևս գոհացուցիչ չեն: Դժգոհությունները հիմնականում վերաբերում են համակարգիչների քանակական խնդիրներին, հնացմանը, լաբորատոր սարքերի և նյութերի հագեցվածությանը, ուսանողները պահանջում են լսարանային առավել ժամանակակից պայմաններ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն և նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Բյուջեի բաշխումը՝ ըստ մուտքերի և ծախսերի
 Բյուջեի բաշխումը՝ ըստ ՄՈՒՀ-ի առաքելության հիմնական ուղղությունների (դասավանդում և ուսումնառություն, հետազոտություն և զարգացում, ծառայություն հասարակությանը)
 Բյուջեի բաշխումը՝ ըստ ռազմավարական ուղղությունների
 Ուսումնական գործունեությունից ստացվող մուտքերի բաշխումը՝ պետական ֆինանսավորում, ուսման վճարներ, վերապատրաստումներ և այլն (արտահայտված տոկոսներով)
 Հետազոտական աշխատանքների, դասավանդման և ուսումնառության, մասնագիտական զարգացման, գրադարանների թարմացման և հարստացման, սարքավորումների, գույքի ձեռքբերման համար նախատեսված հատկացումները (արտահայտված տոկոսներով)
 Դրամաշնորհային ծրագրերով ստացված ֆինանսների բաշխումը
 Այլ աղբյուրներից ստացված ֆինանսների բաշխումը
[Համախառն նախահաշվի նախագիծ և կատարողական](#)
[Ֆինանսական ռեսուրսների կառավարում](#)

Վերլուծել բյուջեի բաշխման արդյունավետությունը: Արդյո՞ք ուսումնական գործընթացին վերաբերող ծախսերի բաշխումը համապատասխանում է հաստատության ռազմավարական նպատակներին: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ֆինանսական ռեսուրսների կառավարումը Համալսարանում իրականացվում է տարեկան կտրվածքով բյուջեի նախահաշվի կազմման և հաշվետու տարվա վերջին բյուջեի փաստացի կատարողականի վերլուծության միջոցով: ՄՈՒՀ-ի ֆինանսական միջոցները ձևավորվում են ուսման վարձավճարներից, պետական ֆինանսավորումից և այլ վճարովի ծառայություններից: Համալսարանի մուտքերի ու ելքերի տարեկան նախահաշիվը կազմվում է նախորդ տարիների փաստացի տվյալների վերլուծությունների հիման վրա, ինչպես նաև Համալսարանի ընդունելության ցուցանիշներից, և նպատակ է հետապնդում վերահսկողություն

իրականացնելու ֆինանսական հոսքերի կառավարման և տնօրինման համար: Մուտքերի մասով դրանք բաժանվում են երկու հիմնական մասի՝ 1) Մուտքեր պետական բյուջեից, 2) Մուտքեր այլ անձանցից: Մուտքեր պետական բյուջեից հողվածը իր հերթին բաշխվում է հետևյալ հիմնական ուղղությունների՝

- Ուսման վարձ,
- Կրթաթոշակ,
- Հանրակրթական ուսուցման ֆինանսավորում:

«Մուտքեր այլ անձանցից» հողվածը հիմնականում ուսման վարձավճարներն են:

Այլընտրանքային ֆինանսական հոսքեր է ապահովվում վերապատրաստման ծառայությունների մատուցումից, դրամաշնորհային ծրագրերից:

2022 թ-ին Համալսարանի մուտքերը բաժանվում են 3 հիմնական ուղղությունների՝ ուսումնական վճարներ, պետական ֆինանսավորում և այլ մուտքեր: Ընդհանրապես ՄՈՒՀ-ի բյուջեի այլ եկամուտները կուտակվում են դրամաշնորհային ծրագրերից, վերապատրաստման ծառայությունների մատուցումից, հաշվապահական հաշվառման ծառայությունների և ընդունելության հայտերի համար դիմորդի կողմից վճարվող գումարներից: Ուսման վճարները կազմում են Համալսարանի բյուջեի մուտքային մասի գերակշիռ մասը՝ շուրջ 71.8 %-ը, պետական ֆինանսավորումը՝ 25,5 %, այլ եկամուտները՝ 2.7 %:

Աղյուսակ 7-1 ՎՊՀ բյուջեի եկամուտներն ըստ աղբյուրների 2019-2023 թթ. (հազ. դրամ)

Եկամուտներ	Տարիներ				
	2019	2020	2021	2022	2023
Նախորդ տարվա մնացորդ	33076,2	34170.1	112762.0	85667	35000
Ուսման վճարներ	510145,2	507083.4	456359.3	456233.7	473238,6
Պետական ֆինանսավորում	139361,2	161164.5	157229.8	180830.4	168393,4
Վերապատրաստումներ	0	0	5724.1	10753.3	16237,9
ԳԻՏՊԵՏԿՈՄ	0	0	2175	7500	4492,4
Այլ եկամուտներ	13787,5	6440.0	4467	1503.5	1381,1
Հենակետային վարժարան	85841,0	96086.7	96126.4	109187.6	124734,6
Քոլեջ	34776,4	45927.6	43696.2	46674.4	51290,2
Շնորհներ	22488,7	22847,8	25693.3	9116.2	165048,1
Ընդամենը	839476,2	873720,1	902058.1	907466.1	1039816,3

Պետական ֆինանսավորման կողմից տրամադրվող միջոցների տնօրինման ու ծախսման արդյունավետությունը մշտապես ստուգվում է համապատասխան կառույցների կողմից: ՄՈՒՀ-ում գործող դրամաշնորհային ծրագրերի միջոցների կիրառման արդյունավետությունը մշտադիտարկվում է համապատասխան կառույցների ու կոորդինացող

կազմակերպությունների կողմից, և ֆինանսների բաշխումը կատարվում է համաձայն պատվիրատուների կողմից կազմված բյուջեի (ծախսեր ըստ հոդվածների): Ինչպես երևում է աղյուսակ 7-1-ից, ՎՊՀ ընդհանուր մուտքերն ունեն աճի միտում: Չնայած նրան, որ այս տարիներին ավելացել է մատուցվող ծառայությունների տեսականին (հաշվապահական հաշվառման ծառայություն) և ծավալը (վերապատրաստման ծառայություններ), ՄՈՒՀ-ը եկամուտների բազմազանեցման կարիք ունի: Այդ նպատակի իրականացման համար հիմնադրամում աշխատանքներ են տարվում մատուցված ծառայությունների և իրականացվող ծրագրերի շուկայավարման և առևտրայնացման, վճարովի ծառայությունների տեսականին ու ծավալներն ընդլայնելու և այդ ծառայությունների եկամտաբերությունը բարձրացնելու, կրթական, հետազոտական, հանրային ծառայությունների ոլորտում հայտարարվող միջազգային դրամաշնորհային ծրագրերին Համալսարանի մասնակցությունն ակտիվացնելու, այլ ուղղություններով: Յուրաքանչյուր տարեսկզբին ծախսերի պլանավորման հետ միասին Համալսարանը պլանավորում է զարգացմանն ուղղված ծախսերը առանձին փաստաթղթով, որում հիմնականում արտացոլվում են գիտության, շենքերի բարեկարգման և լաբորատորիաների վերազինման ծախսերը:

Համալսարանի կարևորագույն ռազմավարական նպատակն է որակյալ կրթության ապահովումը, որի իրականացմանն են ուղղվում կուտակվող ֆինանսական միջոցների մեծ մասը: ՄՈՒՀ-ի ծախսերը ըստ ուղղությունների բաժանվում են 2 հիմնական խմբերի՝ ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսեր, ինչպես նաև այլ ծախսեր: 2023 թ. ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսերը կազմել են 627211,2 հազ. դրամ կամ ծախսերի 93,8 %, այլ ծախսերը համապատասխանաբար՝ 41178,0 հազ. դրամ կամ 6,2 %:

Աղյուսակ 7-2. Ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսերի հարաբերակցությունը տարեկան ընդհանուր ծախսերի համեմատությամբ.

Ծախսեր	2019	2020	2021	2022	2023
Ընդհանուր տարեկան ծախսեր	651785,7	604189,6	647879,1	705329,8	668389,2
Ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսեր	593038	546394,7	602361	635714,9	612637,9
Ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհ. ծավալում (%)	91	90,4	93	90,1	91,7
Ուսանողների թիվ	1813	1728	1655	1651	1708

Ուսանողին ընկնող տեսակարար ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսերի մեծությունը	327	316,2	363,9	385	358,6
--	-----	-------	-------	-----	-------

ՄՈՒՀ-ի բյուջեից ըստ ներքին դրամաշնորհների մասին ընդունված նոր կարգի զգալի գումարներ են տրամադրվում գիտահետազոտական աշխատանքների համար, որն ուղղված է : Գիտության համար հատկացվող գումարներ են համարվում նաև պրոֆետորադասախոսական անձնակազմին վճարվող աշխատավարձի 22,2 %-ը: Հանրագումարում՝ 2023 թ-ին տվյալ ուղղության համար հատկացվել է բյուջեի մոտ 13 %-ը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Հաստատության կրթական նպատակների իրականացման համար ֆինանսական միջոցները կառավարելու և դրանք նպատակներին համապատասխան բաշխելու մեխանիզմները
[Ֆինանսական միջոցներին համապատասխան հաստատության գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման քաղաքականությունը](#)
 Պետական, մասնավոր և միջազգային կազմակերպություններից ստացվող ֆինանսական և նյութական միջոցների օգտագործման ընթացակարգը
[Ֆինանսական միջոցների օգտագործման նպատակայնությունը երաշխավորող մեխանիզմները \(աուդիտներ, հաշվետվություններ\)](#)

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումը ու շարունակականությունը ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համալսարանի եկամուտների ու ծախսերի նախահաշիվը կազմվում է քայլերի հետևյալ հաջորդականությամբ. բյուջեի նախագծի մուտքային մասը կազմվում է՝ հիմքում ունենալով ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժնի կողմից հաշվարկված եկամուտները՝ էլնելով հիմնականում ուսանողների թվի կանխատեսումից:

Ծախսային մասի համար հիմք են հանդիսանում բոլոր ստորաբաժանումների կողմից ներկայացված գնումների հայտերը և զեկուցագրերը, այլ փաստաթղթեր: Համալսարանում ֆինանսական ռեսուրսների կառավարումն ու օգտագործումը մշտապես գտնվում է կառավարման խորհրդի, ռեկտորատի և ստորաբաժանումների ղեկավարների ուշադրության կենտրոնում:

Բյուջեի նախագիծը ներկայացվում է Համալսարանի գիտական խորհրդում: Այնուհետև քննարկման ու հաստատման է դրվում Համալսարանի հոգաբարձուների խորհրդում:

Ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժինը ռեկտորին է ներկայացնում բյուջեի նախահաշվի կատարողականը՝ ըստ ամիսների, և գալիք երկու ամիսների դրամական մուտքերի և ելքերի մասին կանխատեսումները: Ժամանակ առ ժամանակ հաշվետվությունը տեղադրվում է նաև Համալսարանի կայքում: Խնդիրը մեկն է. բոլոր շահառուներին հասանելի դարձնել ֆինանսական հոսքերի ճշմարիտ պատկերը, ըստ ռազմավարական առաջնահերթությունների ֆինանսների օգտագործումը հնարավորինս թափանցիկ դարձնել: Յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում կատարվում է արտաքին աուդիտ՝ ըստ ՀՀ-ում գործող կարգի: Աուդիտի եզրակացությունը ներկայացվում է Համալսարանի հոգաբարձուների խորհրդին, պարտադիր տեղադրվում ՄՈՒՀ-ի կայքում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

[Ռեսուրսների ժամանակին բաշխելու մեխանիզմները, գործընթացները և ընթացակարգերը](#)

Հիմքեր Ուսուցման գործընթացների որակի ապահովման համար դասավանդողների և ուսումնառողների կարիքների բավարարման մեխանիզմները

Վերլուծել որակի շարունակական բարելավումն ու կայունությունը ապահովելու նպատակով ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազայի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համալսարանում կրթական գործընթացի կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների բաշխումը կատարվում է կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի պահանջի համաձայն: Նախապես բոլոր ստորաբաժանումները ներկայացնում են հայտեր՝ Գնումների մասին ՀՀ օրենքի պահանջի համաձայն, ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժնի պատասխանատու մասնագետը խմբավորում է ըստ ապրանքատեսակների, ապա գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների առկայության սահմաններում որոշվում են գնման ենթակա ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալները: Գնումը իրականացվում է ըստ օրենքի՝ սահմանված ժամկետներում՝ ապահովելով բոլոր անհրաժեշտ ապրանքատեսակների ձեռքբերումը:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների կարիքների բավարարման համար արտադրական և ուսումնական պրակտիկաների կազմակերպման, գործուղումների, ճանաչողական այցերի և այլ տեղաշարժերի նպատակով տրամադրվող տրանսպորտային միջոցների կազմակերպումը կատարվում է պատշաճ մակարդակով:

Նյութատեխնիկական բազան համալրվում է՝ ելնելով գնումների գործընթացով կազմակերպվող մրցույթների արդյունքում ձեռքբերված պայմանագրերի հիման վրա անհրաժեշտ ապրանքներով և ծառայություններով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ե. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Հիմքեր [Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման](#)

	<p>կանոնակարգերը Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման մեխանիզմները և /կամ համակարգը Գործընթացի վերանայման արդյունքները վերջին 5 տարիների համար Գործընթացների բարելավմանն ուղղված միջոցառումները</p>
<p><i>Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացների կառավարման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ամբողջ փաստաթղթաշրջանառությունը իրականացվում է համաձայն Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գործավարության կարգի (հաստատված ՎՊՀ ռեկտորի 02.05.2023 թ. թիվ 392 Ն/Մ հրամանով):</p> <p>Մինչև 2021 թվականը համալսարանում ընդունված փաստաթղթերը գրանցվում/հաշվառվում էին մտից մատյաններում: 2021 թվականի նոյեմբերի 1-ից սկսած համալսարանում ներդրվել է փաստաթղթաշրջանառության «Mulberry Groupware 2.0» համակարգը:</p> <p>Մալբերի Համակարգի միջոցով փաստաթղթաշրջանառությունը կատարվում է էլեկտրոնային եղանակով, ինչը ապահովում է բոլոր փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակների պահպանումը, ցանկացած փաստաթղթի ընթացքին հետևելը և վերահսկելը, կատարողական վերահսկողության ապահովումը:</p>	<p>ԶՍՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:</p>
<p>Հիմքեր</p>	<p>Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների ենթակառուցվածքները Առողջության և անվտանգության (հաշվի առնելով առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսումնառողներին) պահպանմանն ուղղված ծառայությունների քաղաքականությունն ու ընթացակարգերը Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններին հատկացված ֆինանսական միջոցների բաշխումը վերջին 5 տարվա համար Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններն ապահովող անձնակազմը և դրա անդամների աշխատանքային նկարագրերը Մատուցվող ծառայությունների արդյունավետությունը արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ</p>
<p><i>Վերլուծել առողջության և անվտանգության պահպանման ծառայությունների արդյունավետությունը՝ հիմնվելով շահակիցների արձագանքների վրա:</i></p>	

Համալսարանի ներքին շահակիցների, այդ թվում ուսանողության շրջանում իրականացված հարցումներից ստացված արդյունքները վկայում են ՄՈՒՀ-ի բուժկետի որակյալ սպասարկման մասին: 5 միավորանոց սանդղակով բուժկետի աշխատանքի վերջին երեք տարիների գնահատումը տատանվում է 3,8-4,2 միջակայքում:

Աշխատակիցների շրջանում առողջության ապահովագրության հնարավորությունների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով այս տարի ՄՈՒՀ-ը հանդիպում է կազմակերպել ապահովագրական ընկերության ներկայացուցիչների հետ: Վերջիններս աշխատակիցներին են ներկայացրել առողջության ապահովագրության փաթեթի շրջանակներում ամբողջական տեղեկատվություն՝ բարձրացնելով իրազեկվածության մակարդակը:

Վերլուծել ՄՈՒՀ-ի միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համալսարանը հատուկ ուշադրություն է դարձնում աշխատակիցների և ուսանողության առողջապահական և անվտանգության, սանիտարահիգիենիկ պայմանների ապահովմանը: Հենաշարժողական խնդիրներ ունեցող ուսանողների համար Համալսարանի բոլոր մասնաշենքերի մուտքերում առկա են թեքահարթակներ, որոնց միջոցով հնարավոր է մուտք գործել մասնաշենքերի առաջին հարկեր: Սանիտարահամաճարկային միջավայրի պահպանման համար ամենօրյա ռեժիմով վարչատնտեսական բաժնի աշխատակիցների կողմից կատարվում են տարածքների ախտահանման աշխատանքներ: ՄՈՒՀ-ում գործում է բուժկետ, որը Համալսարանի ներքին շահակիցներին անհրաժեշտության դեպքում տրամադրում է առաջին բուժօգնություն: Առաջին կուրսի ուսանողները թաղամասային համաբուժարաններում պարտադիր անցնում են բուժզննում և արդյունքները ներկայացնում ՄՈՒՀ-ի բուժքրոջը: ՄՈՒՀ-ի աշխատակիցները տարին մեկ անգամ ապահովագրական փաթեթի շրջանակներում նույնպես անցնում են բուժզննում տվյալ բուժհաստատության հետ կնքված պայմանագրի համաձայն, Համալսարանի ֆինանսական հատկացումների հաշվին: 2022 թ-ից գնումների գործընթացով կազմակերպվում է աշխատակիցների առողջության ապահովագրությունը:

ՄՈՒՀ-ում ներդրվել է հակահրդեհային ազդարարման ինքնաշխատ ժամանակակից համակարգ, որը մշտապես միացված է ԱԻՆ-ի SOS համակարգին և ենթադրում է բարելավման պլանի համաձայն ավելի անվտանգ և ապահով միջավայրի առկայություն: Համալսարանի բակային տարածքը և մասնաշենքերի ներքև ապահովված են տեսախցիկներով: Վարչատնտեսական բաժնի աշխատակիցները շուրջօրյա ռեժիմով հետևում են համալսարանի կարգապահությանը՝ կապի մեջ լինելով ղեկավարության հետ:

ՄՈՒՀ-ի քաղաքաշտպանության շտաբը՝ արտակարգ իրավիճակների Լոռու մարզի հատուկ ջոկատի հետ համատեղ, ներքին շահակիցների մասնակցությամբ անցկացնում են ուսումնառուսուցողական միջոցառումներ փրկարարական տարբեր տիպի տարհանումներին վերջիններիս նախապատրաստելու նպատակով: Քաղաքաշտպանության շտաբի

կառուցվածքային հիմնական կազմը պարբերաբար համալրվում է ակտիվ ուսանողներով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ- ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Հիմքեր
 Կրթական գործընթացների կարգավորմանն ուղղված ծրագրերը
 Կրթական գործընթացների իրականացման արդյունքների վերլուծությունը (նշելով արդյունավետությունը)
[Գործընթացի նպատակների իրականացումն ու ձեռքբերումների գնահատման գործիքները](#)

Վերլուծել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման գործող մեխանիզմների և ծառայությունների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսանողների, պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնասօժանդակ անձնակազմի բավարարվածությունը Համալսարանի կողմից տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման տեսանկյունից բացահայտվում է բավարարվածությունը չափող առցանց հարցումների արդյունքում, որը հիմնականում իրականացվում է ՄՈՒՀ-ի որակի ապահովման կենտրոնի կողմից: Խնդրահարույց հարցերը հետազայում քննարկվում են ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչների հետ անցկացվող ֆոկուս խմբերում և որպես կարիքի գնահատում ամփոփվում ու որակի ապահովման կենտրոնի ղեկավարի կողմից ներկայացվում են գիտական խորհրդի նիստում: Չնայած Համալսարանի համակարգչային ռեսուրսները վերաբաշխվել են ըստ լսարանների, և ավելացել են ուսանողների ու պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից տեխնիկական ռեսուրսներից օգտվելու հնարավորությունները, ներքին շահակիցների շրջանում տեխնիկական միջոցների վերաբերյալ տարեցտարի ավելի խիստ պահանջներ են դրվում՝ ընդհուպ մինչև անհատական համակարգիչների ապահովում:

Գրադարանային ռեսուրսների համալրման նպատակով տարին երկու անգամ գրադարանը ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժնի հետ համատեղ կազմակերպում է ամբիոններից ստացված պահանջվող գրականության ձեռքբերում:

Համալսարանի ղեկանատների և ամբիոնների համար անհրաժեշտ նյութական ռեսուրսների և ծառայությունների գնումների կազմակերպման նպատակով ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժինը տարին 4 անգամ հավաքագրում է գնումների տեղեկագրերը՝ ապահովելով հասցեական մոտեցում:

Վերլուծել Չափանիշ 7-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
1. Համալսարանի շենք-շինությունների	1. Լաբորատորիաների

<p>շարունակական բարեկարգում:</p> <ol style="list-style-type: none"> 2. Համալսարանի գրադարանի արդիականացում, KOHA գրադարանային-տեղեկատվական համակարգի ներդրում: 3. Էրազմուս+ նախագծի և ՄՈՒՀ-ի համաֆինանսավորմամբ նոր կենտրոնների և լսարանների ավելացում: 4. Աշխատակիցների առողջության ապահովագման համակարգի ներդրում: 5. Բյուջեի նպատակային օգտագործում՝ Համալսարանի ռազմավարական առաջնահերթ խնդիրների լուծման համար: 	<p>արդիականացման դեռևս ոչ բավարար մակարդակ:</p> <ol style="list-style-type: none"> 2. Համակարգչային տեխնիկայի մաշվածության խնդիր: 3. ՄՈՒՀ-ի ֆինանսավորման աղբյուրների բազմազանության դանդաղ ակտիվացում: 4. Ենթակառուցվածքների սղություն (մարզադահլիճ, հանրակացարան, ճաշարան):
Արտաքին հնարավորություններ	Վտանգներ
<ol style="list-style-type: none"> 1. Բազմաղբյուր ֆինանսական մուտքերի հնարավորություն: 2. Միջազգային ծրագրերի և դրամաշնորհների միջոցով նյութատեխնիկական բազայի համալրման հնարավորություն: 	<ol style="list-style-type: none"> 1. Աշխարհաքաղաքական, ինչպես նաև՝ տարածաշրջանային բարդ իրավիճակ: 2. Հասարակության շրջանում համալսարանական աշխատատեղերի նկատմամբ գրավչության նվազում:
<p><i>Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:</i></p> <ul style="list-style-type: none"> - Գիտահետազոտական նախագծերին մասնակցության խթանում, և ըստ այդմ լաբորատորիաների արդիականացման հնարավորություն: - Ձեռնարկչատիրական գործունեության ծավալման, ազգային, միջազգային նախագծերին մասնակցության խթանման միջոցով ֆինանսական մուտքերի ավելացում: 	

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Ը

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակայնությանը:

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Վանաձորի պետական համալսարանի հիմնադրամը հասարակական պատասխանատվության ոլորտում իր առջև խնդիր է դրել բարելավելու և կատարելագործելու հասարակայնության հետ կապերը՝ բարձրացնելով Համալսարանի տեսանելիությունը: Համալսարանը խթանում է հասարակական պատասխանատվությունը որակի ապահովման մեխանիզմների, հաշվետվողականության կատարելագործման, Համալսարանի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման միջոցով:

Այս ամենն ամրագրված է [«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2021-2025 թթ ռազմավարական ծրագրի](#) մեջ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

<p>Հիմքեր</p>	<p>Շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովող քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները Հասարակայնությանը տրամադրվող ծառայությունների ռազմավարական նպատակները և քաղաքականությունը (օր.՝ մասնագիտական զարգացման/վերապատրաստման դասընթացներ, խորհրդատվական ծառայություններ, օժանդակում հանրակրթական հաստատություններին, միջավայրի բարելավմանը միտված գործունեություններ և այլն) Հասարակայնությանը տրամադրվող ծառայությունների իրականացման հիմնավորումները</p> <p>Հասարակայնության զարգացմանը միտված ՄՈՒՀ-ի իրականացրած այլ աշխատանքները ԳԱՆ և Հ բաժնի կանոնադրություն ՎՊՀ կայքի և սոցիալական ցանցերի կանոնակարգ</p>
---------------	--

Վերլուծել, թե որքանով է ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունը նպաստում կառավարման բարելավմանը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համալսարանի ռեկտորը սահմանված կարգով համալսարանի տարեկան հաշվետվությունը ներկայացնում է հոգաբարձուների խորհրդին: Ռեկտորի հաշվետվությունը կազմվում է բոլոր ստորաբաժանումների ղեկավարների կողմից ներկայացված հաշվետվությունների հիման վրա: Այն իր մեջ ներառում է համալսարանի գործունեության բոլոր բնագավառները՝ կառավարում, կրթական գործունեություն, կրթական ռեսուրսներ, գիտահետազոտական գործունեություն, հոգևոր-մշակութային և ռազմահայրենասիրական գործունեություն, որակի ապահովում և կառավարում, հանրակրթություն և միջին մասնագիտական կրթություն:

Հոգաբարձուների խորհրդին ներկայացվում է նաև ֆինանսական հաշվետվությունը, ինչպես

նան նախահաշիվը: Յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում կատարվում է արտաքին աուդիտ՝ ըստ ՀՀ գործող կարգի: Աուդիտի եզրակացությունը ներկայացվում է հոգաբարձուների խորհրդին: Հոգաբարձուների խորհրդի կողմից հաշվետվությունները ընդունվելուց հետո տեղադրվում են կայքի համապատասխան բաժնում և հասանելի են հանրությանը: Համալսարանի հոգաբարձուների խորհրդում ընդգրկված են պետական լիազոր մարմնի, կառավարության, մարզային կրթական կառույցների ներկայացուցիչներ, դասախոսներ և ուսանողներ. այս ամենը ապահովում է և՛ ներքին, և՛ արտաքին հաշվետվողականություն:

Պրոռեկտորները, դեկանները, ամբիոնների վարիչները, ստորաբաժանումների դեկավարները տարեկան մեկ անգամ կազմում են նաև իրենց կողմից դեկավարած աշխատանքների վերլուծական հաշվետվությունները, որոնք համապատասխանաբար ներկայացվում են ամբիոնների նիստերում, ֆակուլտետների խորհուրդների նիստերում, համալսարանի գիտական խորհրդի նիստում՝ ներքին շահակիցների առջև ապահովելով հաշվետվողականությունն ու թափանցիկությունը: Գիտխորհրդի օրակարգերը տեղադրվում են կայքում, և տեղեկատվությունը հասանելի է բոլորին: Կարգերը, ընթացակարգերը և կանոնակարգերը գիտխորհրդում հաստատվելուց հետո տեղադրվում են կայքի իրավական փաստաթղթեր մասում: Կայքում առկա է նաև իրավական փաստաթղթերի արխիվ, որտեղ առկա են բոլոր հին կարգերը:

Համալսարանը ապահովում է հասարակայնության հետ կապը և տեղեկատվությունը տարածում է հետևյալ աղբյուրների միջոցով՝ բուհի կայքի (<https://vsu.am/>) և սոցիալական ցանցերի (Facebook, Instagram), համալսարանում գործող մոնիտորների, տելեգրամ ալիքի, տելեգրամ բոտի միջոցով:

2023 թվականին համալսարանում բացվել է Մեդիա լաբը, որը հնարավորություն է տալիս նկարահանել տարբեր տեղեկատվական նյութեր, և յուրաքանչյուր ամսվա վերջում պատրաստվում է ամսվա ամփոփումը: Ամսվա ամփոփումը ներկայացվում է համալսարանի տարբեր մասնաշենքերում առկա հեռուստացույցների և սոցիալական ցանցերի միջոցով. այն հնարավորություն է տալիս ներքին և արտաքին շահակիցներին տեղեկանալու համալսարանում տվյալ ամսվա ընթացքում կատարված բոլոր իրադարձությունների մասին:

Համալսարանի կայքը և սոցիալական ցանցերը գործառնվում են Գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժնի կողմից:

Այս ամենը հավաստում է, որ Համալսարանը իր գործունեությունը կազմակերպում է հաշվետվողականության, թափանցիկության նորմերի հիման վրա, որը նպաստում է կառավարման որակի բարելավմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Բ. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակայնությանը:

Հիմքեր	<p>ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմները Հաշվետվությունները, զեկույցները, վերլուծությունները վերջին 5 տարվա ընթացքում</p> <p>Ֆինանսական հաշվետվություններ Համալսարանի հաշվետվություններ</p>
--------	--

Վերլուծել հասարակայնությանը հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համալսարանի պաշտոնական կայքէջը և սոցիալական ցանցերը ամենօրյա ռեժիմով ներկայացնում են համալսարանում ընթացող բոլոր իրադարձությունները: Փոփոխվել է համալսարանի կայքը՝ բարելավվելով տեղեկատվության և հաշվետվողականության եռալեզու տարածման հնարավորությունները:

Կայքում առկա են հետևյալ ենթաբաժինները՝ ընդհանուր տեղեկատվություն համալսարանի մասին, դիմորդ, կրթություն, գիտություն, միջազգային ծրագրեր, նորություններ, հայտարարություններ, դիմորդ, ուսանողներ, դասախոսներ, շրջանավարտներ, գրադարան:

ՏՎՊՀ! Ենթաբաժնում ներկայացված է համալսարանի մասին ամբողջական տեղեկատվությունը:

<https://vsu.am/%d5%be%d5%ba%d5%b0/>

ՏԴԻմորդ! Բաժնում ներկայացված է դիմորդներին անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը:

<https://vsu.am/dimord-yndunelutyun-2/>

ՏԿրթություն! Բաժնում տեղադրված են բակալավրի և մագիստրատուրայի հիմնական կրթական ծրագրերը, դասընթացների ուսումնամեթոդական փաթեթները, ուսանողներին անհրաժեշտ այլ տեղեկատվություն:

<https://vsu.am/bakalavri-himnakan-krtakan-cragrer/>

ՏԳիտություն! Բաժնում տեղադրված են համալսարանի ամբիոնների գիտահետազոտական ուղղվածությունները, գործող գիտական խմբերի վերաբերյալ տեղեկատվությունը: Գիտական տեղեկագիր ենթաբաժնում տեղադրված են Համալսարանի գիտական տեղեկագրի բոլոր համարները, ինչպես ամբողջական պարբերականները, այնպես էլ ըստ առանձին հեղինակների, որը ավելի հասանելի կդարձնի տպագրված հոդվածները: Գիտություն բաժնում նաև տեղադրված են համալսարանում կազմակերպվող միջազգային գիտաժողովների, ուսանողական գիտական ընկերության գիտաժողովների հոդվածների ժողովածուները: Գիտություն բաժնում տեղադրված է նաև Մագիստրոս ժողովածուն, որտեղ հասանելի են համալսարանի ուսանողների տպագրված հոդվածները:

<https://vsu.am/gitahetazotakan-uxxutyunner/>

<https://vsu.am/gitakan-xmber/>

<https://vsu.am/gitakan-texekagir/>

<https://vsu.am/magistros-copy/>

<https://vsu.am/gitajoxovner/>

<<Միջազգային ծրագրեր>> բաժնում կարելի է տեսնել համալսարանում գործող և ավարտված բոլոր միջազգային նախագծերը, որտեղ համալսարանը հանդիսանում է համակարգող համալսարանական կոնսորցիումի անդամ: Յուրաքանչյուր նախագիծ ունի իր ենթաբաժինը, որտեղ կարելի է տեսնել ծրագրի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը և

հաշվետվողանությունը: Համագործակցություն ենթաբաժնում ներկայացված են բոլոր այն համալսարանները և կազմակերպությունները, որոնց հետ համալսարանը ունի համագործակցության պայմանագրեր և հուշագրեր:

Յուրաքանչյուր ֆակուլտետի և ամբիոնի էջում կարելի է տեսնել սպասարկող բոլոր մասնագիտությունները, դասախոսների ինքնակենսագրությունները, որտեղ ներկայացված են նրանց դասավանդվող առարկաները, գիտահետազոտական ուսումնասիրությունների ոլորտները, որը հնարավորություն կտա համագործակցության եզրեր գտնել:

Կայքում մշտապես կարելի է հետևել համալսարանի բոլոր նորություններին և հայտարարություններին: Համալսարանի կայքը եռալեզու է:

<https://vsu.am/mijazgayin-cragrer/>

ՉՍՓՈՐՈՇԻՉ Գ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակայնության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Հիմքեր	<p>Հասարակայնության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման քաղաքականությունը և քննադատականությունը</p> <p>Հասարակայնության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի գործիքները</p> <p>Ամփոփված արդյունքները և վերլուծությունները</p>
--------	--

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող հասարակայնության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմների արդյունավետությունը: *Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Հաշվի առնելով 2019թ. փորձագիտական զեկույցում արձանագրված խնդիրները, որ հետադարձ կապի արդյունավետությունը և հուսալիությունը բարելավման կարիք ունեն, համալսարանը կատարել է աշխատանքներ բարելավման ուղղությամբ:

Համալսարանի ռազմավարական ուղղություններից է հասարակայնության հետ կապերի զարգացումը, հանրային ծառայություններում ներգրավվածությունը: Համալսարանը կարևորում է հասարակայնության հետ հետադարձ կապի ապահովումը, որը նպաստում է շահակիցների կարիքների ներկայացմանը:

Հետադարձ կապն ապահովվում է համալսարանի պաշտոնական կայքի Jivo մեսենջեր հարթակի էլեկտրոնային փոստերի (info@vsu.am, rector@vsu.am), սոցիալական ցանցերի (Ֆեյսբուք, ինստագրամ), տելեգրամ ալիքի և բջջային հեռախոսակապի միջոցով:

<https://www.facebook.com/vanadzor.vph>

https://www.instagram.com/vanadzor_state_university/

Համալսարանի ֆեյսբուքյան էջն ունի 8500-ից ավելի ակտիվ հետևորդներ, իսկ ինստագրամը՝ 1614: Այս ամենը հնարավորություն է ստեղծում տարածել համալսարանի վերաբերյալ տեղեկատվությունը և հարցերին արագ արձագանքել:

Լուսաբանման միջոցներից են նաև համալսարանում փակցված հարթակները, որոնց վրա փակցվում են ֆակուլտետների կողմից կազմված դասացուցակները, հայտարարությունները:

Համալսարանը մշտապես կապ է ապահովում գործատուների հետ: Ամեն տարի համալսարանում կազմակերպվում է աշխատանքի տոնավաճառ, որը սերտացնում է կապը

Վանաձորի և մարզի գործատուների հետ:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում համալսարանը պարբերաբար կազմակերպում է «բաց դռների օր» միջոցառումը, որտեղ շահառուները՝ դիմորդները, նրանց ծնողները, ուսուցիչները հանդիպում են ռեկտորի, դեկանների, վարժարանի և քոլեջի տնօրենների, պատասխանատու քարտուղարի հետ և ստանում են ամբողջական տեղեկատվություն իրենց հետաքրքրող հարցերի վերաբերյալ:

<https://vsu.am/bac-drneri-or-08-02-2024-2/>

2021-ից համալսարանում դպրոցականների մասնագիտական կողմնորոշման և դիմորդների հավաքագրման նպատակով կազմակերպվում է «Մասնագիտությունների տոնավաճառ» միջոցառումը:

<https://vsu.am/masnagitutyunneri-tonavachar-vph-um-01-10-2021/>

<https://vsu.am/masn-tonavachar/>

<https://vsu.am/24-11-2023/>

Միջոցառման ընթացքում առանձին տաղավարներով ներկայացվում են համալսարանի բոլոր մասնագիտությունները: Միջոցառումը դպրոցականներին օգնում է ճիշտ կողմնորոշվել և կատարել մասնագիտության ընտրությունը, ծանոթանալ համալսարանում իրականացվող կրթական ծրագրերին, մասնագիտությունների հնարավորություններին և հեռանկարներին: Կազմակերպված միջոցառումներին յուրաքանչյուր տարի մասնակցել են Լոռու մարզի (հիմնականում Վանաձոր քաղաքի և Գուգարքի տարածաշրջանի) դպրոցների 250-ից ավելի աշակերտներ, ուսուցիչներ և ծնողներ: Միջոցառման արդյունավետության գնահատման համար հարցումներ են արվել դպրոցներին, որոնք բարձր գնահատական են տվել և անհրաժեշտ համարել միջոցառման կազմակերպումը՝ որպես մասնագիտությունների մասին տեղեկատվության տրամադրման միջոց, և առաջարկում են միջոցառումը պարբերաբար անցկացնել:

Արդյունավետությունը գնահատելու համար յուրաքանչյուր տարի կատարվում է արդյունքների և տվյալների վերլուծություն: Կատարվում է սոցիալական կայքերի հաճախելիության, հետևորդների քանակի վերլուծություն: Կիրառված մեխանիզմների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ապահովվում է հետադարձ կապը արտաքին շահակիցների հետ: Այն հնարավորություն է ստեղծում շահակիցներից ստացված արձագանքների, առաջարկությունների և դիտարկումների հիման վրա միջոցառումների ընթացակարգերում լրացումներ և փոփոխություններ կատարել:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Պ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակայնությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Հիմքեր	<p>Հաստատության կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման քաղաքականությունն ու ընթացակարգերը</p> <p>Հասարակայնությանը մատուցվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների ներքին և արտաքին գնահատման գործիքները</p>
--------	--

	<p>Հասարակայնությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման հիմնական գործառույթների ներքին գնահատման գործընթացները և հիմքերը</p>
<p><i>Վերլուծել</i> հաստատության կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման <i>արդյունավետությունը և արդիականությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>Յուրաքանչյուր ուսումնական տարում՝ սկսած հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներից մինչև մայիսը ներառյալ, կազմակերպվում են համալսարանի ընդունելության քննությունների առարկայական անվճար դասընթացներ: Դասընթացների մեկնարկը տրվում է համալսարանի կայքի, ֆեյսբուքյան էջի և դպրոցներին տրամադրված տեղեկատվական նամակի միջոցով: Հիմնականում խմբեր ձևավորվում են «Հայոց լեզու», «Անգլերեն», «Մաթեմատիկա» և «Հայոց պատմություն» առարկաներից: Դասընթացներն ի սկզբանե կազմակերպվել էին առկա ուսուցման համակարգի դիմորդների համար, իսկ վերջին երկու տարում՝ նաև հեռակա ուսուցման համակարգի դիմորդների համար: 2022 թ., ընդունելության կարգում արված փոփոխությամբ պայմանավորված, դիմորդներին ընդունելությանը նախապատրաստելու նպատակով, երկրորդ կիսամյակում կազմակերպվել են լրացուցիչ դասընթացներ:</p> <p>https://vsu.am/naxapatrastakan-daser/</p> <p>Դասընթացներին մասնակցել են Վանաձոր քաղաքի և Գուգարքի տարածաշրջանի դպրոցների դիմորդները:</p> <p>Դասընթացների մասնակիցների և բուհ ընդունված դիմորդների թվաքանակի ամենամյա վերլուծությունը ցույց է տալիս, որ արդյունավետությունը միջինով ձգտում է մինչև 50 %: Դասընթացների արդյունքում ամրագրվել են նաև բարձր միավորներ, որոնցով դիմորդներն անվճար հիմունքներով ընդունվել են համալսարան: Կատարված աշխատանքները պարբերաբար լուսաբանվել են համալսարանի կայքում և ֆեյսբուքյան էջում:</p> <p>Աշխատաշուկայի պահանջարկի հիման վրա Համալսարանը իրականացնում է թիրախային տարբեր խմբերի վերապատրաստման, որակավորման և վերաորակավորման դասընթացների կազմակերպում:</p> <p>ԿԳՄՍ նախարարության հաստատմանն են ներկայացվել վերապատրաստման տարբեր դասընթացների մոդուլներ, որոնք հաստատվել և իրականացվել են 2021-2024 թթ. ընթացքում:</p> <p>https://vsu.am/irakanacvac-verapatrastummer/</p> <p>https://vsu.am/vph-um-yntanum-en-verapatrastman-dasyntacner/</p> <p>https://vsu.am/avartvel-e-vorakavorman-bardzacman-dasyntac/</p> <p>https://vsu.am/avartvel-e-hamakargchayin-hmtutyunner-dasyntac/</p> <p>https://vsu.am/verapatrastman-dasyntacner-vph-um/</p> <p>2021 թ.-ից ՄՈՒՀ-ը ՀՀ ԿԳՄՍ նախարարության երաշխավորմամբ կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալ ցանկացողների, ատեստավորման ենթակա ուսուցիչների, ուսուցչի օգնականների, ՆՈՒՀ մանկավարժական</p>	

աշխատողների համար:

2022-ին գիտխորհրդի կողմից «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի [ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման և խթանման համար մշակված կանոնակարգի](#) հաստատումից հետո, ներկայացվել է հայտ «Հաշվապահական հաշվառման» դասընթաց կազմակերպելու նպատակով: Դասընթացը ունեցավ հաջող ավարտ, և որոշում ընդունվեց այն շարունակել: Այժմ արդեն հավաքագրվում է «Հաշվապահական հաշվառման» դասընթաց ունկնդիրների չորրորդ խումբը:

<https://vsu.am/hashvapahakan-hashvarum/>

Ներկայացնել քաղաքացի դաստիարակելու գործում հաստատության ունեցած դերն ու կատարած ներդրումները: Նշել հիմնական ձեռքբերումներն ու խոչընդոտները:

Համալսարանի Մշակույթի կենտրոնը հավատարիմ է մնացել իր հիմնական նպատակներին՝ աջակցում է համալսարանում գործող մշակույթի կառույցների աշխատանքներին, իրականացնում է միջոցառումների համակարգում, ուսանողության գեղագիտական ճաշակի և մշակութային միջոցառումների որակի բարձրացում, ՎՊՀ ուսանողների ստեղծագործական ունակությունների զարգացման խթանում, տաղանդավոր և շնորհալի ուսանողների հայտնաբերում, համերգների և ներկայացումների կազմակերպում և այլն: Համալսարանում գործող Մշակույթի կենտրոնում ընդգրկված են մոտ 70 շնորհալի ուսանողներ համալսարանի տարբեր ֆակուլտետներից: Համալսարանում անց են կացվում մշակութային թեմաներով դասախոսություն-քննարկումներ, ներկայացումների, գեղարվեստական երկերի դիտումներ և քննարկումներ, որոնք նպատակաուղղված են ուսանողների գեղագիտական ճաշակի բարելավմանը: Մշակույթի կենտրոնում գործում են հետևյալ խմբերը. ՎՊՀ «Բիայնա» երգչախումբ, «Ադելաս» պարի խումբ և Գրական խմբակը:

<https://vsu.am/mshakuyti-kentron/>

2022 թ. սկսած ամեն տարի անց է կացվում Ուսանողական զարուն միջոցառումը: Եթե առաջին տարում մասնակցել են միայն Լոռու մարզի ուսումնական հաստատությունների ուսանողներ, ապա արդեն 2024 թ. մասնակիցների աշխարհագրությունը ընդլայնվել է, և ունեցել ենք մասնակցություն Հայաստանի տարբեր մարզերի և Երևան քաղաքի տարբեր ուսումնական հաստատություններից:

<https://vsu.am/meknarkec-usanoghakan-garun-2024/>

<https://vsu.am/pakum-2/>

Մշակույթի կենտրոնի սաների ուժերով ամեն տարի կազմակերպվելու են ավանդական բնույթ կրող միջոցառումներ՝ «Սիրո տոնին» նվիրված, «Բարեկենդան» և «Մասլենիցա», վերջիններս տեղի են ունենում Համալսարանի բակում, որոնք ուղեկցվում են ուրախ երգերով և հյուրասիրությամբ:

<https://vsu.am/barekendan-12-02-2024/>

2023 թ. Ուսանողության միջազգային օրը յուրահատուկ է նշվել. Քիմիայի և կենսաբանության ամբիոնի հետ համատեղ կազմակերպվել է ճանաչողական էքսկուրսիա բուսաբանական այգի, իսկ մշակույթի կենտրոնի շնորհալիների կատարմամբ հնչել են գեղեցիկ երաժշտական

համարներ:

2022 թ.-ից սկսած ամեն տարի հուլիսին համալսարանը հանդիսավոր արարողությամբ ամփոփում է ուսումնական տարին: Այն նպատակ ունի ամփոփելու համալսարանական տարին և երախտագիտություն հայտնելու բուհի աշխատակիցներին, ովքեր ջանք չեն խնայում ամբողջ տարվա ընթացքում՝ համալսարանի պատիվը բարձր պահելու համար:

Յուրաքանչյուր տարվա հուլիսին անց է կացվում մագիստրոսների դիպլոմների հանձման հանդիսավոր արարողությունը: 2023 թ. դիպլոմների հանձման արարողությունը տեղի է ունեցել Սանահինի վանական համալիրի Մագիստրոսի Ճեմարանում:

<https://vsu.am/2022-2023-sanahin/>

Մշակույթի կենտրոնը Ուսանողական խորհրդի հետ համատեղ տարվա վերջին կազմակերպում է «Ամանորյա դիմակահանդես», որտեղ ներառվում են ամանորյա գեղեցիկ մշակութային համարներ և մրցույթներ:

Համալսարանն ունի ռազմահայրենասիրական կենտրոն, որի շրջանակներում անց են կացվել արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն և բուժապասարկում, հրաձգություն և ձեռնամարտ դասընթացները: Դասընթացներին մասնակցել են ՎՊՀ-ի, ՎՊՀ քոլեջի ուսանողները և ՎՊՀ վարժարանի աշակերտները: Դասընթացները անց են կացվում մարտ-ապրիլ ամիսներին:

<https://vsu.am/qolej-2/>

<https://vsu.am/varjaran/>

2021 թվականից որակի ապահովման կենտրոնը IFES կազմակերպության միջնորդությամբ ուսանողների համար կազմակերպում է «Ներգրավված քաղաքացի» լրացական դասընթացը: 2023 թ.-ի դեկտեմբերին համալսարանում «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության հետ համատեղ մեկնարկեց «Քաղաքացիական կրթության կենտրոն» նախագիծը. կողմերի միջև կնքվել է համատեղ գործունեության պայմանագիր: Նախաձեռնության նպատակն է ստեղծել նպաստավոր միջավայր երիտասարդների քաղաքացիական գիտելիքների, սոցիալական և տեխնիկական կարողությունների զարգացման, ինչպես նաև հանրային որոշումներում նրանց ներգրավման համար:

Վերլուծել Չափանիշ 8-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Համալսարանի գործառույթների թափանցիկ և պարբերական իրազեկման ապահովման մեխանիզմների առկայություն (եռալեզու կայքի առկայություն, տելեգրամ ալիքի և տելեգրամ բոտի առկայություն): 2. Ներքին և արտաքին շահառուների հետ	1. Ներքին և արտաքին շահակիցների համալսարանի պաշտոնական կայքի և սոցիալական ցանցերի հաճախումների համեմատաբար դանդաղ ավելացում: 2. Պաշտոնական YouTube ալիքի աշխատանքի պասսիվություն:

<p>ինտերակտիվ հետադարձ կապի առկայություն:</p> <p>3. Համալսարանի սեփական ռեսուրսներով տարատեսակ տեղեկատվական և այլ մեդիա նյութերի ստեղծում և լուսաբանում (Ժամանակակից սարքավորումներով զինված Մեդիալաբի առկայություն):</p> <p>4. Համալսարանի փաստաթղթաշրջանառության կանոնակարգված և թափանցիկ կազմակերպում (Մալբերի համակարգի առկայություն):</p> <p>5. Դիմորդների համար լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների ընդլայնում:</p> <p>6. Աշխատաշուկայի պահանջարկի հիման վրա թիրախային տարբեր խմբերի վերապատրաստման և որակավորման դասընթացների կազմակերպում:</p>	
<p align="center">Արտաքին հնարավորություններ</p>	<p align="center">Վտանգներ</p>
<p>1. Հանրապետական և մարզային մեդիա հարթակներում համալսարանի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ընդլայնում:</p> <p>2. Շրջանավարտների ներգրավվում արտաքին և ներքին շահակիցների շրջանում Համալսարանի ճանաչելիության բարձրացման համար:</p> <p>3. Գործատուների և շրջանավարտերի համար լրացուցիչ կրթական և խորհրդատվական պարբերական ծառայությունների կազմակերպում:</p>	<p>1. Ոչ պաշտոնական աղբյուրներից համալսարանի վերաբերյալ տեղեկատվության տարածում:</p> <p>2. Կրթական և խորհրդատվական ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջև մրցակցության աճ:</p>
<p><i>Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:</i></p> <ul style="list-style-type: none"> - Ժամանակակից մեխանիզմների կիրառմամբ համալսարանի պաշտոնական կայքի և սոցիալական ցանցերի հաճախումների ակտիվացում - Համալսարանի գործունեության վերաբերյալ տարբեր բովանդակային հաղորդումների միջոցով պաշտոնական Youtube ալիքի աշխատանքների ակտիվացում - Կրթական և խորհրդատվական ծառայությունների մատուցման արդյունավետությունը և մրցակցությունը բարձրացնող մեխանիզմների մշակում 	

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ Ը

ԶԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Միջազգայնացումը Համալսարանի ռազմավարական առաջնահերթություններից է՝ ուղղված առաջատար բուհերի և միջազգային կառույցների հետ արդյունավետ համագործակցության միջոցով ժամանակակից պահանջների համաձայն բարձրորակ մասնագետների պատրաստման և հետազոտության զարգացմանը, բուհի ուսանողական, վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի միջազգային շարժունության նոր հնարավորությունների ստեղծմանը, ինչպես նաև բուհի մրցունակության բարձրացմանը ազգային և միջազգային մակարդակներում: Այս ամենը ամրագրված է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2021-2025 թթ. ռազմավարական ծրագրում և «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2024-2025 թթ. միջազգայնացման ռազմավարության մեջ:

ԶԱՓՈՐՈՇԻՉ ա.	Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:
Հիմքեր	<p>Արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարությունը</p> <p>Արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները</p> <p>Արտաքին կապերի և միջազգայնացման տարեկան գործողությունների ծրագրերը (վերջին 3 տարվա համար)</p> <p>Արտաքին կապերի և միջազգայնացման տարեկան հաշվետվությունները (վերջին 3 տարվա համար)</p>
	Վերլուծել փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
	<p>Միջազգայնացման ընդլայնումը և միջազգային մրցունակության բարձրացումը համալսարանի առաջնահերթ ուղղություններից են:</p> <p>Միջազգայնացման քաղաքականության շրջանակներում Համալսարանի որդեգրած հիմնական ուղղությունները հետևյալներն են.</p>

1. Կրթության միջազգայնացում
2. Գիտության միջազգայնացում
3. Միջազգային համագործակցության զարգացում
4. Միջազգային վարկանիշի ամրապնդում

Այս ամենը ամրագրված է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2021-2025 թթ. ռազմավարական ծրագրում և «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2024-2025 թթ. միջազգայնացման ռազմավարության մեջ, «Ուսանողների, վարչական և պրոֆեսորադասախոսական աշխատակազմի շարժունության կանոնակարգի» և «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի QS վարկանիշային համակարգում ընդգրկվելու աշխատանքային պլանի» մեջ (տե՛ս հիմքեր և Հավելված 6.դ.1)

ՎՊՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացը համակարգում է Գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժինը ([Հավելված 9.ա.1.](#)), որը Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում է և անմիջականորեն ենթարկվում է Համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտորին: Արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքները համակարգում է միջազգային կապերի և դրամաշնորհների խթանման մասնագետը:

Միջազգային համագործակցության բնագավառում բաժինը կատարում է հետևյալ գործառույթները՝

- աջակցություն համագործակցության ծրագրերի իրականացմանը Համալսարանի և ՀՀ այլ բուհերի, ինչպես նաև արտասահմանյան երկրների բուհերի միջև,
- աջակցություն Համալսարանի մասնակցությանը Հայաստանի Հանրապետությունում գործող արտասահմանյան կազմակերպությունների կողմից հայտարարվող դրամաշնորհային ծրագրերի,
- աջակցություն Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատակիցների, բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների, ինչպես նաև ասպիրանտների ներգրավվածությանը հարավկովկասյան տարածաշրջանային նշանակություն ունեցող գիտահետազոտական, բնապահպանական, ձեռնարկատիրական նախագծերին և դրամաշնորհային ծրագրերին,
- ներգնա և արտագնա ուսանողների և աշխատակիցների շարժունության գործընթացի համակարգում,
- աջակցություն օտարալեզու դասընթացների/կրթական ծրագր(եր)ի իրականացման գործընթացին,
- Համալսարանում կրկնակի/համատեղ կրթական ծրագրերի ներդրման գործընթացի խթանում,
- աջակցություն տարածաշրջանային և միջազգային համալսարանների ցանցերին անդամագրման գործընթացին,
- Համալսարանի ձեռնարկատիրական գործունեության խթանում՝ հաշվի առնելով օտարերկրյա բուհերի դրական փորձը:

ՉՍՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Արտաքին կապերի և միջազգայնացման համար պատասխանատու ենթակառուցվածքը և դրա գործառնությունը
Ենթակառուցվածքի գործունեությունը կարգավորող ընթացակարգերը Ենթակառուցվածքի որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը
Ենթակառուցվածքի արդյունավետ գործունեության այլ հիմքեր և վերլուծություններ վերջին 3 տարիների կտրվածքով

Վերլուծել ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքի աշխատանքների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ՎՊՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացը համակարգում է Գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժինը, որը Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում է, որը ձևավորվել է 2020 թ-ին և անմիջականորեն ենթարկվում է Համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտորին: Արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքները համակարգում է միջազգային կապերի և դրամաշնորհների խթանման մասնագետը:

2019-2024 թթ.-ի ժամանակահատվածում համալսարանը արտասահմանյան ու հայաստանյան բուհերի հետ ունեցած համագործակցության շնորհիվ ակտիվ մասնակցություն է ցուցաբերել Էրազմուս+ կարողությունների զարգացման դրամաշնորհային նախագծերի դիմում-հայտերի լրացման գործընթացում: Գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժնի ստեղծումից հետո առավել մեծ ուշադրություն է դարձվում բուհի գիտահետազոտական, ինչպես նաև ձեռնարկատիրական ուղղությունների խթանմանը: Այդ նպատակով ուսումնասիրվել են Հորիզոն 2020 ծրագրի, GIZ, Green Lane, Visegrad, COST, FAST, ANSEF ծրագրերի պահանջներն ու առաջարկները, մրցույթները: Միջբուհական համագործակցության բնագավառում 2020-2021թթ. մեծ ձեռքբերումներ չեն եղել, ինչը մեծապես պայմանավորված է եղել համավարակի և երկրում ստեղծված պատերազմական վիճակով:

2020 թ. ավարտվել են PRINTEL (Փոփոխություն լսարանում. նորարարական դասավանդման և ուսումնառության օժանդակում՝ Արևելյան գործընկերության երկրներում ուսանողի ուսումնական փորձառության բարելավման նպատակով) և BOOST (Հայաստանյան համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարքեթինգի խթանում) ծրագրերը, որոնց կոնսորցիումի անդամ է հանդիսացել համալսարանը:

2019 թ.-ին մեկնարկած ARMDOCT (Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձի համապատասխան) շարունակվել է և իր ավարտին հասել 2024 թ. հունվարին: Նախագծի շրջանակում կազմվել են մի քանի մասնագիտությունների պիլոտային ուսումնական պլաններ՝ հաշվի առնելով գործընկեր համալսարանների փորձը: Ուսումնասիրվել է նաև այլ բուհերի փորձը, որոնց հիման բարելավվել է ուսումնական պլանը, և ստեղծվել է համադեկավարման համաձայնագիր:

2021 թ. համալսարանում մեկնարկել են հետևյալ նախագծերը.

1. Մոլդովայում, Վրաստանում և Հայաստանում համալսարան-արդյունաբերություն կապի խթանում սմարթ ձեռնարկատիրական համագործակցության և ուսանողների մրցակցային մտավոր կարողությունների միջոցով ([CONNECT](#))

Համակարգող համալսարան՝ Մոլդովայի պետական համալսարան

2. Նորարարական մեթոդաբանության, մոտեցումների և անգլերենի միջոցով դասավանդման գործիքների խթանում՝ բարելավելու կրթական եկամտաբերությունը, կայունությունը և միջազգայնացումը /[SMARTI](#)

Համակարգող համալսարան՝ Դրեզդենի տեխնիկական համալսարան

3. Ժան Մոնե «Եվրոպագիտության խթանումը Հայաստանում» ([PROMOEU](#))

Համակարգող համալսարան՝ Մարիբորի համալսարանի էթնիկ, տարածաշրջանային և հասարակական գիտությունների եվրոպական կենտրոն, Մլովենիա

Վերոնջյալ նախագծերը բավականին մեծ նշանակություն են ունեցել համալսարանի ռազմավարական ուղղությունների համար, որոնք են

- համալսարան-ձեռնարկատիրություն կապի խթանում,
- օտարալեզու դասընթացների ներդրում
- ԵՄ-ՀՀ կապի ամրապնդում:

2023 թ. մեկնարկել է

- Մոլդովայի և Հայաստանի բուհերում առցանց կրթության որակի խթանում/ [MEDIA](#)
- *Համակարգող համալսարան՝ Մոլդովայի պետական համալսարան*

Համալսարանի ամենամեծ նվաճումներից է այն, որ 2023 թ. Էրազմուս+ կարողությունների զարգացման դրամաշնորհային նախագծերի մրցույթին Վանաձորի պետական համալսարանն առաջին անգամ հաղթել է որպես համակարգող համալսարան՝ իր ներկայացված DeSIRe նախագծով ([DeSIRe/ Development of Soft Skills at Higher Education Institutions of Armenia and Georgia in Compliance with the 21st Century Labour Market Requirements/ Հայաստանի և Վրաստանի բուհերում փափուկ հմտությունների զարգացում 21-րդ դարի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան](#)): Ծրագրի առաջին աշխատաժողովը տեղի է ունեցել 2024 թ. փետրվարին:

2024 թ. մեկ հայտ ներկայացվել է Էրազմուս+ կարողությունների զարգացման դրամաշնորհային նախագծերի մրցույթին և մեկ հայտ՝ Horizon Europe Excellence Hubs նախագծերի մրցույթին: Դեռ պատասխանները հայտնի չեն:

Համալսարանը համագործակցում է DAAD-ի (Գերմանական ակադեմիական փոխանակման գործակալության) հետ: Այդ համագործակցության արդյունքում ՎՊՀ-ի մեկ ուսանող անցել է գերմաներենի ամառային դասընթաց Բեռլինում:

Ակտիվ է նաև համագործակցությունը Էրազմուս+ ազգային գրասենյակի հետ, ինչի արդյունքում իրականացվում են բազմաբնույթ միջոցառումներ (տեղեկատվական օրեր, մեթոդական սեմինարներ, բուհերի միջազգայնացման աշխատաժողովներ և այլն):

Համալսարանում հիմնադրվել է Էրազմուս+ կոնֆերանս դահլիճ, որը հազեցած է նոր սարքավորումներով և ծառայում է բուհում բազում առկա և առցանց միջոցառումների կազմակերպման համար:

2022 թ. CONNECT նախագծի շրջանակներում համալսարանի համաֆինանսավորմամբ բացվել է

Ձեռներեցության և նորարարությունների զարգացման կենտրոն (SMART CAFFE): Նորաբաց և ժամանակակից պահանջներին համապատասխանող Ձեռներեցության և նորարարությունների զարգացման կենտրոնը (SMART CAFFE) (տե՛ս Հավելված 6.գ.1.) հնարավորություն է տալիս բուհի ուսանողներին և դասախոսներին մասնակցելու վերապատրաստումների, ինտերակտիվ մեթոդներով կազմակերպվող դասընթացների՝ նաև թվային տիրույթում, ունենալ տարատեսակ քննարկումներ, ստեղծել և զարգացնել գաղափարներ, այդ թվում՝ բիզնես ուղղվածության: Այս ամենը նպաստում է վերջիններիս մասնագիտական աճին, նոր հմտությունների ձեռքբերմանը, ինչպես նաև աշխատաշուկայում լավագույնս ներկայանալուն:

2023 թ.-ին ԷԲԱԶՄՈՒՍ+, ՀԳ2, ԿԶԲԿ, PRINTeL, ARMDOCT և CONNECT նախագծերի շրջանակներում և համալսարանի համաֆինանսավորմամբ հիմնադրվել է Մեդիալաբ, որը նպաստում է համալսարանում նոր որակի տեղեկատվական նյութերի ստեղծմանն ու մատուցմանը, հեռավար կրթության զարգացմանը. այն հարթակ է երիտասարդ հետազոտողների, ասպիրանտուրայում սովորողների ու պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար՝ որակյալ տեսադասեր, դասախոսություններ ու կրթական տեսանյութեր ստեղծելու համար: Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության շրջանակներում համալսարանը ունի 11 համալսարանի հետ շարժունության պայմանագիր ([Հավելված 9.բ.1.](#)), որոնց հետ իրականացնում է ուսանողների և աշխատակիցների շարժունություն համաձայն համալսարանում գործող «Ուսանողների, վարչական և պրոֆեսորադասախոսական աշխատակազմի շարժունության կանոնակարգի»: Այդ ժամանակատվածում համալսարանը շարժունությամբ ընդունել է 9 դասախոսի, որոնք նաև դասընթացներ են անցկացրել համալսարանի ուսանողների և դասախոսների համար: Համալսարանի 10 աշխատակից մասնակցել են շարժունության, դասավանդել կամ վերապատրաստվել ([Հավելված 9.բ.2.](#)):

Միջազգային վարկանիշը համարելով համալսարանի գրավչության բարձրագույն գործոն՝ համալսարանը ձգտում է ներգրավվելու վարկանիշային աղյուսակում միջազգային կրթական շուկայում համալսարանի հեղինակությունը բարձրացնելու համար: Այդ նպատակով 2022-ից համալսարանը տանում է աշխատանքներ QS վարկանիշային համակարգում ընդգրկվելու համար: Այդ աշխատանքները իրականացվում են «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարանի QS վարկանիշային համակարգում ընդգրկվելու աշխատանքային պլանի» համապատասխան (տե՛ս Հավելված 9.ա.1.):

ՉՍՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Հիմքեր [Արտաքին կապերի և միջազգայնացմանը վերաբերող բոլոր համաձայնագրերը](#)
 Արտաքին կապերը և միջազգայնացումը արտացոլող այլ հիմքերը

Ներկայացնել վերջին 3 տարիներին արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում հաստատության հիմնական նվաճումները, համաձայնագրերի չգործելու պատճառները: Վերլուծել ՄՈՒՀ-ի համագործակցության արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համալսարանը համատեղ միջազգային ծրագրերի և նախագծերի իրականացումը դիտարկում է որպես իր համար ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներում միջազգային

գործընկերների հետ համագործակցության զարգացման և ընդլայնման գործիք: Համալսարանը մասնակցում է միջազգային հայտարարված դրամաշնորհային ծրագրերին և ընդլայնում է միջազգային համագործակցության շրջանակները: Համալսարանը համագործակցում է.

- միջազգային դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում «Էրազմուս+» նախագծի շրջանակներում,
- անմիջական համագործակցությունն օտարերկրյա համալսարանների հետ,
- համագործակցությունն տեղական կառույցների հետ:

«Էրազմուս+» նախագծի շրջանակներում միջազգային դրամաշնորհային ծրագրերի շրջանակում համալսարանը 2019-2024 թթ. ընդգրկված է եղել 8 նախագծերում, որոնցից երկուսը ավարտվել են 2020-ին, երեքը՝ 2024 թ. հունվարին: Երեք նախագիծ այժմ ընթացքի մեջ են, որոնցից մեկում համալսարանը հանդիսանում է համակարգող (DeSIRE նախագիծ): Այս նախագծերում ընդգրկված որոշ համալսարանների հետ կնքվել են անմիջական համագործակցության պայմանագրեր:

Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության շրջանակներում համալսարանը ունի 11 համալսարանի հետ շարժունության պայմանագիր, որոնց հետ իրականացնում է ուսանողների և աշխատակիցների շարժունություն՝ համաձայն համալսարանում գործող «Ուսանողների, վարչական և պրոֆեսորադասախոսական աշխատակազմի շարժունության կանոնակարգի»: 2019-2024 թթ. համավարակով և վիզայի ձեռքբերման խոչընդոտների հետ կապված շարժունությանը մասնակցած ուսանողների և աշխատակիցների քանակը քիչ է եղել: Ընդհանուր առմամբ 2019-2024 թթ. շարժունությանը մասնակցել են 18 ուսանող և 10 աշխատակից: Այդ ժամանակատվածում համալսարանը ընդունել է շարժունությամբ 9 դասախոս, որոնք նաև դասընթացներ են անցկացրել համալսարանի ուսանողների և դասախոսների համար (տես Հավելված 9.բ.2.): Սակայն խնդիր է հանդիսանում այն փաստը, որ ոչ բոլոր մասնագիտությունների ուսանողներն են մասնակցում շարժունությանը, խնդիրը կապված է օտար լեզվի իմացության հետ: Հիմնականում շարժունությանը մասնակցում են անգլերեն լեզու մասնագիտության ուսանողները: Ուսանողների շրջանում օտար լեզվի իմացությունը բարձրացնելու նպատակով վերանայվել են ուսումնական պլանները և ավելացվել է օտար լեզվին հատկացվող ժամաքանակը: 2023 թ.-ին Սերվիս մասնագիտության ուսանողների համար կազմակերպվել են անգլերեն լեզվի լրացուցիչ դասընթացներ: Հետագայում նախատեսվում է նաև այլ մասնագիտությունների ուսանողների համար նմանատիպ դասընթացների կազմակերպումը, որը կբերի նրանց մասնակցությանը շարժունության ծրագրերին:

Համալսարանը անմիջական համագործակցում է նաև օտարերկրյա համալսարանների հետ: 2019-2024 թթ. համալսարանը ունի կնքված 18 պայմանագիր: Նշված համալսարանների աշխատակիցները մասնակցություն են ունենում ՎՊՀ-ում կազմակերպվող միջազգային գիտաժողովներին: Գործընկեր և արտասահմանյան այլ բուհերի աշխատակիցներ ընդգրկված են գիտաժողովների կազմկոմիտեում և խմբագրակազմում: Աշխատանքներ են տարվում համատեղ հետազոտական ծրագրեր իրականացնելու հետ կապված:

Համալսարանի և «Ինստիգեյթ մոբայլ»-ի համատեղ նախաձեռնությամբ համալսարանում բացվեց

«Գերազանցության կենտրոն». սա չորս տարվա համագործակցության արդյունքում ծնված ձեռքբերում է, ՎՊՀ ռազմավարության կարևորագույն կետերից մեկի իրագործումը, այն է՝ ապահովել կապը գործատուների հետ: Գերազանցության կենտրոնը կրթական տեխնոլոգիական հարթակ է, որը կապահովի համալսարան-աշխատաշուկա կապը և ուսանողներին հնարավորություն կտա ձեռք բերել SS ոլորտի պահանջներին համապատասխան գիտելիք և հմտություններ «Ծրագրային ճարտարագիտություն» մասնագիտությամբ: Վանաձորի պետական համալսարանի և «Ինստիգեյթ մոբայլ»-ի միջև կնքվել է հուշագիր, որի շրջանակներում նախատեսվում է համատեղ դրամաշնորհային ծրագրերի իրականացում:

Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների (FAST) հիմնադրամի հետ կնքվել է համաձայնագիր «SciNova» ծրագրի շրջանակներում, որի արդյունքում վերապատրաստվել են ՎՊՀ-ի երեք աշխատակիցներ: Այն միտված է գիտահետազոտական մեթոդաբանության զարգացմանը մագիստրանտների, ասպիրանտների և հայցորդների շրջանում: Այժմ գիտական հետազոտության մեթոդաբանությունն առարկան ներդրված է մագիստրատուրայի ուսումնական պլաններում: 2024 թ. ապրիլ ամսին նաև իրականացվել է այդ դասընթացի վերապատրաստում դասախոսների շրջանում:

Համագործակցության հուշագիր է կնքվել նաև «Փոլիսինթեզ» գիտահետազոտական կենտրոն հասարակական կազմակերպության հետ, որի շրջանակներում նոյեմբերին Վանաձորում անցկացվեց «Հետազոտական հմտությունների զարգացում երիտասարդ հետազոտողների և ակադեմիական առաջնորդների համար» երկօրյա դասընթացը: Դասընթացը իրականացավ «Փոլիսինթեզ» գիտահետազոտական կենտրոնի և Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի նախաձեռնությամբ՝ Կովկասում Եվրոպական ուսումնասիրությունների ասոցիացիայի (AESC) և Վանաձորի Հ. Թումանյանի պետական համալսարանի հետ համագործակցությամբ: Դասընթացին մասնակցում էին Վանաձորի պետական համալսարանի ասպիրանտներ, հայցորդներ և մագիստրոսներ:

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության հետ համատեղ մեկնարկեց «Քաղաքացիական կրթության կենտրոն» նախագիծը. կողմերի միջև կնքվեց համատեղ գործունեության պայմանագիր: «Քաղաքացիական կրթության կենտրոն» նախագիծը ստեղծվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից ֆինանսավորվող «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» հնգամյա ծրագրի նյութական և մեթոդական օժանդակությամբ: Նախաձեռնության նպատակն է ստեղծել նպաստավոր միջավայր երիտասարդների քաղաքացիական գիտելիքների, սոցիալական և տեխնիկական կարողությունների զարգացման, ինչպես նաև հանրային որոշումներում նրանց ներգրավման համար:

ԶՍՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Հիմքեր	Ուսումնառողների և դասավանդողների օտար լեզուների մասնագիտական մակարդակի իմացությանը նպաստող մեխանիզմները Աշխատակազմի համար նախատեսված օտար լեզվի դասընթացների ցանկը և ժամանակացույցը Օտար լեզուներով տեղեկատվական նյութերը Միջազգայնացումը խթանող այլ մեխանիզմներ
--------	---

Օտար լեզուներին տիրապետող դասավանդողների, վարչական աշխատողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար:

	Աշխատակիցներ	2021		2022		2023	
		Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
Օտար լեզուներին տիրապետող ուսանողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար:							
	Ուսանողներ	2021		2022		2023	
		Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
Օտարերկրյա ուսումնառողներին առաջարկվող օտար լեզուներով դասավանդվող դասընթացներ/ՄԿԾ-ներ և օտարերկրյա ուսանողների թիվը ըստ տարիների							
	Դասընթացի կամ ՄԿԾ-ի անվանումը	2019	2020	2021	2022	2023	
Օտար լեզուներով դասավանդվող դասընթացներում/ՄԿԾ-ներում ներգրավված ուսանողների թիվը ըստ երկրների							
	Երկրներ	2019	2020	2021	2022	2023	

Ներկայացնել և վերլուծել վերոնշյալ գործընթացներում հաստատության վերջին 3 տարվա նվաճումները: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսանողների շրջանում օտար լեզվի իմացությունը բարձրացնելու նպատակով վերանայվել են ուսումնական պլանները և ավելացվել է օտար լեզվին հատկացվող ժամաքանակը: 2023 թ.-ին հումանիտար ֆակուլտետի ուսանողները ներգրավվել են կամավորական աշխատանքներում և անցկացրել են օտար լեզուների (անգլերեն և ռուսերեն) դասընթացներ իրավագիտություն, կառավարում, ռուսաց լեզու և գրականություն, անգլերեն լեզու և գրականություն մասնագիտությունների 1-4-րդ կուրսերի ուսանողների համար:

Համալսարանը, հանդիսանալով [Էրազմուս+ SMARTI](#) նախագծի անդամ, ծրագրի շրջանակներում իրականացրել է վերապատրաստում՝ նվիրված ESP («Անգլերենը՝ հատուկ նպատակների համար») և EMI («Անգլերենը՝ որպես ուսուցման միջոց») ծրագրերի մեթոդաբանությանը, ինչպես նաև ակադեմիական գրագիտության առանձնահատկություններին: 2022 թ. համալսարանում հանդիսավորությամբ բացվեց EMI (Անգլերենը՝ որպես դասավանդման միջոց) կենտրոնը, որը բարենպաստ միջավայր է՝ զարգացնելու, ուսուցանելու, փորձարկելու և համեմատական վերլուծության ենթարկելու EMI մոդուլները, զարգացնելու դասավանդողների անգլերենի հմտությունները և խթանելու ուսանողակենտրոն ուսուցումը բուհում: 2023 թ. համալսարանի Smart Caffe-ում տեղի է ունեցել Էրազմուս+ «Աջակցություն անգլերենով դասավանդելու նորարարական մեթոդաբանությանը, մոտեցումներին և գործիքակազմի կիրառմանը՝ կրթության արդյունավետությունը, կայունությունը և միջազգայնացումը բարելավելու նպատակով» (SMARTI) նախագծի շրջանակներում անցկացվող հանդիպում-միջոցառումը, որի ժամանակ համալսարանի դասախոսները վարեցին դասեր, որոնք նախապես մշակվել էին հետևյալ պիլոտային երկու մոդուլների շրջանակներում:

Մոդուլ 1. «Ուսանողակենտրոն և խառնուսուցման /S2S/ էլեկտրոնային ուսուցման հիման վրա իրականացվող հաղորդակցական դասավանդման մոտեցում»:

Մոդուլ 7. ԱԴԼ ուսանողների գնահատման ռազմավարություններ (ֆորմալ և այլընտրանքային գնահատում):

Այդ դասընթացներին մասնակցել են 30-40 ունկնդիրներ: Յուրաքանչյուր մոդուլից մեկական դասեր գնահատվել են ԵՄ փորձագետների կողմից:

Այս ծրագրի շրջանակում նաև կատարվում է Մերվիս մասնագիտության ուսանողների անգլերեն լեզվի դասընթացներ:

Համաձայն «Ուսանողների, վարչական և պրոֆեսորադասախոսական աշխատակազմի շարժունության կանոնակարգի»՝ յուրաքանչյուր հայտի դիմորդների լեզվի իմացությունը ստուգելու համար ռեկտորի հրամանով և օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչի ներկայացմամբ ստեղծվում է օտար լեզվի հանձնաժողով և կազմակերպվում է օտար լեզվի քննություն: Քննության դրական շեմը հաղթահարելու դեպքում դիմորդները ստանում են օտար լեզվի իմացության վկայական:

Ըստ պաշտոնի անձնագրի դասավանդողները և վարչական աշխատողները պետք է կարողանան շփվել գործընկերների հետ որևէ օտար լեզվով (առնվազն պարզ խոսակցական մակարդակով):

2022 թ.-ից համալսարանը սկսել է նախապատրաստական աշխատանքներ օտար լեզվով ասավանդելու լիցենզիա ձեռք բերելու ուղղությամբ: Այդ իսկ նպատակով ընտրվել է <<Ծրագրային ճարտարագիտություն>> մասնագիտությունը և դասավանդող դասախոսների համար կազմակերպվել անգլերեն լեզվի դասընթացներ:

Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է արտաքին կապերի ու միջազգայնացման քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն):

Համալսարանը ուսումնասիրել է տարբեր համալսարանների արտաքին կապերի և միջազգայնացման ընթացակարգերը, և համեմատական վերլուծություն է կատարվել հետևյալ համալսարանների հետ՝

1. Մալազայի համալսարան, Իսպանիա,
2. Գրանադայի համալսարան, Իսպանիա
3. Մարիբորի համալսարան, Սլովենիա
4. Տայլինի տեխնոլոգիական համալսարան, Էստոնիա
5. Բոննի համալսարան, Գերմանիա
6. Ռիզայի տեխնոլոգիական համալսարան, Լատվիա

Վերոնշյալ համալսարաններում կարևորվում են ներգնա և արտագնա ուսանողների և աշխատակիցների շարժունությունը, մեծ ուշադրություն է դարձվում հետազոտության միջազգայնացմանը, այլ համալսարանների հետ համագործակցությանը, համատեղ դրամաշնորհների իրականացմանը, գործատուների հետ կապի ամրապնդմանը, կրթության և հետազոտության որակի բարելավմանը, ազգային և միջազգային ցանցերին անդամակցությանը և այլն:

Նշված համալսարանների հետ համագործակցությունը կխթանի համալսարանի միջազգայնացումը:

Վերլուծել Չափանիշ IX-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>1. Միջազգային դրամաշնորհային ծրագրերում հայտեր ձևակերպող և ձևավորող նախաձեռնողական խմբերի առկայություն:</p>	<p>1. Միջազգային տարբեր ծրագրերին մասնակցելու համար օտար լեզվի անհրաժեշտ մակարդակ ունեցող դասախոսների ցածր տոկոս:</p>
<p>2. Ուսանողների և աշխատակիցների շարժունության կազմակերպման</p>	<p>2. Շարժունության ծրագրերի շրջանակում համալսարանում ուսումնառություն ստացող</p>

<p>թափանցիկ և հստակ մեխանիզմներ:</p> <p>3. Միջազգային գիտաժողովների կազմակերպման փորձ:</p> <p>4. ՉՏ վարկանիշային համակարգում համալսարանը ընդգրկվելու նպատակային աշխատանքներ:</p>	<p>միջազգային ուսանողների բացակայություն:</p> <p>3. Այլ համալսարանների հետ համատեղ ծրագրերի բացակայություն:</p> <p>4. Ոչ բոլոր մասնագիտությունների գծով շարժունության իրականացում:</p>
Արտաքին հնարավորություններ	Վտանգներ
<p>1. Բարձրագույն կրթության և գիտության նոր օրենքը:</p> <p>2. Արտասահմանյան բուհերի հետ համագործակցության շրջանակների ընդլայնում:</p> <p>3. Հայաստանում միջազգային կազմակերպությունների կողմից առաջակվող բազմաթիվ ծրագրեր:</p>	<p>1. Օրենսդիր դաշտում գործող կրթական ծրագրերում օտար լեզվով դասավանդման հնարավորության բացակայություն:</p> <p>2. Աշխարհաքաղաքական տարածաշրջանային խնդիրներ:</p>

Վերոնշյալ թույլ կողմերի հաղթահարման ուղիներն են՝

- Արտասահմանյան համալսարանների հետ համագործակցության ընդլայնում
- Գործընկեր համալսարանների համատեղ գիտահետազոտական աշխատանքների կատարում
- Բոլոր մասնագիտությունների գծով շարժունության խթանում
- ՊԴԱ օտար լեզվի իմացության բարձրացում

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Որակի ապահովման ներքին համակարգի կատարելագործումը որպես նպատակ սահմանված է Համալսարանի 2021-25 թթ.-ի ռազմավարական ծրագրում: Նպատակի իրականացման համար կարևորվել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ որակի ապահովման քաղաքականության կատարելագործումը, որակի ապահովման մեխանիզմների և գործիքակազմի բարելավումը, շահակիցների մասնակցության մեխանիզմների կատարելագործումը, հանրային համագործակցության զարգացման որակի ապահովման մեխանիզմների բարելավումը:

Համալսարանում որակի ապահովմանն ուղղված աշխատանքները համակարգվում են որակի ապահովման կենտրոնի կողմից, որը գործում է հաստատված կանոնակարգի համաձայն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հիմքեր	<p>Որակի ապահովման ներքին համակարգի ձեռնարկը Որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը Այլ փաստաթղթեր - Որակի ապահովման ուսանողի ձեռնարկ Որակի ապահովման հայեցակարգ Որակի կառավարման համակարգի կանոնակարգ</p>
--------	---

Ներկայացնել և վերլուծել ՄՈՒՀ-ի որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ՄՈՒՀ-ի որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականության համատեքստում հաշվի են առնված բարձրագույն կրթական հաստատությունների ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության չափանիշներն ու չափորոշիչները: Համալսարանի որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականության միջոցով պայմաններ են ապահովվում որակի մշակույթի զարգացման համար՝ անընդհատ բարելավելով արտաքին և ներքին շահագրգիռ կողմերի մասնակցայնության և ներգրավվածության ձևերը որակի ապահովման գործընթացներում: Որակի ապահովման քաղաքականությունը արտացոլում է Համալսարանի առաքելությունն ու որդեգրած արժեքները, արտահայտված է [ՄՈՒՀ-ի 2021-25 թթ.-ի ռազմավարական ծրագրում](#) և [2021-25 թթ.-ի ռազմավարական ծրագրի](#) և [բարելավման գործողությունների իրականացման](#) պլաններում: Այն տարածվում է Համալսարանի գործունեության բոլոր ոլորտների վրա, ուղղված է արտաքին և ներքին շահագրգիռ խմբերին, հիմք է հանդիսանում Համալսարանի աշխատակիցների աշխատանքային գործունեության և ղեկավարների որոշումների կայացման համար: Որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականության իրականացման տեսանկյունից պատասխանատու է Համալսարանի ողջ անձնակազմը, և Համալսարանի ղեկավարությունը համապատասխան միջավայր է ստեղծում որակի ներքին ապահովման իրականացման համար՝ հիմնվելով արտաքին և ներքին շահակիցների հետադարձ կապից ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքների վրա:

ՄՈՒՀ-ի որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականությունը կենտրոնացված է Համալսարանի կողմից հայտարարված առաքելությանը միտված ռազմավարական նպատակների իրականացման որակի ուսումնասիրման վրա: Հատուկ ձևավորված հանձնաժողովի կողմից ռազմավարական նպատակների կատարողականների վերաբերյալ հաշվետվությունները, դրանց գնահատումները, ստացված արդյունքների վերաբերյալ եզրակացությունների քննարկումները պարբերական բնույթ են կրում և միտված են ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակների իրականացման ապահովմանը: ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման վերաբերյալ վերլուծությունը Համալսարանի որակի

ապահովման կենտրոնի ղեկավարը ներկայացնում է ՄՈՒՀ-ի գիտական խորհրդի նիստին՝ ապահովելով հաշվետվողականություն և ներգրավելով ներքին շահակիցների մասնակցայնությունը ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրի իրականացման գործում: Որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականությունը նպաստում է նաև ֆակուլտետների, ամբիոնների և մյուս ստորաբաժանումների գործունեության որակի ապահովմանը՝ համաձայն համապատասխան կանոնակարգերի, կանոնադրությունների և ընթացակարգերի: ՄՈՒՀ-ի որակի քաղաքականության արդյունավետությունը գնահատվում է համապատասխան գործընթացների համար պատասխանատու մարմինների, ստորաբաժանումների կատարողականների, ինքնավերլուծությունների, հաշվետվությունների քննարկումներով, ինչպես նաև՝ արտաքին և ներքին աուդիտների հաշվետվությունների, մասնագիտական կրթական ծրագրերի ինքնագնահատումների կամ ինքնավերլուծությունների, մշտադիտարկումների, փորձագիտական եզրակացությունների, առաջավոր փորձի ուսումնասիրությունների ու համեմատությունների և հետադարձ կապից եկող տեղեկատվության հիման վրա: Արդյունքում ձևավորվում են վերանայման, բարելավման առաջարկություններ, որոնք հիմք են հանդիսանում համարժեք փոփոխությունների պայմանների ձևավորման և ապահովման համար:

ՄՈՒՀ-ում ծավալվող գործընթացների որակի գնահատումը կատարվում է հիմնականում ՄՈՒՀ-ի որակի ապահովման կենտրոնի կողմից մշակված համապատասխան գործիքակազմերով, որոնք պարբերաբար վերանայվում և ըստ անհրաժեշտության փոփոխության են ենթարկվում: Հիմնականում փոփոխության հիմք է հանդիսանում շահակիցների հետ ֆոկլուս խմբային քննարկումներից ստացվող տեղեկատվությունը, ինչի հիման վրա բավարարվածության հարցաթերթում ձևակերպվում են նոր հարցեր: Նույն տրամաբանությամբ բավարարվածության վերաբերյալ հարցումներից ստացվող տեղեկատվության ճշգրտման նպատակով ֆոկլուս խմբային հարցաքննումներում ձևակերպվում են նոր հարցադրումներ: Նման մոտեցումը հնարավորություն է ընձեռում ուշադրության կենտրոնում պահել նոր ձևավորվող միտումները:

ՉՍՓՈՐՈՇԻՉ ք. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Ներքին

[Որակի ապահովման գործընթացներում մարդկային ռեսուրսների ներգրավվածությունը կարգավորող փաստաթղթերը](#)

[Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող ֆինանսական ռեսուրսների բաշխումը կարգավորող փաստաթղթերը](#)

[Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող նյութական ռեսուրսների բաշխումը կարգավորող փաստաթղթերը](#)

[Որակի ապահովման ենթակառուցվածքը՝ ներառյալ մարդկային ռեսուրսները և նրանց աշխատանքային նկարագրերը](#)

Վերլուծել որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման համար տրամադրվող ժամանակային, մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Որակի ներքին ապահովման գործընթացների ժամանակային բաշխումը ամրագրված է ՄՈՒՀ-ի 2021-25 թթ.-ի ռազմավարական ծրագրի գործողությունների պլանում: Այն իր հերթին արտացոլվում է Համալսարանի ստորաբաժանումների տարեկան աշխատանքային պլաններում: Ժամանակային առումով ՄՈՒՀ-ի աշխատանքներում որոշակի հապաղումներ են եղել թագավարակով պայմանավորված: Այդ ընթացքում Համալսարանը ձեռնարկել է հնարավոր բոլոր քայլերը կրթական գործընթացի բնականոն աշխատանքն ապահովելու համար: Որոշ աշխատանքներ երկարաձգվել են, սակայն ՄՈՒՀ-ը փորձում է վերականգնել ըստ ռազմավարության պահանջվող տեմպը:

Համալսարանն իր առաքելության և նպատակների իրականացման համար ապահովված է մարդկային անհրաժեշտ ռեսուրսներով: ՄՈՒՀ-ի բոլոր հաստիքները ամրագրված են ըստ պաշտոնների տեղակալման նկարագրերի՝ պաշտոնների անձնագրերի: ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսումնասովորական և վարչական անձնակազմի որակավորման բարձրացման, ինչպես նաև՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման նոր մոտեցում, ինչը ապահովելու է մարդկային ռեսուրսների պարբերական զարգացում և կարող է խթանել առաջխաղացում:

Համալսարանի որակի ապահովման կենտրոնի հաստիքացուցակը հաստատված է ՄՈՒՀ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից և ամրագրված է ստորաբաժանման կանոնակարգում: Համալսարանի որակի ապահովման կենտրոնի աշխատակիցները բավարարում են իրենց պաշտոնների տեղակալման պահանջներին և պատասխանատու կերպով իրականացնում են իրենց գործառույթները: Որակի ապահովման կենտրոնում առկա են ղեկավարի 1 դրույքաչափով հաստիք, կրթության որակի աուդիտի պատասխանատուի 0,5 դրույքաչափով հաստիք, մոնիտորինգի և վերլուծության մասնագետի 1 դրույքաչափով հաստիք, շուկայաբանության մասնագետի 0,5 դրույքաչափով հաստիք. վերջինս առայժմ զբաղեցված չէ: Որակի ապահովման կենտրոնի ղեկավարը ՄՈՒՀ-ի կառուցվածքի համաձայն անմիջապես ենթարկվում է Համալսարանի ռեկտորին: Որակի մասին հոգածությունը տարածվում է ՄՈՒՀ-ի բոլոր հաստիքների վրա: Որակի ներքին ապահովման գործընթացներին ուղղված աշխատանքներ են իրականացնում նաև որակի ապահովման ֆակուլտետային անդամները և ուսանող-համակարգողները:

Համալսարանի նյութատեխնիկական բազան համալրվում է գնումների գործընթացով կազմակերպվող մրցույթների արդյունքում ձեռքբերված պայմանագրերի հիման վրա: ՄՈՒՀ-ի ստորաբաժանումները, այդ թվում որակի ապահովման կենտրոնը, 4 ամիսը մեկ անգամ ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժնին են ներկայացնում աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների վերաբերյալ գնումների տեղեկագրեր: Ըստ այդմ, հնարավոր է դառնում ստորաբաժանումների նյութական ապահովվածության կարճաժամկետ պլանավորումը, որն, ի տարբերություն տարեկան պլանավորման, առավել քան միտված է ընթացիկ պահանջների իրատեսական բավարարմանը և արագ արձագանքին: Նման մոտեցումն առավել արդյունավետ է դարձնում ստորաբաժանումների աշխատանքի պլանավորումը ըստ նյութական ապահովվածության և իր հերթին միտված է ավելորդ ծախսերի կրճատմանը: Համալսարանի որակի ապահովման

կենտրոնը աշխատանքների կազմակերպման և իրականացման համար ապահովված է անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով և տարածքով:

Համալսարանի ֆինանսական ռեսուրսների գերակշիռ մասը գոյանում է ուսանողների վարձավճարներից և պետության հատկացումներից: ՄՈՒՀ-ը ֆինանսական ներհոսք է ապահովում նաև արտաքին շահակիցների համար իրականացվող վերապատրաստումներից, դրամաշնորհներից, միջազգային ծրագրերից, և որոշ չափով նաև ձեռնարկատիրական գործունեությունից: Ֆինանսական ռեսուրսների բաշխումը իրականացվում է Համալսարանի ֆինանսական քաղաքականության համաձայն: ՄՈՒՀ-ի ֆինանսական միջոցները բավարարում են որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման տեսանկյունից անհրաժեշտ հատկացումներ կատարելու համար: ՄՈՒՀ-ում ներդրվել է նաև պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ղեկավար անձնակազմի և ստորաբաժանումների աշխատակիցների խրախուսման նոր մոտեցում, որի համաձայն աշխատանքի կատարման որակը գնահատվում է ըստ առանձնացված չափանիշների: Խրախուսման կարգն ուղղված է մոտիվացնելու աշխատողների հոգածությունը որակի ապահովման տեսանկյունից և ըստ այդմ ապահովելու ֆինանսական միջոցների առավել արդար տրամադրում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

Հիմքեր [Որակի ապահովման գործընթացներում ուսումնառողների և այլ շահակիցների ներգրավվածությունը հաստատող հիմքերը](#)

Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Որակի ապահովման համատեքստում առավել ուշադրության է արժանացել ըստ գնահատվող իրավիճակի հնարավոր արտաքին և ներքին շահակիցների պարտադիր ներգրավումը և հետադարձ կապի ապահովումը: Արդյունքում կարիքների վերհանումը և վերլուծություններն առավել բազմակողմանի և իրատեսական են դարձել: 2021-25թթ. ՄՈՒՀ-ի բարելավման պլանի համաձայն մշակվել է որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների մասնակցության քաղաքականություն և ներգրավման մեխանիզմներ:

Ներքին շահակիցներից ուսանողության ներգրավվածությունն առաջին հերթին ապահովվում է կրթական գործընթացից տարեկան կտրվածքով բավարարվածության գնահատման և կարիքների վերհանման միջոցով: Ստացված տվյալները վերլուծվում և ներկայացվում են ՄՈՒՀ-ի գիտական խորհրդի նիստում, առաջարկությունները որոշումների կայացման հիմք են հանդիսանում և ուղարկվում պատասխանատուներին: Համալսարանի որակի ապահովման կենտրոնը քայլեր է ձեռնարկել որակի ապահովման գործընթացներում ուսանողների մասնակցությունը համագործակցության վերածելու ուղղությամբ: Այժմ Համալսարանում գործում է [ուսանող-համակարգողների խումբը](#), որն ուսանողների հետ անմիջական քննարկումների արդյունքում ապահովում է տեղեկատվության առավել անկաշկանդ ստացում,

ապահովում է հետադարձ կապի գործիքների համատեղ մշակումը: Որակի ապահովման կենտրոնից զատ Համալսարանի ուսանողությանը հուզող հարցերի և կարիքների վերհանման շուրջ աշխատանքներ են տանում ուսանողական խորհուրդը, դեկանատները, ամբիոնները: Ուսանողների հետ պարբերական հանդիպումներ է կազմակերպում Համալսարանի ռեկտորը: Նման բազմակողմանի մասնակցությունը թույլ է տալիս առավել իրատեսական արդյունքներ գրանցել, և խնդիրները վերհանել ըստ առաջնահերթությունների, ինչպես նաև որպես կողմնակի դրական արդյունք ապակենտրոնացնում է որակի ապահովման համար պատասխանատվությունը ՄՈՒՀ-ում: Կրթական գործընթացների կառավարման բաժնի կողմից պարբերաբար իրականացվում է «Դասախոսն ուսանողի աչքերով» հարցում, որի նապատակն է պարզել դասավանդման որակը, արդյունավետությունը և համապատասխան մեխանիզմներ մշակել ու ներդնել դասավանդման որակի բարձրացման ուղղությամբ: Որակի ապահովման կենտրոնը դասախոսների օգտագործման համար մշակել և ամբիոններին է հատկացրել ուսանողների կողմից դասընթացների և թեմաների արդյունավետության գնահատման [հարցաթերթեր](#), որոնք նպատակ են հետապնդում բազմակողմանի ինքնագնահատման ենթարկել դասընթացի մատուցումը հենց դասախոսի կողմից և ուժեղացնել անմիջական պատասխանատվությունը: Որակի ապահովման կենտրոնի կողմից ձեռնարկված այս քայլը միտված է դասախոսի կողմից դասավանդման որակի անմիջական գնահատման և խնդիրների վերհանման մշակույթի ձևավորմանը: Ուսանողները ներկայացված են ՄՈՒՀ-ի կառավարման մարմիններում և մասնակցում են որակի ապահովման քննարկումներում: Անմիջապես ներգրավվում են նաև կրթական ծրագրերի մշտադիտարկման, վերանայման, ինքնավերլուծությունների գործընթացներում:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմը տարեկան կտրվածքով ներգրավվում է Համալսարանի որակի ապահովման կենտրոնի կողմից բավարարվածության գնահատման և կարիքների վերհանման հարցումներում: Մտացված տվյալները վերլուծվում և ներկայացվում են ՄՈՒՀ-ի գիտական խորհրդի նիստում, առաջարկությունները որոշումների կայացման հիմք են հանդիսանում և ուղարկվում պատասխանատուներին: Պրոֆեսորադասախոսական անձնակազմից ներկայացուցիչներ են ներգրավված [որակի ապահովման ֆակուլտետային անդամների](#) ցանկում: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Համալսարանի 8 ամբիոններից 6-ի վարիչները առաջին անգամ են ստանձնել պաշտոնը, ՄՈՒՀ-ի որակի ապահովման կենտրոնը ամբիոնի վարիչներին պարբերաբար ներգրավում է որակի ապահովմանն ուղղված աշխատանքների, որակի ապահովման ֆակուլտետային անդամների հետ քննարկումներում: Նման մոտեցումը միտված է որակի մասին հոգածության տարածմանը և որակի ապահովման համար պատասխանատվության բարձրացմանը: Ամբիոնները դասախոսները ակտիվ ներգրավվում են նոր կրթական ծրագրերի մշակման, գործող կրթական ծրագրերի մշտադիտարկման, վերանայման և ինքնավերլուծության գործընթացներում, իրենց ներկայացուցիչներն ունեն կառավարման մարմիններում:

Ղեկավար, վարչական և ուսումնասօժանդակ անձնակազմը 2-3 տարվա կտրվածքով անմիջապես ներգրավվում է որակի ապահովման կենտրոնի կողմից կազմակերպվող կառավարման գործընթացների գնահատման և կարիքների վերհանման հարցումներում: Արդյունքները քննարկվում են ղեկավար անձնակազմի հետ և հետագա որոշումների կայացման

հիմք հանդիսանում: Ղեկավար, վարչական և ուսումնասօժանդակ անձնակազմի ամենօրյա աշխատանքը միտված է որակի ապահովմանը, ինչը ամրագրված է նաև պաշտոնների տեղակալման նկարագրերում:

Հաշվի առնելով 2019 թ. ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցի խորհրդատվությունները՝ որակի ապահովման կենտրոնը քայլեր է ձեռնարկել արտաքին շահակիցների մասնակցության աստիճանը որակի ապահովման գործընթացներում բարձրացնելու ուղղությամբ: Մասնավորապես՝ արտաքին շահակիցներից շրջանավարտները ամենամյա կտրվածքով անմիջապես ներգրավված են կրթական գործընթացից բավարարվածության գնահատման հարցումներում, ինչպես նաև՝ մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկումներում, վերանայման և ինքնավերլուծության գործընթացներում: Մասնագիտությամբ կամ հարակից ոլորտում աշխատող շրջանավարտները առավելապես մասնակցում են կրթական ծրագրերի վերջնարդյունքների գնահատման գործընթացներում:

Գործատուները, չնայած դանդաղ, բայց գնալով առավել շատ հարթություններով են մասնակցում Համալսարանի գործընթացներին: Այսօր գործատուն անմիջապես մուտք է գործել Համալսարանի ներքին միջավայր («Գերազանցության կենտրոն»), ակտիվ ներգրավված է պրակտիկաներում, ղեկավարում է ավարտական աշխատանքներ, դասընթացներ է վարում, մասնակցում է ամփոփիչ ատեստավորումներին, տոնավաճառներին, կրթական ծրագրերի մշակման, մշտադիտարկման, վերանայման և ինքնավերլուծության աշխատանքներին՝ անմիջապես ներկայացնելով աշխատաշուկայի պահանջարկը: Որակի ապահովման կենտրոնը 2-3 տարին մեկ առցանց հարցում է իրականացնում այն գործատուների շրջանում, որոնց կազմակերպություններում ըստ մասնագիտության կամ հարակից ոլորտում աշխատում են ՄՈՒՀ-ի շրջանավարտները: Գործատուների ներգրավումը որակի ապահովման համատեքստում չնայած դանդաղ, սակայն պահանջված գործընթաց է, և ՄՈՒՀ-ը ձեռնարկում է հնարավոր քայլեր վերջիններիս ներգրավվածությունը ավելացնելու ուղղությամբ:

Աշխատանքներ են տարվում որակի ապահովման գործընթացներում ներգրավելու նաև ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական գործունեությամբ հետաքրքրված հասարակական կազմակերպություններին: Ժամանակ առ ժամանակ որակի ապահովման կենտրոնի միջոցով հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները ուսանողների հետ կիսվում են իրենց փորձառություններով: Այժմ Համալսարանի որակի ապահովման կենտրոնը սերտ համագործակցում է դեռևս մեկ՝ «ՆորԱրար» հասարակական կազմակերպության հետ: Համագործակցությունը հիմնականում միտված է Համալսարանի որակի ներքին ապահովման քաղաքականության և մեխանիզմների վերանայմանը: Չնայած ձեռնարկված քայլերին՝ գործատուների և հասարակական կազմակերպությունների հետաքրքրվածությունը, ցավոք, բավարար չէ ՄՈՒՀ-ի որակի ապահովման գործընթացներում ակտիվ և ինքնակամ ներգրավման համար:

(տե՛ս [Հավելված 10.գ.1.](#) -ՈՍԿ-ի կողմից իրականացված ուսումնասիրություններ)

ՉԱՓՈՐՈՇԻՉ ղ. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Հիմքեր [Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման](#)

[քաղաքականությունը և ընթացակարգերը](#)

[Որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմները և գործիքները](#)

Համապատասխան այլ հիմքեր և վերլուծություններ

Վերլուծել որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համալսարանի որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է ՄՈՒՀ-ի որակի ապահովման ինքնազնահատման և վերանայման կանոնակարգի և ընթացակարգի համաձայն: Համալսարանի որակի ներքին ապահովման վերանայումը միտված է ՄՈՒՀ-ի որակի ապահովման համակարգի բարելավմանը, կատարելագործմանը և զարգացմանը: Որակի ներքին ապահովման ինքնազնահատման և վերանայման նպատակն է արդիականացնել որակի ապահովման գործառնությունները, ընթացակարգերը, կատարելագործել որակի ապահովման մեխանիզմները, վերհանել և նվազեցնել որակի ներքին ապահովման ռիսկերը:

Որակի ներքին ապահովման համակարգի շարունակական բարելավման նպատակով ըստ անհրաժեշտության արտաքին և ներքին շահակիցների ներգրավման միջոցով վերանայվում, վերամշակվում և վերահաստատվում են որակի ապահովման քաղաքականությունը, հայեցակարգը, բարելավման մեխանիզմները և գործիքակազմը: Համալսարանի որակի ապահովման համակարգի վերանայումն ու բարելավումն իրականացվում է նաև այլ համալսարանների որակի ապահովման քաղաքականությունների՝ որպես առաջավոր փորձի համեմատության հիման վրա, կրթական, հետազոտական ու կազմակերպական գործընթացների ուսումնասիրության տարբեր մեխանիզմներով ու գործիքակազմով, որոնք հիմնականում մշակվում են Համալսարանի որակի ապահովման կենտրոնի կողմից:

Որակի ներքին ապահովման համակարգում կայունության և վերահսկողության նպատակով 2021 թ. ձևավորված հատուկ հանձնաժողովի կողմից մշտադիտարկվում է Համալսարանի ռազմավարական ծրագրի կատարողականը: ՄՈՒՀ-ի որակի ապահովման կենտրոնը, հանձնաժողովի աշխատանքային նպատակներից ելնելով, մշակել է ամբիոնների ու ստորաբաժանումների տարեկան աշխատանքային պլանների և ռազմավարության գործողությունների պլանի կատարողականը չափող հաշվետվությունների ձևաթղթեր: Դրանք համաձայնեցվել են հանձնաժողովի հետ և ներդրվել: Տարեկան աշխատանքային պլաններում հանձնաժողովն ուշադրություն է դարձնում ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի հետ համապատասխանությանը: Տարին երկու անգամ ստորաբաժանումները հանձնաժողովին են ներկայացնում կատարողականի վերաբերյալ հաշվետվություն: Ըստ հասցեականության հանձնաժողովի անդամներն ուսումնասիրում են հաշվետվությունները և հանձնաժողովի քննարկմանը ներկայացնում իրենց եզրակացությունները: Եզրակացությունների հիման վրա որակի ապահովման կենտրոնի ղեկավարը ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրի կատարողականի տարեկան վերլուծություն է իրականացնում և

արդյունքները ներկայացնում է գիտական խորհրդի նիստում: Ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների համաձայն Համալսարանի որակի ապահովման կենտրոնի կողմից կազմակերպվում և իրականացվում է Համալսարանի տարեկան ամփոփ ինքնավերլուծություն, որը հասանելի է ներքին ցանցում և ապահովում է հաշվետվողականություն ներքին շահակիցների առջև:

Պրոռեկտորները, դեկանները, ամբիոնների վարիչները, ստորաբաժանումների ղեկավարները, որակի ապահովման նկատառումներից ելնելով, տարեվերջին կազմում են նաև իրենց կողմից ղեկավարած ստորաբաժանումների վերլուծական հաշվետվությունները, որոնք համապատասխանաբար ներկայացվում են ամբիոնների նիստերում, ֆակուլտետների խորհուրդների նիստերում, ՄՈՒՀ-ի գիտական խորհրդի նիստում՝ ներքին շահակիցների առջև ապահովելով հաշվետվողականությունն ու թափանցիկությունը: Վերլուծական հաշվետվությունները տեղ են գտնում Համալսարանի տարեկան հաշվետվության մեջ, որը ռեկտորի կողմից ներկայացվում է հոգաբարձուների խորհրդի նիստում:

Համալսարանի գործունեության արդյունքները գնահատելու համար 2016 թ.-ից տարին մեկ անգամ Համալսարանն իրականացնում է գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) հավաքագրում և վերլուծություն:

Մասնագիտական կրթական ծրագրերը վերանայվում են շրջափուլի ավարտին, գործող կարգի համաձայն: Որակի ապահովման կենտրոնի կողմից մշակվել և ամբիոններին է տրամադրվել մասնագիտական կրթական ծրագրերի ինքնագնահատման մեթոդաբանություն: Կրթական ծրագրերի վերանայման գործընթացներում ներգրավվում են ներքին և արտաքին շահակիցներ: Ինքնագնահատման արդյունքները կամ ինքնավերլուծությունները հիմնականում ներկայացվում են Համալսարանի գիտական խորհրդի նիստում:

Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն):

1. Երևանի Պետական Համալսարան
2. Հայաստանի ազգային ազրարային համալսարան
3. Դուբլինի տեխնոլոգիական համալսարան (Իռլանդիա)

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Հիմքեր	Տարեկան ինքնավերլուծությունները և հաշվետվությունները՝ ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների:
--------	--

Հիմնավորել տրամադրված հիմքերի հավաստիությունը և մոտեցման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համալսարանի որակի ապահովման կենտրոնի կողմից 2021 թվականից իրականացվում է ՄՈՒՀ-ի տարեկան ինքնավերլուծություն՝ ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման

չափանիշների և չափորոշիչների: Վերլուծությունը ներկայացվում է որպես ամփոփ հաշվետվություն, տեղադրվում է ներքին ցանցում և ապահովվում հաշվետվողականություն ու թափանցիկություն ներքին շահակիցների առջև: Ինքնավերլուծությունը հնարավոր է դարձնում բացահայտել Համալսարանի գործունեության արդյունավետությանը նպաստող գործոնները և խանգարող ռիսկերը և հնարավորության սահմաններում վերահսկել դրանք:

ՄՈՒՀ-ի ուսումնասիրությունների արդյունքում վերհանված խնդիրների լուծման նպատակով որակի ապահովման կենտրոնը պարբերաբար քննարկումներ է իրականացնում ներքին շահակիցների հետ, ստացված տեղեկատվության հիման վրա ներկայացնում առաջարկություններ, որոնց իրականացումը հնարավորություն է տալիս կայունացնել որակի ապահովման համակարգը:

Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության սույն զեկույցը նախապատրաստվել է ՄՈՒՀ-ում ձևավորված աշխատանքային խմբի կողմից (Համալսարանի ռեկտորի թիվ 1191 Ա/Մ հրաման): Ինքնավերլուծության իրականացման ընթացքի և աշխատանքային խմբի անդամների հարցը քննարկվել է Համալսարանի 2021-25 թթ.-ի ռազմավարական ծրագրի և բարելավման գործողությունների պլանների մշտադիտարկման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր չափորոշիչի վերլուծության համար որոշվել են պատասխանատուները: Ինքնագնահատման զեկույցի նախապատրաստման աշխատանքները պարբերաբար քննարկվել են աշխատախմբի հանդիպումների ընթացքում: Գործընթացը համակարգվել է Համալսարանի ռեկտորի կողմից, կազմակերպչական աշխատանքներն իրականացրել է ՄՈՒՀ-ի որակի ապահովման կենտրոնը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Հիմքեր	<p>Շահակիցների տեղեկացվածությունն ապահովող մեխանիզմները և համապատասխան փաստաթղթերը Շահակիցների տեղեկացվածության աստիճանի գնահատման/վերլուծության արդյունքները մակարդակը</p>
--------	--

Վերլուծել ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը ապահովող մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համալսարանն իր կողմից իրականացվող կրթական գործընթացի թափանցիկություն և հրապարակայնություն է ապահովում համացանցային պաշտոնական կայքի և սոցիալական ցանցերի աշխատանքների կազմակերպման կարգի համաձայն: Համալսարանի <https://vsu.am> կայքը տեղեկատվության հրապարակման և թափանցիկության հիմնական միջոց է հանդիսանում: Այն ապահովում է արտաքին և ներքին շահակիցների իրազեկվածությունը Համալսարանի գործառնության վերաբերյալ: Համալսարանի կայքում տեղադրված են Համալսարանի հիմնական պաշտոնական փաստաթղթերը, առանձին մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը (ուսումնական պլաններ, դասընթացների տեղեկագրքեր, դասընթացների մասնագրեր, դասընթացների ուսումնամեթոդական փաթեթներ, դասընթացների համառոտ նկարագրիչներ): Համալսարանի

կայքում պարտադիր տեղադրվում է նաև Համալսարանի տարեկան հաշվետվությունը, ԳԱՑ-ը, ՈԱԿ-ի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները: Համալսարանը որպես տեղեկատվության տարածման աղբյուր օգտվում է նաև սոցիալական ցանցերից. հատկապես ուսանողության շրջանում անհրաժեշտ նյութերը տարածելու նպատակով դրանք առավել արդյունավետ են և արագ արձագանքի հնարավորություն են ընձեռում:

Տեղեկատվության հրապարակումների գնահատումն իրականացվում է ՄՈՒՀ-ի համապատասխան ստորաբաժանման կողմից կայքի այցելությունների հաշվարկի, հարցադրումների քանակի, սոցիալական ցանցերի հետևորդների թվի մշտադիտարկման արդյունքում: Դա հնարավորություն է ընձեռում արագ արձագանքել առաջացող նոր պահանջներին և բարելավել հրապարակայնության միջոցները: Ուսանողների և դասախոսների բավարարվածությունը չափող հարցաթերթերում որակի ապահովման կենտրոնը ներառել է նաև Համալսարանի կայքի ինֆորմատիվությանը վերաբերող հարցեր:

Համալսարանում գործում է ներքին ցանց, որը թափանցիկություն, հաշվետվողականություն է ապահովում ներքին շահակիցների առջև: Այն նաև դյուրացնում է ստորաբաժանումների միջև տեղեկատվության փոխանակման գործընթացը՝ արագացնելով հետադարձ կապի ապահովումը և հնարավոր է դարձնում ժամանակի խնայումը:

Փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգի միջոցով Համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը ՄՈՒՀ-ի ստորաբաժանումներին տեղեկացնում է փոփոխված կամ նոր կարգերի, հրամանների և այլն վերաբերյալ:

Ներքին շահակիցների առջև թափանցիկությունն ապահովվում է նաև էլեկտրոնային փոստերի նամակագրության միջոցով: Համալսարանի ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժինը ամեն ամիս ՄՈՒՀ-ի աշխատակիցներին է ուղարկում իրենց աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների հաշվարկային թերթիկները: Ամբիոնները պրոֆեսորադասախոսական անձնակազմին հասանելի են դարձնում Համալսարանում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը, հավաքագրում առաջարկներ մինչև ամբիոնի նիստերը:

Վերլուծել Չափանիշ 10-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ol style="list-style-type: none"> 1. Որակի ապահովման համար բավարար մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ: 2. Ուսանողների ներգրավված նոր մոտեցում որակի ապահովման գործընթացներում: 3. Որակի ապահովման մեխանիզմների շարունակական բարելավում: 4. Որակի ապահովման թափանցիկություն և 	<ol style="list-style-type: none"> 1. Արտաքին շահակիցների ոչ բավարար ներգրավվածություն որակի ապահովման գործընթացներում: 2. Որակի բարելավմանը միտված առաջարկների իրականացման հապաղում: 3. Հետադարձ կապի ապահովման առցանց վճարովի հարթակների

հաշվետվողականություն:	կայուն կիրառման բացակայություն:
Արտաքին հնարավորություններ	Վտանգներ
<ol style="list-style-type: none"> Քաղաքացիական հասարակության կայացմանը զուգահեռ որակի ապահովման գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավման նոր հնարավորություններ: Որակի ապահովման վերաբերյալ փորձի փոխանակման աճող հնարավորություններ: Որակի ապահովման փորձագիտական շրջանների հետ համագործակցության ընդլայնման հնարավորություններ: Որակի ապահովման վերաբերյալ վերապատրաստումների հնարավորություններ: 	<ol style="list-style-type: none"> Տարածաշրջանային ոչ կայուն իրավիճակ: Աշխատաշուկայում գործատուների կողմից ապագա մասնագետի առջև դրվող պահանջների անորոշություն: Երիտասարդության շրջանում բարձրագույն կրթության վերաբերյալ հետաքրքրվածության նվազում:
<p><i>Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:</i></p> <ul style="list-style-type: none"> Համալսարանի որակի ապահովման գործընթացներում արտաքին շահակիցների հետաքրքրվածության խթանում: Որակի բարելավմանը միտված առաջարկների տրոհում, դրանց կառուցում պարզից բարդ, առաջնայինից երկրորդային մոտեցման համաձայն: Հետադարձ կապի ապահովման առցանց վճարովի հարթակների կայուն կիրառման համար ֆինանսական միջոցների ապահովում: ՄՈՒՀ-ում ՊԻԳԲ շրջափուլով աշխատելու պրակտիկայի արմատավորում: 	

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ

Հավելվածի N	Անվանում
1.ա.1.	ՎՊՀ 2021-2025թթ. ռազմավարական ծրագրի գործողությունների պլան
1.ա.2.	ՎՊՀ Բարելավման պլան-2021-2025
2.ա.1.	ՎՊՀ կառուցվածք
3.ա.1.	Ներկայացվող 3 ՄԿԾ-ների ինքնավերլուծություններ

4.գ.1.	Գիտահետազոտական աշխատանքներում երիտասարդ հետազոտողների և ուսանողների ներգրավվածության վերաբերյալ գեկույցներ
6.ա.1.	ՀՀ գիտական ամսագրերում տպագրված հոդվածներ և միջոցառումներ
6.ա.2.	Միջազգային գիտական ամսագրերում տպագրված հոդվածներ և միջոցառումներ
6.ա.3.	Ամբիոնների գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության վերլուծություն
6.ա.4.	Գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի հաշվետվություն
6.բ.1.	Գիտական խմբերի կանոնակարգ
6.բ.2.	ՎՊՀ-ում կազմակերպված գիտաժողովներ
6.բ.3.	ՎՊՀ գիտական տեղեկագրի վարկանիշի բարձրացման հիմքեր
6.գ.1.	Smart Caffe-ի ընթացակարգ
6.դ.1.	ՕՏ աշխատանքային պլան
6.ե.1.	Ուսանողների հետ համատեղ աշխատանքներ
9.ա.1.	Գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժնի կանոնադրություն
9.բ.1.	Էրազմուսի շրջանակում շարժունության պայմանագրեր
9.բ.2.	Շարժունության մասնակցած դասախոսներ և ուսանողներ
10.գ.1.	ՈԱԿ ուսումնասիրություններ